

Михаил  
Успенский

891.99  
U-15



EPOS MUL 1 S

891.99

U-15  
eug

ՅՈՎՀԵԱՆՆԻՍ ՄԱԼԻԽԱՆԵԱՆ

2365

891-99 They persecuted  
S-15 They fit you

Sue-3923 29/viii-79

ПК з. 243 т. 3.000.000

# ԱՐԱԳԻ ՎՐԱ

ԴՐԱՄԱ ԶՈՐԸ ԱՐԱՐՈՎ



Թ Ա Յ Լ Ի Ս  
Արագածիպ Հետեամսօն, Ելիզ. 17  
1914

21 JUN 2013

© 2009 by The McGraw-Hill Companies

Настоящая пьеса, подъ заглавiemъ „На пѣскѣ“  
соч. Ов. Малхасяна, разрѣшено Намѣстникомъ  
Его Императорскаго Величества на Кавказѣ,  
для представлениія на сцѣнахъ края.

Ներկայ պիեսի ներկայացման իրաւունքը վերապահուած է հեղինակին:

16 NOV 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎՐԱՅԻ ԱՆԴԻՆՈՒԹՅՈՒՆ

*Endodontics* . [part]

ՄԵԺԱՐԴՈՅ Պ. ՏԻԳՐԱՆ

**ԱՓՐԻԿԵԱՆԻՆ**

Անկեղծ ՀԱՄԱԿՐԱՆՔՈՎ

ԵՂԻՒՅՈՒՄ է

ՀԵՂԻՆԱԿՐ

Կայությունը նշանակութեան մասին  
առ Օ. Մահամադ բարձրագույն առաջնորդութեան կողմէ



Տիգրան աղա.

Պաշտօնավարութեանս հանգամանքը չէ, որ  
ինձ թելագրում է սոյն աշխատութիւնս Զեղ  
նուիրել, այլ այն ակնածութիւնը, որ ես տածում  
եմ գեղի Զեր գիտակցական սէրը՝ հայրենի կըր-  
թական ու գեղարուեստական գործի վերաբեր-  
մամբ, որին Դուք վաղուց հետէ մեկենաս էք  
հանդիսացել:

Յով. Մալխաչիան

**ԳՈՐԾՈՂ ԸՆՉԵՐ**

1. ՀԱՅԻ ՅԱԿՈԲ ՍԱՐԵԱՆ, ծխախոտի գործա- րանատէր . . . . .	65 տ.
2. ՇԱՂԻՑԱՆ, Նրա կինը . . . . .	52 »
3. ԱՆՏՈՆ, . . . . .	30 »
4. ՍՏԵՓԱՆ, . . . . .	27 »
5. ԼԱԶԱՐ, . . . . .	25 »
6. ԱՐԵԱԿ, . . . . .	20 »
7. ՍՈՖԻԱ, Անտօնի կինը . . . . .	26 »
8. ԱՆԻԱ, Հ. Յակոբի եղբօր աղջիկը, որը . . . . .	21 »
9. ՀՐԱՆՏ, Սարեանների հաշուապահը . . . . .	28 »
10. ՏԻԳՐԱՆ, գործակատար եւ զանծապահ . . . . .	35 »
11. ԶԱՐՈՒՀԻ, այրի կին . . . . .	38 »
12. ՄԱՐԻ, տան աղախինը . . . . .	22 »
13. ԳՈՐԾԱՐԱՆԻ ՎԱՐՊԵՏ . . . . .	29 »
14. ԼԵՒՈՆԻԿ, Անտօնի մեծ որդին . . . . .	5 »
15. ՆՈՏՈՐ . . . . .	58 »
16. ԲԺԻՇԿ . . . . .	42 »
17. ՀԱՍՆՈՒԹԻ ԳՈՐԾԱԿԱՏԱՐ	

Գործողութիւնը կատարում է մի հարուստ գաւառ-  
կան քաղաքում:

## ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐ

Ճողիս սեղանատուն. հացի սեղան, ծածկուած մաքուր սփռոցով. վերեից լամպար. սեղանի շուրջը և պատերի հետ աթոռներ. սեղանի վրայ նախաճաշելու ուտելիքներ. Սեղանատան դիմացի պատին բուֆէտ. սեղանի ձախ\*) կողմը թախթ. թախթի վերև պատին ժամացոյց, որ ցոյց է տալիս ժամը  $10\frac{1}{4}$  անց. սեղանատանը մի քանի մեծ ծաղկամաններով ծաղիկները երկու գուռ դէպի աջ և երկու գուռ ետքի պատի մէջ: Զախ պատին երկու լուսամուտ. ետքի կողմից մէկ (ձախ) գուռը բացւում է դէպի նախասենեակ, որտեղ կայ շորեր քաշ անելու կախարան: Առաւօտ է:

S T U D L 1

Մանուկ են Շաղիսա, յետով Մարի

**ՇԱՂԻՏԱՆ**—(Հագած ունի հարուստ նեղլիժէ, նա

\*) Զախ պէտք է լնդունել բեմից՝ դէմքը դէպի հանդիսականները:

իր հարուստ մազերը ինսամքով հաւաքել է գլխին. ունի հարուստ կուրծք, յոյր մարմին և վեհ քայլուածք, նայում է հպարտ եւ խօսում է մեծավարի. երեսին հազիւ նկատում են կնճիռներ. ննջաբանից գալով) Մարի, Մարի, չի լսում ի՞նչ է, Մարի:

**ՄԱՐԻ—** (Հագնուած է կոկիկ. կապած է մաքուր գոգնոց. կարճ շրջազգեստի տակից երեւում հն նրա գեղեցիկ մուճակներով ոտքերը. դէմքը դալուկ է, բայց աշխոյժ. մազերը շինել է վերջին տարազով) **Այստեղ եմ տիկին:**

ՇԱՂԻՑԱ-ԶԵՐ լսում, ինչ է:

**ՄԱՐԻ-ԶԵՎԱՂՈՒՄԱԾ ԷՒ, ՄԻԿԻՆ:**

## ՇԱԼԻՏԱՆ - ԿԱԺԵՐ ՄԱՔԱԳԱՎԱՐ:

# ԱԱՐԻ—ԴԵՌԱՀՅԱ

ՇԱՂԻՏԱՆ. — Մինչև հիմա ինչ ես շինում:

**ՄԱՐԻ** — Ինքնաեռ էի պատրաստում:

ՇԱՂԻՑԱՆ - Ժամը տասն անց է, ինքնաեռը  
դեռ նոր ես պատրաստում:

ՄԱՐԻ—Ի՞նչպէս անեմ, տիկին, շատ անգամ վաղ եմ պատրաստում, բերում դնում եմ սեղանի վրայ՝ մօտեցող չի լինում, քըլթքըլթում է, քըլթքըլթում, հանգչում. Նորից գալիս եմ, ետ տանում, նորոգում:

ՇԱՂԻՏԱՆ.—Դա քո գործը չէ, թող հանդին.  
Դու ժամանակին պատրաստիր, ներս բեր:

ՄԱՐԻ—(ՎՐԴԻՎՈՒԱԾ) ԵԱ ԷԼ ԿՐԱԿՆ ԵՄ ԸՆ-  
ԿԵԼ, ՀԳԻՄԵՄ ԽՆՅԱՔԵՍ ԱՆԵՄ:

**ՇԱՀԻՑԻՑԱ - (Խիստ) Դէ, Էլ մի՞ երկարաց-  
նիր, գնա բանիդ:**  
**ՄԱՐԻ - (Փնջինթարով հռուանում է):**

S T U H L 2

**ԱՆՆԱ** — (Միջահասակ, ոչ այնքան նիհար. դէմքին բարի և ժպտուն արտայայտութիւն. երեսը ոչ այնքան դալուկ, ոչ այնքան վարդագոյն. յիկահեր, խաժուժիկ աչքերով. հագնուած է պարզ, —մաքուր գարնանային ծաղկաւոր թեթեւ շրջազգեստ, վերեւից սպիտակ զոլաւոր շապիկ. մազերը ոչ այնքան ինամքով հաւաքած գլխին: Ննջարանի կողմից գալով) Այդ հւամ վրայ էիր բարկանում, մայրիկ:

ՇԱՂԻՑԱՄ—Այն անպիտան աղախնի. օրն ե-  
կել ճաշ է դառել՝ դեռ նրա ինքնաեռը պատ-  
րաստ չէ. այս մի ժամ է, ասել եմ կաթը տա-  
քացրու, Արշակը դեղ պիտի ընդունէ՝ դեռ չէ  
տաքացրել. այդ բաւական չէ՝ դեռ համարձակ-  
ւուի է ինձ նկատողութիւն անել, թէ ուշ էք  
վեր կենում, ինքնաեռը սառչում է, ել չգիտեմ  
ի՞նչ...

ԱՆՆԱ. — Մի նեղանայ, մայրիկ, հանգստացիք. նա էլ ինչ անէ. վերջին ժամանակներս քանի անդամ տեսել եմ՝ ինքնաեռը պատրաստել-բերել է՝ ոչ ոք մօտեցող չէ եղեւ էլի նորից ետ է տարել տաքացրել:

**ՇԱՂԻՏԱՆ**—(կտրուկ) Աղախին ասած իր գործը պիտի գիտենայ. դու նրան մի պաշտպանիր:

**ԱՆՆԱ**—(Մեղմ) Ես նրան չեմ պաշտպանում. Ես ճշմարտութիւնն եմ ասում, մայրիկ:

**ՇԱՂԻՏԱՆ**—Փողոց պիտի գնանք, այնքան բան ունենք առնելու՝ դեռ տանն ենք, նրանք էլ (ցոյց է տալիս ննջարանի կողմը) մինչև հիմա դեռ չեն զեր կացել, գործի չեն գնացել. (այդ ժամանակ լսում է Արշակի հազի ձայնը): Արշակն այդպէս հիւանդ, զիշերս բոլորովին չեքնել, շարունակ հազացել է:

**ԱՆՆԱ**—Ես զիշերը մինչև ժամը մէկը մօտն էի. իրեն լաւ էր զգում. բաւականին կարդացի. լսում էր:

**ՇԱՂԻՏԱՆ**—Հէնց այդ կարդան է, որ քանի գնում նրան թուլացնում է. այդ գրքերից ըիչ վազ եկէք: Այդ գրութեանն է՝ էլի գիրքը ձեռից վայր չի գցում:

**ԱՆՆԱ**—Իր հոգեկան բաւականութիւնն այդ գրքերի մէջն է գտնում, մայրիկ:

**ՇԱՂԻՏԱՆ**—Շատ էլ բայց որ առողջութիւնը վսառում է:

**ԱՐՇԱԿ**—(Ներսից) Մայրիկ, Աննա, ով կայ այդտեղ. եկէք փոքր ինչ պատուհանը բաց առէք:

**ԱՆՆԱ**—Այս ըստէիս (զնում է):

**ՇԱՂԻՏԱՆ** (Մեղմ) Ո՞վ Տէր-Աստուած, Դու համես զաւակիս օգնութեան:

### ՏԵՍԻԼ 3

Մարին բերում է նիկելի ինենաեռը

**ՇԱՂԻՏԱՆ**—(Ղիստ) Միւս անգամ ինքնաեռն իր ժամանակին պատրաստ լինի, հասկանում ես:

**ՄԱՐԻ**—(Ճշողած) Լաւ:

**ՇԱՂԻՏԱՆ**—(Հանգիստ, բայց խորհրդատր) Պարոնդ գիշերս երբ տուն եկաւ:

**ՄԱՐԻ**—Ո՞րը:

**ՇԱՂԻՏԱՆ**—Ա... Ստեփանը:

**ՄԱՐԻ**—Համարեա լուսացել էր:

**ՇԱՂԻՏԱՆ**—Էլի այդպէս ուշ... (խօսակցութեան տոնը փոխելով), կաթը չեղաւ:

**ՄԱՐԻ**—Պատրաստ է (զնում է):

### ՏԵՍԻԼ 4

Մենում է Սոֆիան

**ՍՈՖԻԱ**—(Բարձրահասակ, թուխ գէմքով. երեսին նկատում են յոդնածութեան հետքեր): Սաստիկ առատ մազերը հաւաքել է զլխի շուրջը, այնպէս, որ գէմքը կասես շրջանակի մէջ լինի. հագնուած է վայելուչ տանու. զգեստ. շարժուածքը նազանի է եւ վայելուչ):

**ՇԱՂԻՏԱՆ**—Անտօնը զեր կացաւ:

**ԱՌՅԻԱՆ**—Հազիւ կարողացայ զարթեցնել.  
գիշերս մինչև լոյս դարձեալ նստել, սպասել եմ.  
օհ, ես արդէն յոզնեցի սպասելուց. չգիտեմ  
որա վերջը ուր է հասնելու...

**ՇԱՂԻՑԱ**—Ստեփանն էլ այստեղ դեռ չէ  
վեր կացել. ննջարանի դուռը ծեծեցի՝ հազիւ  
լսեց. Ժամը տասնկէսին մօտ է՝ դեռ տանն են:  
Չգիտեմ մեր գործին ով է մտիկ տուողը. Այդ  
բոլորը Հաջի-Յակովի այստեղ չլինելուցն է.  
Թող այստեղ լինէր՝ դրանց ցոյց կըտար:

**ԱՌՅԻԱՆ**—Է՞հ, մայրիկ, մարդիկ իրենք պէտք  
է հասկանան. Երկիւղով ի՞նչ կըլինի: (Թէյ է  
լցնում իրեն):

**ՄԱՐԻ**—(Քերում է կաթը. մի մասը լցնում  
կաթնիկի մէջ, միւա մասը Շաղիտան տանում է  
Արշակի ննջարանը. Մարին գնում է չոհանոց):

## ՏԵՍԻԼ 5

Մենում է Անտոնի

**ԱՆՏՈՆ**—(Նիհար եւ բարակ մարմին. դալուկ  
ձուածեւ դէմք. բարակ; հազիւ նշմարելի պեխեր, եւս  
հաղիւ նշմարելի մօրուք կզակի վրայ. մազերը սանրել  
է դէպի ետ. հազած է մաքուր վիզիտկա եւ ծաղկաւոր  
բաճկոն. խօսում է ջղային կամ ճնշուած, անվստահ):  
Կարծես մայրիկը այստեղ էր:

**ԱՌՅԻԱՆ**—(Ոչ-սիրալի) Գնաց Արշակի մօտ:  
**ԱՆՏՈՆ**—Ի՞նչպէս է Արշակի դրութիւնը:

**ԱՌՅԻԱՆ**—(Կտրուկ) Վատ. ամբողջ գիշեր  
հազացել է:

**ԱՆՏՈՆ**—Անպիտան տղայ, այնքան փող  
ծախսեցինք վրան, որ գնա բան սովորի, գնաց  
փչութիւն սովորեց, վերջն էլ վատ ախտով հիւ-  
ւանդացաւ, ընկաւ անկողին, դրա հետ թոքախ-  
տըն էլ միացաւ. ընկաւ մահիճ, մեզ էլ այն-  
քան ծախքերի մէջ գցեց:

**ԱՌՅԻԱՆ**—Մի տղայ, որ մանուկ հասակից  
փողի հետ խաղայ՝ նրա վերջն այր է:

**ԱՆՏՈՆ**—Բոլոր մեղքը մայրիկինն է. քանի  
անգամ ասացինք, թէ փող մի տայ դրան, չե-  
ղաւ. մինչև անգամ, միտքդ է, մի անգամ գիւ-  
նազիայի դաստիարակը եկաւ խնդրեց, որ փող  
չտանք, դարձեալ չեղաւ, դարձեալ տալիս էր:

**ԱՌՅԻԱՆ**—Մայրիկն ի՞նչ անէր. չէր տալիս  
նա գնում սնդկից էր գողանում. մի անգամ էլ,  
յիշում ես, գիշերը ծածուկ հայրիկիդ գրպանից  
300 ըուբլի գողացաւ, փախաւ գնաց կիսլավոդսկ,  
մի շաբաթուայ մէջ բոլորը վատնեց, եկաւ:  
ԱՆՏՈՆ—Զգիտեմ այդ տղան մւմ քաշեց  
այդպէս փուչ:

**ԱՌՅԻԱՆ**—(Կծու) Իր եղբայրներին:  
ԱՆՏՈՆ—(Ջղայնացած նայելով կնոջ երե-  
սին) Հը՛ը՛...

**ԱՌՅԻԱՆ**—Այդ որ նրա մասին էք բան ա-  
սում, մէկը հարցնող լինի՝ դուք ի՞նչ էք. մէկդ

կէս գիշերն անց էք տուն գալիս, միւսդև լուսածէմին, որըդ էլ՝ ամենկին։ Արշակի օրերը հաշուած են. դուք ձեզ նայեցէք, որ աշխարհի երեսին գլուխ էք պահելու։

**ԱՆՏՕՆ**—(*Ուզենայով խօսքը փոխել՝ նայում է ժամացոյցին*) Օ՞հ, արդէն ժամը տասն և մէկին մօտ է. ուշացայ։

**ՍՈՅԻԱՆ**—(*Վրդովուած*) Իհարկէ, գիշերը ժամը երեքին-չորսին տուն եկողը կուշանայ։ (*Պառւզամօթ չինի հարցնելը՝ գիշերս էլի ո՞րտեղ էիր*)

**ԱՆՏՕՆ**—Ակմբում։

**ՍՈՅԻԱՆ**—Ակմբում.. դրա հնարողը գետինը մտնէր, որ չնարեէր, որ մարդիկ չհաւաքուէին, մինչև լոյս թուղթ չխաղային, և լուսադէմին դատարկ գրաններով տուն չվերադառնային։

**ԱՆՏՕՆ**—Իսկ դուք, որ շաբթէնը երկու-երեք անգամ հաւաքում էք լուսո սարքում, ես բան ասում եմ։

**ՍՈՅԻԱՆ**—Սարքում ենք, շատ-շատ խաղում ենք մինչև գիշերուայ ժամը տասնեմէկը, կամ տասներկուաը. հօ ձեզ պէս չենք լուսացնում։

**ԱՆՏՕՆ**—Եյն յիմար ընկերներս եղան պատճառը, ստիպեցին թուղթ խաղալու, վերջն էլ ընթրիքի պահեցին, ուշացայ։

**ՍՈՅԻԱՆ**—Ըսկերներդ յիմար էին, դու հօ

խելօք էիր, թող դռւ չմնայիր, գայիր։ Զմտածէլիր, թէ ամուսին ունիս, տանը նստած քեզ է սպասում։

**ԱՆՏՕՆ**—Քնիր, քեզ ով է ասում, որ նըստես, սպասես։

**ՍՈՅԻԱՆ**—Զսպասեմ, հա, որ աւելի ուշանաս։

**ԱՆՏՕՆ**—Առաւոտ կանուխ, Աստուած կըսիրես, էլի մի սկսիր։

**ՍՈՅԻԱՆ**—Զսկսեմ, որ միւնոյն բանը կըրկնես, հա. մէկ մտածել ես, թէ դրա վերջն ուրէ հասնելու։

**ԱՆՏՕՆ**—(*Զայրացած*) Բա հիմա չես թողնելու, որ մի բաժակ թէյ խմեմ։

**ՍՈՅԻԱՆ**—(*Սպառնալիքով*) Անտօն, բաւական է, մինչև այստեղս է հասել (ցոյց է տալիս կոկորդը). Խելքդ գլուխդ հաւաքիր, էդ ձամբից ետ կաց, թէ չէ մէկ էլ տեսար..

**ԱՆՏՕՆ**—(*Ծնդհատելով*) Ի՞նչ։

**ՍՈՅԻԱՆ**—Երեխաններիս ձեռքից բռնեցի ու գնացի։

**ԱՆՏՕՆ**—(*Հէզնանքով*) Ո՞ւր։

**ՍՈՅԻԱՆ**—Հօրս տուն։

**ԱՆՏՕՆ**—Որ հօրդ տուն էիր գնալուն էլ ինչու ամուսնացար։

**ՍՈՅԻԱՆ**—Ամուսնացայ, որ երջանիկ օր տեսնեմ, միասին կեանք վայելենք. ոչ թէ ես

գիշեր-ցերեկ տանը մենակ մնամ նստած, դու  
ամբողջ գիշերներով դուրսը թափառես: Մի տեղ  
եմ ուզում գնալ՝ չկաս. թատրոն եմ ուզում  
յաճախել՝ տանը չես, ստիպուած տանն եմ մը-  
նում. մի լաւ մտածիր, թէ արածդ բնչ է:

**ԱՆՏՕՆ**—(Ձղային) Օհ, հէրիք եղաւ:

**ՍՈՒԹԻԱ**—(Դառնութեամբ) Անամօթ:

## ՏԵՍԻԼ 6.

Մտնում է Ստեփանը

**ՍՏԵՓԱՆ**—(Կոլոր, չաղ գէմք. սեւ կոլոր աշ-  
քեր. բարակ սեւ պեխեր. սափրած երես. միջանասակ.  
սաստիկ շարժուն. գէմքն աւելի կարմիր, քան դա-  
լուկ. աչքերն արնով լցուած են. սեւ սաթի նման հա-  
րուստ մազերը մի կողքի սանրած: Հաղած է նոր տա-  
րազի պիշակ իր զոյնի վարտիկով ու բաճկոնով. ման  
է գալիս վստահ, ինչպէս իր ժարծումներն են վստահ,  
անցնում է Անտօնի մօտով, մօտենում է սեղանին,  
թէյ է ածում):

**ԱՆՏՕՆ**—(Ստեփանին) Գիշերս էլի սրտեղ  
ես եղել, որ աչքերդ այլպէս ուռել-կարմրել  
են:

**ՍՏԵՓԱՆ**—(Խիստ) Քեզ ինչ:

**ԱՆՏՕՆ**—Ֆռւ, այնքան խմել է, որ գինու  
հոտը բերանից գալիս է:

**ՍՏԵՓԱՆ**—(Նրան նայելով) Դու էիր մնա-  
ցել վրաս խօսելու, թղթամնի:

ԱՆՏՕՆ—(Կոքու) Խօսքդ ճանաչիր, յիմար:

ՍՏԵՓԱՆ—ինչ, սմւտ եմ ասում:

ԱՆՏՕՆ—Եթէ ես թուղթ եմ խաղում, դու  
էլ անառակ կեանք ես վարում:

ՍՏԵՓԱՆ—Ես գործ եմ շինում, դմւ ինչ  
ես անում, ողորմելի:

ԱՆՏՕՆ—Շինում ես, այս, գիտեմ, «Ռու-  
կոշ» կաֆէշանտանում:

ՍՏԵՓԱՆ—(Ճամաճութեամբ) Այս, յարգե-  
լի թղթամոլ, «Ռուկոշ» կաֆէշանտանում, որ-  
տեղ երէկ գարձեալ մի պարտիա ասլրանք ծա-  
խեցի մօտ հազար բուլի օգուտով, փողն էլ  
կանխիկ ստացայ, իմացմար:

ԱՆՏՕՆ—Ինչքան աշխատում ես՝ այնպէս  
երկուս էլ վատնում:

ՍՏԵՓԱՆ—Ճիշտ է, քեզ պէս միայն թրէ-  
թախաղի չեմ տալիս:

ԱՆՏՕՆ—Ովկ գիտէ, այն ժախածներիդ մէջ  
էլ ինչեր ես անում:

ՍՏԵՓԱՆ—(Զայրացած ձեռքը խփում է սեղա-  
նին, որից աւանները ծայն են հանում, եւ Սովիան  
վեր ի թոշում աշու անելով) Այս տեսակ բանի հէրն  
անիծած, որ համ անես՝ համ էլ վրադ կասկա-  
ծեն, խօսեն...

ԱՆՏՕՆ—(Տեսնելով կնոջ վախենալը) Վայ-  
րենի:

ՍՈՒԹԻԱ—(Համբերութիւնը հատած) Ի սէր  
2

Աստծոյ վերջացըէք. բաւական է. ամեն օր միհնոյն կոխը, միհնոյն կոխը. չբեզպեցիք էլ. (Նեղացած զնում է ննջարան):

### ՏԵՍԻԼ 7.

Մտնում է Լազարը

**ԼԱԶԱՐ** — (Փոքր նիհար դէմք. բարակ գորշ պեհիք. փոքր, քիչ սուր մօրուք. հագած է կըսմ գոյնի շոր զոլերով. վարտկի փողերը ետ են դարձրած. մազերը մէջտեղից երկու կէս արած. բաց երկնագոյն փողպատի վրայ փայլում է բրլիանտ: Յօրանջելով առաջ է գալիս գուան ետելից, ուր քիչ առաջ գալով լսում էր եղբայրների կոխը): Առաջ, առաւօտ կանուխ այստեղ թատրօն կայ: (Մօտենում է սեղանին թէյ լցնում):

ԱՆՁՈՆ — Հա, դու էիր պլակաս, դու էլ եղար՝ ամեն ինչ լրացաւ:

**ԼԱԶԱՐ** — (Հէզնանքով) Բա ես մարդ չեմ:

**ՄՏԵՓԱՆ** — (Բարկացկոտ) Մի հարցնող լինի՝ դու այս ժամանակ այստեղ ի՞նչ ես շինում:

**ԼԱԶԱՐ** — (Բանի տեղ չղնելով Ստեփանին) Ի՞նչ որ գնաք, այն էլ ես:

**ՄՏԵՓԱՆ** — (Կատաղի) Առաւօտ կանուխ այծերս մի բերի, թէ չէ գիտես ինձ:

**ԼԱԶԱՐ** — (Յանդուզն) Օհօ, մի դրան նայեցէք. ի՞նչ, դու այս տան զաւակն ես, ես չէ:

**ՄՏԵՓԱՆ** — (Զզուանքով) Դեռ հալա լածիրակ ես, ինչեր ես անում:

**ԼԱԶԱՐ** — (Համարձակ) Դուք որ անում էք, ես ինչու չեմ անի:

ԱՆՁՈՆ — Շաբաթներով տուն չես դալիս, ով գիտէ ինչ տեսակ տեղեր ես թրե գալիս:

**ՄՏԵՓԱՆ** — (Լազարին) Թափառական:

ԱՆՁՈՆ — Քամի վանդող:

**ԼԱԶԱՐ** — (Ցինիկ) Չեր երկուսի էլ լսելոք հոգուն մեռնեմ:

**ՄՏԵՓԱՆ** — (Բոռնցքով սեղանին ուժեղ խիելով) Չայնդ կտրիր, թէ չէ եկաւ, հա...

**ԼԱԶԱՐ** է, է, լսնդրեմ, քիչ քաղաքավարի. այստեղ փողոց չէ:

**ՄՏԵՓԱՆ** — Սրիկայ:

### ՏԵՍԻԼ 8.

Մտնում են Շաղիտան եւ Աննան

**ՇԱՂԻՏԱՆ** — Էլի ի՞նչ էք կոխւներդ սկսել:

**ԼԱԶԱՐ** — (Խակոյն վրա բերելով) Սրանք են, այս մայրիկ, (ցոյց է տալիս եղբայրներին):

**ՄՏԵՓԱՆ** — (Ուժգին) Էլի. (տեղից վեր թըռչելով թեքում է դէպի Լազարը խիելու):

**ՇԱՂԻՏԱՆ** — (Հրամայող) Ստեփան, զսպիրքեգ:

**ԱՏԵՓԱՆ** — (Ետ քաշուելով) է՞հ, մայրիկ, դու  
էլ ամեն անգամ ինձ ես տեսնում:

**ԱՆՏՕՆ** — Արովհեակ ամեն ինչ անողը դու  
ես:

**ԼԱԶԱՐ** — (Սուր) Դրանք երկուսն էլ լաւն  
են, մայրիկ, կշեռքի թաթին որ դնես՝ իրար հա-  
ւասար կըդան:

**ՇԱՂԻՏԱ** — (Բարկովծեամբ) Դու ձայնդ կըտ-  
րիք: (Հասում է Արշակի հազի ծայնր):

**ԱՏԵՓԱՆ** — Ծաղիկի մէկն էլ նա է, այ,  
գիմնազիան չաւարտած՝ ուսումը հիւանդանոց-  
ներում պիտի աւարտէ:

**ԱՆՆԱ** — (Մեղմ) Ստեփան Եակովիչ, ինչու  
համար հիւանդ եղորդ հասցէին այդ տեսակ  
խօսքեր ես ասում:

**ԱՏԵՓԱՆ** — (Զսպած) Ահա, հիմա դու պաշտ-  
պան կանգնեցիր:

**ԱՆՆԱ** — Ես չեմ պաշտպանում, ես ցաւում  
եմ, որ...

**ԱՏԵՓԱՆ** — (Հնդհատելով) Ցաւիր քո այն  
չրանտի վրա, այն խարար տանող-բերողի, մեզ  
իրար հետ կոռւեցնողի, որ քեզ իդէալ ես շի-  
նել:

**ԱՆՆԱ** — (Վըդովուած) Խնդրեմ...

**ՇԱՂԻՏԱ** — Ստեփան, բաւական է, ինչ կա-  
տաղել ես այսօր ամեն մէկին կծում ես:

**ԱՆՏՕՆ** — Արբեցողութեան հետևանք է:

**ԼԱԶԱՐ** — (Մատերը զիսին դէպի վեր շար-  
ժելով) Էլի... եկել են...

**ԱՏԵՓԱՆ** — (Խոժող նայելով Անտօնին եւ Հա-  
զարին, ապա խօսքը մօրն ուղղելով) Նշանակում է՝  
ամենքդ էլ արժանի էք:

**ՇԱՂԻՏԱ** — Այդ ժւմ հետ ես:

**ԱՏԵՓԱՆ** — (Շեշտելով) Քեզ, նրա, բոլորի...

**ՇԱՂԻՏԱ** — (Զարմանքով) Ի՞նձ, ե՞ս ինչ եմ  
արել:

**ԱՏԵՓԱՆ** — Ինչ որ արել ես՝ դու ես արել:

**ՇԱՂԻՏԱ** — Ե՞ս ինչ եմ արել:

**ԱՏԵՓԱՆ** — Ի՞նչ, գիշեր-ցերեկ լոտօ սարքո-  
ղը դու չես, տնէտուն ման եկողը, ուամս խա-  
ղացողը դու չես, որա պէսներին (ցոյց տալով  
Հազարին) երես տուողը դու չես, հա...

**ԼԱԶԱՐ** — (Հէգնանքով) Ին իրեն մոռացել է:

**ԱՆՆԱ** — Ստեփան Եակովիչ, միթէ կարելի  
է մայրիկին այդպէս վիրաւորել:

**ԱՏԵՓԱՆ** — Գիտեմ, նեղացար, որովհետեւ  
քիչ էլ քեզ է վերաբերում, որ օրը մի անգամ  
զուգում-զարդարում, դուրս ես գնում. «Ռւը».  
(ծամածոելով) «Ժողնվ»... Ուհ, այդ ձեր փող  
ուտող ազգասէրների ժողովները...

**ԱՆՆԱ** — Այդ արդէն իմ գործն է:

**ՇԱՂԻՏԱ** — (Բղաւելով) Դէ լոիր, բաւական է:

**ԱՏԵՓԱՆ** — Զպիտի լոեմ. այսօր բարկու-  
թիւնս եկել է, ամեն ինչ պիտի ասեմ:

**ԱՍԶԱՐ**—Ասա, միայն չմոռանաս և քո՞մասին:

**ԱՆՏՕՆ**—Թու, չարժէ այստեղ մնալը (վերէ կենում սեղանից, բայց չի զնում, դանդաղ շրջում է):

**ՇԱՀԻՑԱ**—Այդ բոլորը Հաջի-Յակոբի այստեղ չինելուցն է. թող այստեղ լինէր՝ ձեզ խրատ կը տար:

**ՄՏԵՓԱՆ**—Մեզ խրատ տան էն գլխից էր պէտք, որ մոռացել էք:

(Հաւում է դրսի դուն զանգակի ծայնը. Մարին սեղանատան միջով զնում է դուռը բաց անելու):

**ՇԱՀԻՑԱ**—Տեսնես ովէ է առաւօտ այսպէս վաղ եկողը:

## ՏԵՍԻԼ 9.

(Բեմում առ ժամանակ տիրում է լոռութիւն. բուլորը թէյ են խմում. Անտօնը ման է գալիս եւ ծխում, իսկ Լազարը մի կողմում մարմնամարզութիւն է անում. այդ ժամանակ ներս է մանում Հաջի-Յակոբը ճամբրուկը ճնոկին, իսկ նրա հաեկից աղախինը տեղաշորը (փոկով կապած) բռնած: Հաջի-Յակոբը որդոցը տեսնելուն պէս մի-երկու վայրկեան մնում է տեղում կանգնած: Պատկեր: Որդիքն այդ անակնկալից շփոթուած ցածր ասում).—հայրին, հայրին...

**Հ. ՅԱԿՈԲ**—(Ոչ այնքան ծերացած, երկար պեխերով, սափրած երեսով, թաւ յոնքերով, դալուկ տըկար դէմքով. հագած է հասարակ կիսամաշ աշնան

վերարկու. գլխին սկ գլխարկ (շապօ). վերարկուի տակ հագած ունի սկ սիւրտուկ. ձեռքերին հաջի լինելու հետքեր. քիչ կոացած է. խօսում է բեկրեկուող ձայնով): Բարի օր:

**ՇԱՀԻՑԱ**—(Հնդառաջնորդ) Բարի եկար, Հաջի-Յակոբ:

**ՀԱԶ. ՅԱԿ.**—(Վերարկուն հանում է, տալիս Մարտն, որ մինչ այդ ծամբուկը տարել, եկել է):

**ԱՆՏՈՆ**—Բարի, հայրիկ:

**ՄՏԵՓԱՆ**—Բարնի եկար, հայրիկ:

**ԱՍԶԱՐ**—Բարի:

(Որդիքը բարեների հետ գլուխ են առլիս, հայրը նոյնպէս):

**ԱՆՆԱ**—Հօրեղբայր, բարնի եկար:

**ՀԱԶ. ՅԱԿ.**—Այսօր տօն է, ինչ է:

**ՇԱՀԻՑԱ**—Ոչ, տօն չկայ:

**ՀԱԶ. ՅԱԿ.**—Ապա սրանք ինչու տանն են:

**ՇԱՀԻՑԱ**—Այնպէս... (լիզուն կապընկածի պէս):

**ՀԱԶ. ՅԱԿ.**—Ի՞նչպէս թէ «այնպէս». Ժամը տասն և մէկին մօտ է, սրանք երեքով ինչու համար են տանը:

**ՇԱՀԻՑԱ**—Ոչինչ, այնպէս ուշացել են:

**ՀԱԶ. ՅԱԿ.**—(Որդոցը) Ուշացել են... ի՞նչպէս թէ ուշացել են... հապա ում էք թողել գործը, գործարանը... (պատզա): Ես ծերունի տեղովս գնամ տօնավաճառներն ամիսներով քաշ

գամ, գիշերը քուն չուսենամ, ցերեկը հանդիսա, փող աշխատեմ, որ գուք այս ժամանակ տանր նստած թէյ խմէք... որ իշխանի որդին էք, որ կոմսի թռող. ով է ձեզ պահելու, ում վրա էք դրել ձեր յոյսը. ի՞մ, ծերունի հօրերմադ..., որ այս տարիքում աշխատի և գուք վատնէք... Յետոյ ի՞նչ է լինելու ձեր վիճակը... (պատզա). (ձեռը թափ տալով) ես ձեզ բոլորիդ տանից դուրս կանեմ, հայրական ժառանգութիւնից կը զրկեմ, ունեցածս բարեգործական նպատակների կը տամ... (պատզա) Դուք որդիք չեղաք ինձ համար, որդեր եղաք, ջանս ուտող որդեր... կորէք, հեռացէք աշքիցս, ձեզ չտեսնեմ...

(Յուզուած, դողդողալով մօտենում է աթոռին և ընկնում նրա վրա: Լուս տեսարան: Արդիքը գուտիւները կախ արած գնում են նախասենեակ, զնում են գլխարկները, հագնում վերաբկուները, իրավ ետեից ելնում դուրս):

**ՇԱՂԻՑԱ.**—Հանգստացիր, Հաջի-Յակոբ, ճանապարհից նոր եկար, քաղցած կը լինեմ. թէյ լցնեմ, քիչ նախաճաշիր:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—Ախորժակս էլ կորաւ, ամեն ինչս էլ. (Ելնում է աթոռից, նստում թաղթին, յենտում բարձին): Օ՞հ, սաստիկ յոգնել եմ. քանի օր է ճանապարհ եմ գալիս, ամենեն աչքս չեմ փակել. վագոնի մէջ այնքան մարդ կար, որ չկարողացայ քիչ պառկել:

**ՇԱՂԻՑԱ.**—Գնանք ննջարան, քիչ քնիր, հանգստացիր:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—(Պատզա) Է՛, տանն էլ ի՞նչ կայ, ի՞նչ չկայ. մոռացայ հարցնել:

**ՇԱՂԻՑԱ.**—Ամեն ինչ կարգին է:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—Արշակի առողջութիւնը:

**ՇԱՂԻՑԱ.**—Էլի առաջուայ պէս է:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—Բժիշկը կանոնաւոր յաճախնում է:

**ՇԱՂԻՑԱ.**—Այս, այսօր դարձեալ գալու է:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—Երեխաները:

**ՇԱՂԻՑԱ.**—Բոլորը լաւ են:

(Լուսում է Արշակի հազի ձայնը):

**ՇԱՂԻՑԱ.**—Խեղճ զաւակս, ամբողջ գիշերն այդպէս հազացել է:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—Քնած հօ չէ:

**ՇԱՂԻՑԱ.**—Ո՞չ:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—Գնանք տեսնենք:

**ՇԱՂԻՑԱ.**—Գնանք, (գնում են):

## ՏԵՍԻԼ 10

Մտնում են Սոֆիա և Աւենիիկ

**ՍՈՖԻԱ.**—(Ուզակ) Լանիկ, գիտես ո՞վ է եկել:

Լեհոնիկ—Ցէ, ցըգիտեմ:

**ՍՈՖԻԱ.**—Պապիկդ է եկել:

ԼԵՒՈՆԻԿ—Պապիկս, ապա մուլ է ցրկայ: ՍՈՅԻԱՄ—Արշակ հօրեղբօրդ մօտ գնաց. հիւա կը գայ:

ԼԵՒՈՆԻԿ—Հապա ինցի՛ ինձ մօտ էլ ցեկաւ:

ՍՈՅԻԱՄ—Դու գեռ փոքր ես. երբ մեծանաս՝ քեզ մօտ էլ կը գայ:

ԼԵՒՈՆԻԿ—Մեծանամ, ուսումնալան կելթամ, ցէ մայլիկ:

ՍՈՅԻԱՄ—(Որդոն համբուրելով) Այս, մայրիկը քեզ մատաղ:

ԼԵՒՈՆԻԿ—(Մօրը փաթաթուելով) Մայլիկ ձան:

ՍՈՅԻԱՄ—Որ տեսնես պապիկիդ, ապամ, ասս տեսնեմ, ի՞նչպէս պիտի բարես:

ԼԵՒՈՆԻԿ—(Գլխով խոնարհելու նշան է անում) Այսպէս:

ՍՈՅԻԱՄ—Էլ:

ԼԵՒՈՆԻԿ—Թաթիկս այսպէս ելեսին եմ քսելու:

ՍՈՅԻԱՄ—Այ իմ խելօք բալիկս:

## ՏԵՍԻԼ 11

Մենում են Հաջի Յակոբ, Յայլիսա և Աննա

ԼԵՒՈՆԻԿ—Վույ, պապիկս. (վազում է դէպի Հաջի-Յակոբը):

ՀԱՅ. ՅԱԿ.—Ա-ա, սիրուն բալիկս, արի տեսնեմ: (Գրկում է Լեւոնիկին համբուրում):

ԼԵՒՈՆԻԿ—(Գլխով բարեւում է եւ ձեռը քըսում պապի երեսին): Գիտես, աղապ, Սուլիկը զալթել է:

ՀԱՅ. ՅԱԿ.—Սուրիկը զարթէլ է:

ԼԵՒՈՆԻԿ—Զելքելը հանել է, խաղում է:

ՀԱՅ. ՅԱԿ.—Սուրիկն է լաւ, թէ դու:

ԼԵՒՈՆԻԿ—Ես էլ, Սուրիկն էլ:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Լեւոնիկին իշեցնում է գրկից) Դէ, գնա խաղա: (Բարեւում է Սոֆիային): Անսա, հեռախօսով կասես գրասենեակ Հրանտին, որ ես եկել եմ, մի ժամից հաշիւներն առնի գոյ, մինչև ես քիչ կընանդստանամ: (Գնում է):

ԱՆՆԱ—Լաւ:

ՇԱՂԻՏԱ—(Սոֆիային) Սոփիա, դու արդէն պատրաստ ես:

ՍՈՅԻԱՄ—Այս, պատրաստ եմ. բայց ի՞նչպէս գնանք. հայրիկը նոր եկաւ, անյարմար չէ:

ՇԱՂԻՏԱ—Թէկ քիչ անյարմար է, բայց ի՞նչ արած. Երեկ գնացինք, ջոկեցինք, ամօթ է.

մարդիկը մեզ կսպասեն: Մինչև նա քնից վեր կենայ՝ մենք կըվերադանանք:

ՍՈՅԻԱՄ—Լաւ, գնանք:

(Շաղիտա և Սոփիա նախ սեղանատանը ծածկում են վեղոյրները, ապա նախասենեակում հագնում վերաբկուները):

**ՇԱՂԻՑԱ.**— Անսա, երբ հօրեղբայրդ վեր կենայ, աղախնին ասա, որ նրա համար սուլծ պատրաստէ, իսկ դու էլ նախաճաշ պատրաստիր. բանալիները բուֆէտի վրա են:

**ԱՆՆԱ.**— Լաւ:

(Շաղիտան և Սոփիան գնում են: Անսան իր համար թէյ է լցնում):

## ՏԵՍԻ 12

Մտնում և Արշակը

**ԱՐՇԱԿ.**— (Հաղած է տուժուրկա, բաց ետ ծառ լած օձիքով, որը կապւում է ժապաւէնով, գորշ վարտիկ. մուճակներ. նրա գէմքը խիստ դալրւկ է, մաշտած. քիչ-քիչ վեներական ախտի կարմիք բծեր. կուչ եկած. աչքերը փայլում են. քայլում է թոյլ դող-դող. խօսում է բեկ-բեկ ձայնով, ցածր զգայուն. երեսին բսել է աղուամազ ցանցառ կերպով. Դուան ետկից, յենուած շրջանակին): Անսա, մենամկ ես:

**ԱՆՆԱ.**— Այն. արդէն վեր կացար:

**ԱՐՇԱԿ.**— Զանձրացայ պառկելուց: Հայրիկին տեսայ, կասես քիչ թեթևացայ: Ո՞ւր են մայրիկն ու Սոփիան: (Մտնում է, նստում):

**ԱՆՆԱ.**— Գնացին փողոց:

**ԱՐՇԱԿ.**— Ինչու:

**ԱՆՆԱ.**— Ամառանոցի պատրաստութիւն տեսնելու:

**ԱՐՇԱԿ.**— (Անտարբներ) Ամառանոցի պատրաստութիւնն... (պատրա): Հայրիկը ուր գնաց: Աննն. — Իր սենեակը հանգստանալու:

**ԱՐՇԱԿ.**— (Քիչ լոելոց յետոյ) Մի բաժակ թէյ ածիր:

**ԱՆՆԱ.**— Աւելի լաւ չէ կաթ խմես. դեռ տաք է:

**ԱՐՇԱԿ.**— (Դժգոհ) կաթ, շաբունակ կաթ. զգուեցրեց ինձ այդ կաթը:

**ԱՆՆԱ.**— Այն ժամանակ թէյը կաթով:

**ԱՐՇԱԿ.**— Լից կէս բաժակ:

**ԱՆՆԱ.**— (Թէյն ածելուց յետոյ դիմում է միւս սենեակը):

**ԱՐՇԱԿ.**— Ո՞ւր ես գնում:

**ԱՆՆԱ.**— Հեռախօսով իմաց անեմ Հրանտին գայ. հօրեղբայրը նրան կանչեց. (զնում է):

**ԱՆՇԱԿ.**— (Ետերից ինչ որ նախանձով) Հրանտին...

(Թէյ է խմում. քիչ յետոյ վեր է կենում, մօտենում լուսամուտին, բաց անում այն, արմունկով յենուում շրջանակին, նայում դուրս: Այդ ժամանակ Մարին գալիս հաւաքում է սեղանը, բացի Արշակի թէյից: Հաւաքելը տեսում է այնքան, մինչեւ որ վերադառնում է Աննան):

**ԱՐՇԱԿ.**— (Ետ նայելով Աննային) Նայիր, Աննա, ինչ հրաշալի զարթել է բնութիւնը. ինչ սիրուն ծաղկել են ծառերն ու ծաղկիները: (Դրսից լուսով է թռչունների ծլվոց). Անայիր,

վարդերն արդէն բացուել են, թռչուններն երգում են. օհ, ինչ գեղեցիկ բան է կեանքը, ինչ բաղցը... իսկ ես... (հազում է):

**ԱՆՆԱ**—**ՄԻ** յուզուիր, չէ՞ որ բժիշկը պատուիրել է հանգիստ մնաս. Եկ, կարող ես մըրսել:

**ԱՐՇԱԿ**—**ԱՌԱ**, Աննա, իմ անգին Աննա, որ իմանաս ինչիս ուզում եմ բացուել այս հրաշագեղ գարնան նման. բայց... (հազում է):

**ԱՆՆԱ**—**ՄԻ** վրդովուիր, ամեն ինչ լաւ կը լինի:

**ԱՐՇԱԿ**—**ԱՅՆ** ժամանակ, երբ ես հասկացայ կեանքի խորհուրդը, երբ իմ մէջ ձգտում ծագեց այդ կեանքով ապրելու իմ կեանքն արդէն ախտաւորուել էր, կործանուել....

**ԱՆՆԱ**—**ԱՌԱ**, ինչու համար ես այդ տեսակ բաներ ասում:

**ԱՐՇԱԿ**—**ՆՐԱ** համար, որ այստեղ (ձեռը դնում է կրծքին) կրակ կայ, ինձ վառող-այրող կրակ: (Հառաջում է) **ԱՌԱ**:

**ԱՆՆԱ**—**ՄԻ** հառաջիր. չէ՞ որ բժիշկը ասում է շուտով լաւ կըինես:

**ԱՐՇԱԿ**— (Կէս հէզնանքով) Բժիշկը... (լուղջ) իսկ ինչ է ասում այն միւս բժիշկը, (ցոյց է տալիս պարտէզը), որ բոյսին անգամ կեանք է տալիս:

**ԱՆՆԱ**—**ՆՐԱ** ասում է, որ հաւատաս և համ-

բերես. համբերութիւնը մեր կեանքի արևն է, որ հասցնում է նրա պառաղները:

**ԱՐՇԱԿ**— (Խանդաղատանքով) **ԱՌԱ**, Աննա, Աննա, որքան լաւ ես դու, որքան վեհ... որ իմանաս որքան սիրում եմ քեզ. որ այդպէս հաւատով ես ու համբերող ու ինձ կեանք ներշնչող... իմ լաւ, իմ անդին Աննա... (քոնում է ձեռնքը, դնում կրծքին, ապա շրթունքներին) Աննա... (արտասում է):

**ԱՆՆԱ**— (հըրեւ ոչինչ չնկատելով նրա սիրոյ մէջ, գուրգուրելով) **ՍՐԵԲՐ** արտասուքդ:

**ԱՐՇԱԿ**—**ԱՌԱ**, Աննա, երանի դու շուտ էիր եկել մեր տուն, քանի ես փոքր էի, առողջ, դեռ չէի ընկել ախտաւոր կեանքի մէջ, ցոյց տայիր ինձ գեղեցկի ճանապարհը, կեանքի խորհուրդը... (Ճնշուած) բայց ուշ եկար դու, շատ ուշ... (հազում է). օհ, ինչպէս սաստիկ կողքս ծակում է:

(Դրսից լսում է զանգակի ձայն. Մարին գնում է դուռը բաց անելու):

**ԱՆՆԱ**—**ԱՅՆ** չափը հերիք է. հազում ես, գնանք պառկիր. հիմա բժիշկը կըգայ, ժամանակն է:

**ԱՐՇԱԿ**—Գնանք. (Վեր է լենում). միշտ միենոյն սենեակը, միենոյն պատերը, միենոյն դեղն ու կաթը, միենոյն բժիշկն ու այցելութիւնները... Զանձրացայ... (զնում են):

## ՏԵՍԻԼ 13

Մենում և Մարին ապա Հրանտը

**ՀՐԱՆՏ**—(Միջահասակից բարձր. համակրելի գէմքով. կզակի ծայրին փոքր սև մօրուք. սև յոնքերի տակ խելօք-խօսուն աչքեր. պեխերը ողորկի. քիչ վեր ծռած. մազերը գէզի վեր սանրած. հազած ունի մոխրագոյն, զոլաւոր, վերջին տարազի կաստիւմ, օսլայած փայլուն շապիկ, թերե և սպիտակ օձիք, մոխրագոյն փողպատ. խօսում է լուրջ, համոզուած, հանդարտ տոնով. պահում է իրեն վայելուչ, մինչեանդամ հպարտ, ինքնասէր): Խնդրեմ, իմաց տուշքը Հաջի-Հակոբին, որ եկել եմ:

**ՄԱՐԻ**—Նա դեռ քնած է, պարոն:

**ՀՐԱՆՏ**—(Նայելով չորս կողմը) Տանը ոչ ոք չկայ:

**ՄԱՐԻ**—Տիկինն ու Սոֆիա իվանովսան գնացին բազար: Օրիորդը տանն է:

**ՀՐԱՆՏ**—(Զուարթ) Խնդրեմ, յայտնեցէք օրիորդին, որ ես եկել եմ:

**ՄԱՐԻ**—Այս բոպէիս. (տալիս է աթոռ). համեցէք, խնդրեմ. (զնում է):

**ՀՐԱՆՏ**—(Նստում է սեղանի մօտ, գրքերի միջից հանում է մի տետր եւ սկսում է մատիտով նըշաններ անել):

## ՏԵՍԻԼ 14

Միաւում և Աննան

**ԱՆՆԱ**—(Ուրսին եւ նազանի) Ա-մ, պարոն Հրանտ, բարե՛ ձեզ:

**ՀՐԱՆՏ**—(Սիրալի) Բարե՛ ձեզ, օրիորդ. ի՞նչ-պէս էք:

**ԱՆՆԱ**—Լաւ. ապրում ենք:

**ՀՐԱՆՏ**—Քանի ժամանակ է մոռացել էք ինձ:

**ԱՆՆԱ**—(Չարածծի ժպիտով) Տիրառւմ էք, այս:

**ՀՐԱՆՏ**—Զգիտեմ, ինքներդ գուշակեցէք. յարգել այնպէս խորը մէկին... հինգ-վեց օր չտեսնել...

**ԱՆՆԱ**—Դէ լաւ, լաւ, իմ ազնիւ բարե-կամս:

**ՀՐԱՆՏ**—Ժողովներ անգամ չէք գալիս:

**ԱՆՆԱ**—(Լուրջ) Դուք չգիտէք պարոն Հրանտ, թէ վերջերս որքան զբաղուած էի «Մեղու» աշխատանոցի գործերով. բացի զօրքի տեղաշորի մասերից՝ կապալով վերցրել ենք և քաղաքիս հիւանդանոցի սպիտակեղէնը. զիշեր-ցերեկ աշխատում ենք, որ ժամանակին հասցնենք. մեզ մօտ այս ըոպէիս աշխատում են հինգ հարիւրից աւելի կիս բանուոր:

ՀՐԱՆՏ—Բրախօ, ուրեմն դուք կերակրում  
էք հինգ հարիւր ընտանիք:

ԱՆՆԱ—Այս. այդ գործից մեղ զուտ ար-  
դիւնք կը մնայ մօտ վեց հազար ըռւբլի, որը բա-  
սականանում է մեր կարուձեի դպրոցը և  
խոհարարական կուրսերը պահելուն:

ՀՐԱՆՏ—(Ուրախ կատակով) Այժմ տեսնում  
եմ, որ իրաւունք ունէք. (կատակով) թէն կա-  
րող էիք երեկոները երբեմն յաճախել:

ԱՆՆԱ—(Լուրջ) Իսկ երեկոները նախ հար-  
կաւոր է Արշակին զբաղեցնել, նա վերջերս դա-  
ռել է ինչ որ գէպի ամեն ինչ անտարբեր, խըղ-  
ճակի, ինչպէս ասեմ չգիտեմ, որ հասկանաք.  
Երկրորդ...

ՀՐԱՆՏ—Երկրորդ ի՞նչ:

ԱՆՆԱ—Անհամ խօսակցութիւններ... օհ,  
ինչպէս չեմ սիրում, որ մարդու հարցաքննում  
են, «ուր էիր գնացել, ինչու ուշացար»... Ա-  
տելով ատում եմ այդ տեսակ ոստիկանական  
խուզարկութիւնները, որ սպանում են մարդու  
մէջ ամեն անհատականութիւն:

ՀՐԱՆՏ—Խօսում ե՞ն, ովքեր:

ԱՆՆԱ—Մերհնք, տանեցիք:

ՀՐԱՆՏ—(Հեղնանքով) Զերտնք, տանեցիք,  
ձեր այդ երեսի պարոնները, որ ժամը 12-ին  
են միայն գալիս գրասենեակ, և որոնց պատ-

ճառով ձեր գործերը քանի գնում, վատա-  
նում են:

ԱՆՆԱ—(Զարմացած) Վատանում են. ի՞նչ-  
պէս:

ՀՐԱՆՏ—Այսպէս, ինչպէս սովորաբար վա-  
տանում են փող վատանողների գործերը:

ԱՆՆԱ—(Հնդարմացած) իրաւ:

ՀՐԱՆՏ—Այս, օրիորդ, այսօր հօրեղբայ-  
րը ինձ հէնց զրա համար էլ կանչել է իր  
մօտ և պահանջել է այն հաշիւները, որտեղ ե-  
րկում է այդ բոլորը:

ԱՆՆԱ—(Քարացած) Միթէ:

ՀՐԱՆՏ—Տարաբաղդաբար այս. և եթէ  
դուք...

ԱՆՆԱ—Ես ի՞նչ:

ՀՐԱՆՏ—Զէք նեղանայ, որ ասեմ:

ԱՆՆԱ—Ոչ, չեմ նեղանայ. ասացէք:

ՀՐԱՆՏ—Եթէ դուք քանի վաղ է չազատէք  
ձեր ժառանգութիւնը, կարող է... (լոռմ է):

ԱՆՆԱ—Կարող է ի՞նչ:

ՀՐԱՆՏ—(Սառը, լուրջ) Կարող է կորսուել:

ԱՆՆԱ—Պարոն Հրանտ, այդ ի՞նչ էք ա-  
սում:

ՀՐԱՆՏ—Ասում եմ այն ինչ որ իսկու-  
թիւնն է. չէք հաւատում, նայեցէք այս թուե-  
րին, որ հաստատում են իմ տածները. օրի-  
նակ՝ անցեալ տարի ձերոնց մուտքն եղել է մօտ

12,000 բուբլի, տան ծախքը՝ 22,000. (պառկա):  
Եւ երբ ամեն անգամ ես տեսնում եմ, թէ ինչպէս  
ձեր հօրեղբօր որդիքը տամանեակ հազարներ վատ-  
նում են անվայել տեղերում՝ միշտ մտածում  
եմ, որ մէկ օր էլ վատնած կըլինեն ձեր ժա-  
ռանգութիւնը, որ մտցըել էք առևտրական տան  
գործի մէջ:

ԱՆՆԱ.—(Համոզուած եւ ծնշուած) Ապա ի՞նչ  
պէտք է անել:

ՀՐԱՆՏ.—Այն պէտք է անէք, որ... (ընդհա-  
տում է, երբ նկատում է, որ Հաջ.-Յակոբը գա-  
լիս է):

## Տ Ե Ս Ի Լ 15

Մտնում է Հաջ.-Յակոբ. (Հրանտը նրան տեսնելուն  
պէս վեր է կենում, բարեւում):

ՀԱՋ. ՅԱԿ.—Արդէն եկել էք. բարկ ձեզ:  
ՀՐԱՆՏ—Բարկ ձեզ (ծեռք է տալիս):  
ՀԱՋ. ՅԱԿ.—Տարեկան հաշիւը պատրաստ է:  
ՀՐԱՆՏ—Այն. համեցէք. (առլիս է տարե-  
կան հաշուեանուը):

ՀԱՋ. ՅԱԿ.—Իսկ միւսը նոյնպէս պատ-  
րաստել էք, որ գնալուց առաջ պատուիրել էի:  
ՀՐԱՆՏ—Այս:

ՀԱՋ. ՅԱԿ.—Նախ նայենք տարեկան հա-

շւը. (Թերթում է, ապա նայում Աննային, որը  
նայում է հաշուեանը) Այս մւը են Շաղիտան  
ու Սոֆիան:

ԱՆՆԱ—Գնացին փողոց:

ՀԱՋ. ՅԱԿ. Փողոց. ինչու:

ԱՆՆԱ—Ամարանոցի պատրաստութիւն տես-  
նելու:

ՀԱՋ. ՅԱԿ.—(Վրդովուած) Ի՞նչ ամարանո-  
ցի պատրաստութիւն է. ես տօնավաճառից նոր  
եմ գալիս, նրանք արդէն ամարանոց են գը-  
նում... լու, դու գնա:

ԱՆՆԱ—(Գնում է մտքերի մէջ):

ՀԱՋ. ՅԱԿ.—Ո՞ր երեսումն է մաս-օգուտի  
հաշիւը:

ՀՐԱՆՏ—Ինսերոբդ. համեցէք.

ՀԱՋ. ՅԱԿ. (Քիչ նայելուց յետոյ սարսա-  
լիած) 17000 բուբլի մաս...

ՀՐԱՆՏ—Այս, 17105 ր. 08 կոպ. մաս:

ՀԱՋ. ՅԱԿ.—(Ծփոթուած) Ի՞նչպէս:  
ՀՐԱՆՏ—Առետրական ծախք եղել է 65218  
ր. 23 կ., մուտք՝ 48113 ր. 15 կոպէկ. մաս  
մօտ 17000 ր., ահաւասիկ և մանրամասն ցու-  
ցակը առևտրական ծախքերի:

ՀԱՋ. ՅԱԿ.—(Երկար նայեով ձեռը տանում  
է պելիսերին, ոլորում, ծգում, վերջը զլուկը պըտ-  
ուացնում ու հառաջում) Իսկ մւը է պատուիրածն  
համեմատական հաշիւը:

ՀՐԱՆՏ—Ահաւասիկ:

ՀԱՅ. ՅԱԿ. Ի՞նչպէս է գործի դրութիւնը:  
ՀՐԱՆՏ—Այս, որ ձեր դրամագլխից հինգ  
տարուայ ընթացքում պակասել է մօտ 143000  
բուբլի:

ՀԱՅ. ՅԱԿ. -Միթէ այդքանի հասել է:

ՀՐԱՆՏ—Այս. նայեցէք, Անտօն Եակովիչը  
իր 50000 բուբլին ծախսելուց զատ՝ պարտք է  
մնացել առևտրական տանը մօտ 30,000 բուբ-  
լի. Ստեփան Եակովիչը ծախսել է համարեա  
իր ամբողջ դրամագլուխը. իսկ Լազար Եակո-  
վիչը ծախսել է իր դրամագլխից մօտ 23,000 բ.

ՀԱՅ. ՅԱԿ. —(Վհատ) Յետնյ:

ՀՐԱՆՏ—Բացի այդ 143,000 բուբլուց, որ  
պակասել է դրամագլխից, ծախսուել է և չորս  
տարուայ ստացած օգուտը:

ՀԱՅ. ՅԱԿ.—Իսկ որքան է եղել չորս տա-  
րուայ օգուտը միասին:

ՀՐԱՆՏ—Մօտ 51,000 բուբլի. այդպիսով  
հինգ տարուայ մէջ ծախսուել է մօտ 197,000  
բուբլի, որը անում է տարենը միջին թուռվ  
40,000 բուբլի:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Ապշած) 197,000 բուբլի...  
գժուելու բան է... (ինքն իրեն) որդոցս վատ-  
նածը... խոռվութեան ժամանակների վնասե-  
րը... միքանի մուշտարիների սնանկանալը...  
գործակատարների գողանալը... այդ բոլորի գի-

մաց բան կըդիմանայ... (Հրանտին) Է՛ն, էլ ի՞նչ  
կայ. իմ այստեղ չեղած ժամանակ ի՞նչ կար,  
ի՞նչ եղաւ:

ՀՐԱՆՏ—(Մնում է լուռ):

ՀԱՅ. ՅԱԿ.—Ի՞նչու էք լուռմ:

ՀՐԱՆՏ—Խնդրում եմ ինձ անյարմար դը-  
րութեան մէջ չդնէք:

ՀԱՅ. ՅԱԿ.—Ի՞նչու:

ՀՐԱՆՏ—Որովհետեւ վերջն իմացուելու է,  
որ ես եմ ասել, և...

ՀԱՅ. ՅԱԿ.—Դուք ասացէք, ոչ ոքից մի  
վախենաք:

ՀՐԱՆՏ—Շատ բանել կատարուեցին:

ՀԱՅ. ՅԱԿ.—Օրինակ,

ՀՐԱՆՏ—Օրինակ՝ Ստեփան Եակովիչը երբ  
մուըհակները տանում էր զեղչելու՝ փողերից  
պակաս էր տուն բերում, թէ տոկոս այնքան է  
վճարել:

ՀԱՅ. ՅԱԿ.—Միթէ:

ՀՐԱՆՏ—Այս. ահաւասիկ իմ ստուգածները:

ՀԱՅ. ՅԱԿ.—Է՞լ:

ՀՐԱՆՏ—Անտօն Եակովիչը ապրանքը ծա-  
խում էր և փողը կասան չէր մտցնում. իսկ  
որպէս զի տարեկան հաշիւը տեղը գայ՝ մնացած  
ապրանքը տարեգլխին աւել էր գնահատել:

ՀԱՅ. ՅԱԿ.—Ուրի՞շ:

ՀՐԱՆՏ—Ձեր գնալուց յետոյ Լազար Եակո-  
վիչը սկսեց մի քանի օր ևս գրասենեակ յաճա-

իւել: Մի անգամ տուինք 1200 րուբլի, որ տանի բանկից մուրհակները դուրս առնի. գնաց, եկաւ յայտնեց, թէ արամվայում փողերը գըրպանից հանել են:

ՀԱՅ. ՅԱԿ.—Ի՞նչեր եմ լոււմ. (զայրացած վեր է կենում, ման զայիս): Ի՞նչ անեմ, համ, ի՞նչպէս անեմ, ինքս էլ չգիտեմ. դուրս եմ գընում՝ այստեղի գործերն են փշանում. այստեղ եմ մնում՝ դրսի գործերն են վատանում. ի՞նչ անեմ:

ՀՐԱՆՏ—Ի՞նչ անէք, (քիչ լրելուց յետոյ, երբ տեսնում է, որ Հաջ. Յակոբը ճայն չի հանում). Եթէ ինձ թոյլ կըտաք՝ ես կատէի, թէ ի՞նչ առնէք:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Սառն եւ քիչ դժգոհ) Ի՞նչ:

ՀՐԱՆՏ—Զեր ամեն մի որդուն տուէք իր հասանելիքը, լիկիդացիս արէք, վերջացրէք:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Սառը եւ կծու) Ի՞նչ, իմ 30 տարուայ ֆիրման վերջացնեեմ...

ՀՐԱՆՏ—Այս ժամանակ գոնէ աղմինիստրացիս արէք, քանի ուշ չէ:

ՀԱՅ. ՅԱԿ.—Ի՞նչ էք ասում. ինձ անկարող հրատարակեմ. ոչ. (դժգոհ դէմք):

ՀՐԱՆՏ—(Քիչ ծնշուած եւ սառը) Ի՞նչպէս կամենաք:

ՀԱՅ. ՅԱԿ.—Հաջի-Յակոբը դեռ մեռած չէ:

ՀՐԱՆՏ—Ուրիշ ոչինչ չունիք ասելու. կարող եմ գնալ:

ՀԱՅ. ՅԱԿ.—Գնացէք. հաշիւները թող մընան:

ՀՐԱՆՏ—Լաւ. ցտեսութիւն:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Բարձր) Մարի, ուղեկցիլ պարուին:

(Մանում է Մարին. Հրանտը և նա գնում են. Հաջ.-Յակոբը կանզնած տեղում մտածկոտ նայում է թուանշաներին և զլուխը տանում-բերում):

## ՏԵՍԻԼ 16.

ՄՏԱԿ ԵԵ ՄԱՐԻ ԵՒ ՔԺԽԵԿՐ

ՄԱՐԻ—(Առաջից զալով) ԲԺԻՇԿՐ:

ՀԱՅ. ՅԱԿ.—ԽՆՂՐԻՇ:

ԲԺԻՇԿ—Ա-ա, Եակով Անտօնիչ, բարե՛ձեզ, արդէն եկել էք:

ՀԱՅ. ՅԱԿ.—Այսօր առաւօտ եկայ:

ԲԺԻՇԿ—Ի՞նչպէս է այժմ ձեր առողջութիւնը:

ՀԱՅ. ՅԱԿ.—Այսքան էլ լաւ. չեմ:

ԲԺԻՇԿ—Դեղերը շարունակում էք:

ՀԱՅ. ՅԱԿ.—Այս... բայց այստեղ (ձեռը դնելով կըծքին) ինչ որ ճնշում եմ զգում:

ԲԺԻՇԿ—Կըգնանք, կլնայեմ:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Գնում են դէպի Արշակի նըն-

ջարանը) իսկ ինչպէս է Արշակի առողջութեւնը:

ԲԺԻՇԿ.—(Զգոյշ տոնով) Թէ այս տկարութիւնը և թէ թոքախտը դժուար թէ կարելի լինի այստեղ բժշկել, հարկու լոր է նրան արտասահման տանել, թերեւ այստեղ մի բան անեն:

ՀԱՅ. ՅԱԿ.—Արտասահման... խեղճ տղաս. (Պոան մօտ) համեցէք խնդրեմ. (մտնում են Արշակի ննջարանը):

### ՏԵՍԻԼ 17.

Մտնում են Շաղիսան, Սոֆիան, Երանց ետեւից երկու գործակատար, որոնցից մեկի ձեռին մի մեծ զամբիւլ, մեջը մանուֆակտուրային իրեր, փեղոյրի երեք մեծ տուփ. միւս գործակատարի ձեռին երկու զամբիւլ, մեկի մեջ լիքր ակրաս, միւսի մեջ ըստ փարարած:

ՇԱՂԻՏԱՆ.—ԲԵՐԷՔ, այստեղ բերէք, այսպէս եկէք:

ՍՈՖԻԱ.—Զգոյշ, չջարդէք. այսպէս, այստեղ բերէք:

(Գործակատարները մտնում են, հանում են զամբիւլից իրերը, դնում սեղանի վրա):

### ՏԵՍԻԼ 18

Մտնում է Ա.Անան

ԱՆՆԱ.—Այդ ինչքան բան էք առել, մայրիկ, սեղանը սար է դառել:

ՍՈՓԻԱ.—Ինչ որ հարկաւոր էր՝ համարեաբուն առանք:

ԱՆՆԱ.—Սրանք ինչ են: (Ցոյց է տալիս մի քանի փաթաթած կտոր):

ՇԱՂԻՏԱՆ.—Եյս երեքը շորցու է ինձ համար, այս երեքը՝ Սոֆիայի համար, այս երկուն էլ քեզ համար, ամառուայ բարակ կտորներ են:

ԱՆՆԱ.—Ես չեի ուզում, մայրիկ, ինչո՞ւ առաք, մի սպիտակ բատիստի կտոր ինձ բաւական էր:

ՇԱՂԻՏԱՆ.—Ինչո՞ւ համար. նշանադրուելու աղջիկ ես. լաւ պիտի հազնուես, մարդիկ ինչ կասեն:

ԱՆՆԱ.—Ես մարդկանց ասածին չեմ նայում:

ՍՈՓԻԱ.—Սրանք էլ սպիտակեղէնի համար թանկագին քաթան են:

ՇԱՂԻՏԱՆ.—(Գործակատարին) Բոլորը բերիք, բան չմոռացաք:

I ԳՈՐԾԱԿ. — Բոլորը. սրանք էլ կոշիկներ են, որ հարկանի աշկերտը բերեց մեր խանութը: (Տալիս է 4—5 արկու կոշիկների): Սրանք էլ, խնդրեմ, հաշիւները:

II ԳՈՐԾԱԿ. (Գնում է):

ՇԱՂԻՏԱՆ.—Հաշիւները. բոլորը միասին մըքան է:

I ԳՈՐԾԱԿ. — Մօտ 350 բուբիկ:

**ՇԱՂԻՏԱՆ**—Լաւ, մնա:

Ի ԳՈՐԾԱԿ. — Տիկին, խաղէինս ինդրեց, եւ  
թէ կարելի է առաջուայ 200 բուբլու հաշիւը  
մաքրէք:

**ՇԱՂԻՏԱՆ**—Լաւ, կուղարկենք, դու գնա:

Ի ԳՈՐԾԱԿ. — Յտեսութիւն. (պուկ է տա-  
լիս, զնում է):

**ՇԱՂԻՏԱՆ**—(Աննային) Հօրեղբայրդ վեր կա-  
ցել է:

ԱՆՆԱ—Այո:

ՍՈՖԻԱ—Որտեղ է այժմ հայրիկը:

ԱՆՆԱ—Նոր բժշկի հետ միասին մտան Ար-  
շակի սենեակը:

ՍՈՖԻԱ—Ա-ա, բժիշկն արդէն եկել է:

(Շասպով նա եւ Շաղիտան հանուն են զլսարկ-  
ներն ու վերարկուները. մհնչ այն ներս են մտնում  
Հաջ. Յակոբը եւ բժիշկը):

## Յ Ե Ս Ւ Բ Լ 19

ԲԺԻՇԿ—Բարե ձեզ տիկին Շաղիտան, տի-  
կին Սնֆիա:

**ՇԱՂԻՏԱՆ**—Բարե ձեզ պարոն բժիշկ:

ՍՈՖԻԱ—Բարե ձեզ:

ԲԺԻՇԿ—(Ուրախ) Այս ի՞նչ պատրաստու-  
թեան մէջ էք:

**ՇԱՂԻՏԱՆ**—Ամարանոց ենք պնալու, պարէն,  
բժիշկ:

ԲԺԻՇԿ—հսկ դուք, եակով Անտօնիչ, գլ-  
նալու չէք:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Զապած զայրոյթով) Զգիտեմ,  
տեսնենք:

**ՇԱՂԻՏԱՆ**—(Բժշկին, ցածր) Պարնն բժիշկ,  
համոզեցէք, ինդրեմ, որ ինքն էլ գայ:

ԲԺԻՇԿ—(Ցածր, Շաղիտային) Նրա գայն  
աւելի քան կարևոր է, տիկին: (Ցածր) Եակով  
Անտօնիչ, լաւ կանէք, որ դուք էլ գնաք. սաս-  
տիկ վաստակած էք. ձեզ ևս հանգիստ և մա-  
քուր օդ է հարկաւոր:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Նեարդային, զապած) Կաշիա-  
տեմ:

ԲԺԻՇԿ—(Ժամացոյցին նայելով) Յտեսու-  
թիւն ձեզ:

ՍՈՖԻԱ—Յտեսութիւն (զնում է բժշկի ե-  
տելից դէպի լուով):

ՀԱՅ. ՅԱԿ. — { Երթաք բարով:  
**ՇԱՂԻՏԱՆ**—}

ՀԱՅ. ՅԱԿ.—(Խիստ զըզոռած) Ասում է  
«հանգիստ է հարկաւոր». Էլ ի՞նչ հանգիստ, քա-  
նի որ տարին-տասներկու ամիս այս տեսակ  
բաներ եմ տեսնում. մէկ չէք նայում իմ գոր-  
ծի գրութիւնը, դուք ձեզը շարունակում էք...  
իմ ձախորդութեան օրերին, կարծես, դիտմամբ

էք անում, որ ինձ գերեզման իջեցնէք: Կիջնեմ,  
անհոգ կացէք, կիջնեմ, միայն ձեզ համար վաս  
կըլինի: Հրէն, բժիշկը Արշակի համար առում է,  
որ դժուար է նրան այստեղ բժշկելը, հարկա-  
ւոր ուղարկել արտասահման. ասացէք, ինչով  
ուղարկեմ:

**ՇԱՂԻՑԱ.**—Որ ասել է, որդիդ է, ի հարկէ  
պէտք է ուղարկես:

**ՀԱԶ. ՅԱԿ.**—Նրան ուղարկեմ, ձեզ ուղար-  
կեմ...

**ՇԱՂԻՑԱ.**—Ի՞նչ անենք հապա, ամարանոց  
չեթանք:

**ՀԱԶ. ՅԱԿ.**—Մի տարի էլ մի գնաք. ինչ  
կըլինի:

**ՇԱՂԻՑԱ.**—Ի՞նչպէս կարելի է. հապա երե-  
խաները այս շոքին...

**ՀԱԶ. ՅԱԿ.**—(Խիստ զայրացած) Տօ ինչու  
չի կարելի:

**ՇԱՂԻՑԱ.**—Բա ամօթ չէ քեզ համար, որ  
քո կինը ամառանոց չգնայ. ի՞նչ կասեն մար-  
դիկ. ի՞նչ է մտածելու հէնց մեր հարևանի կինը,  
Մարթա-խանումը, որ ինքը գնայ, ես չգնամ.  
Չի ասի, թէ աղքատացել են, որ ամարանոց  
չեն գնում:

**ՀԱԶ. ՅԱԿ.**—(Խիստ կուպիտ) Տօ գլուխը  
քարը, թէ կասէ:

**ՇԱՂԻՑԱ.**—Զէ, ես այդ իմ անուանս չեմ  
ուտեցնի:

**ՍՈՖԻԱ.**—(Յածը, Շաղիտային) Մայրիկ, մի  
նեղացնիր. ի՞նչ անենք հիմա, այս տարի էլ  
չգնանք:

**ՀԱԶ. ՅԱԿ.**—(Գազազած) Ա՛խ, կնիկմարդ,  
ի՞նչ կըլինէր, որ կեանքիդ մէջ գոնէ մի անգամ  
մանէիր իմ դրութեան մէջ. հարցնէիր, իմացիր...  
միշտ ծախսել ես՝ իսկի չես հարցըել, թէ որ-  
տեղից: Ի՞նչպէս ինքդ ես՝ այնպէս էլ որդոցդ  
կըթեցիր... Քանդեցիք ինձ, կատարեալ քանդե-  
ցիք (իրերից մի երկուն առնում է, զարնում  
գետին, ու ինքը նեղացած ընկնում է աթո-  
ռին):

սպիտակած մազեր, հագին ունի հին, սրուած կոստիւմ, մազերը սանրած են ալտ-մուժիկ, աչքերը ոչ բարի են ոչ խելօք. երեսին հերոսաբար տնկուած է մեծ քիթը): Իմացել ես կազար Եակովիչը ինչ է արել:

ՀՐԱՆՏ—Ո՞չ, չեմ իմացել. ի՞նչ է արել:

ՏԻԳՐԱՆ—Զիգրշառում երեկ 500 բուբի է տանուլ առել:

ՀՐԱՆՏ—Ելի՛. բայց այս անգամ աւելի քիչ է տարուել:

ՏԻԳՐԱՆ—Իսկ ծերունի հայրը տկար տեղովր, կողէկներ աշխատելու համար՝ տօնավաճառն է քարշ գալիս:

(Առում է հեռախօսի ձայնը):

ՏԻԳՐԱՆ—(Մօտենալով հեռախօսին) Լուսեմ, ով. Անտօն Եակովիչը. սպասեցէք գործարնը նայեմ (վայր է զնում փողը):

ՀՐԱՆՏ—Ո՞վ է. ի՞նչ է:

ՏԻԳՐԱՆ—Հաջի-Յակոբն է. Անտօն Եակովիչին է հարցնում, ի՞նչ ասեմ:

ՀՐԱՆՏ—Ասա, որ գործարանումն էր, քիչ առաջ գնացել է գործի:

ՏԻԳՐԱՆ—Դարձեալ սուտ:

ՀՐԱՆՏ—Ի՞նչ արած, եթէ ասենք այստեղ չէ՝ հայրը բարկանալու է վրան, իսկ նա գալու, դարձեալ մեզ հետ է կոռելու:

ՏԻԳՐԱՆ—(Փողը դնելով ականջին) Եակով Անտօնիչ, դժւք էք. Անտօն Եակովիչը այստեղ

## ԵՐԿՐՈՐԴ Ա.ՐԱ.Ր

Սարեանների գրասենեակը. բեմը պատուարով մէջ-տեղից բաժանուած է երկու մասի. միջի պատի (պատուարի) մէջ տեղը կայ դուռ, որ երկու սենեակը միացնում է իրար հետ.—կարինէտ և գրասենեակ. I գրասենեակը դէպի գուբում ունի մի դուռ, կայ կանտօրիա, որի վրա պարապում է հաշուապահ Հրանտը. հաշուապահի աջ կողմը՝ պատի հետ (անկիւնում) դըրուած է գրքերի պահարան. կանտօրկայի դիմացը կայ հասարակ գրասենդան, որի վրա պարապում է գործակատար Տիգրանը. կայ հեռախօսի ապարատ. պատերին խփած են կեռիկներ, որոնցից քաշ են արած հաշիւներ. պահարանի դիմացը, անկիւնում երկաթէ կասսա: II կարինետում կայ գրասենդան, նրա դիմացը և ետեր 3 բազկաթոռ (կլեօնկայէ երես) կարինեաի ետեր մասում բազմոց, գրա առաջ կոլոր սեղան և 2 բազկաթոռ. պատերի հետ աթոռներ: Առաւոտ է:

## Տ Ե Ս Ւ Բ Լ 1

Հրանտ եւ Տիգրան նստած պարապում են

ՏԻԳՐԱՆ—(Արեից և քամուց ծեծկուած երես. կարձ, բայց խիտ և անկանոն մօրուք, այտերի հետ

էր, քիչ առաջ գնացել է գործի (փողը դնում է տեղը):

## ՏԵՍԻԼ 2

Մտնում է վարպետը

**ՎԱՐՊԵՏ**—(Գլխաբաց, խոխ մազեր, քիչ մրոտ դէմք, ձիթոտած կալոյտ վերնաշապիկ և սև մաշուած վարտիկ. առանց գօտու, երեսին հազիւ երեսում է մըրոտ մօրուքը. զայրացկոտ աշքեր): Շարժիչ մեքենան փչացել է, սաստիկ վատ է բանում, եթէ շուտով նորոգել չտանք՝ մի քանի օրից բոլորովին կանաչտքանայ. Ի՞նչ անեմ, կանգնեցնեմ աշխատանքը:

**ՀՐԱՆՏ**—Ես չեմ կարող այդ մասին կարգադրութիւն անել.

**ՎԱՐՊԵՏ**—Եթէ կանգնեցնեմ բանուորների մի մասին պիտի արձակեմ և նրանք իրենց 2 շաբաթուայ օրավարձն ստանալու են, իսկ եթէ շարունակեմ վախենում եւ մեքենան ջարդուի ու վաս հասցնի բանուորներին:

**ՏԻԳՐԱՆ**—Կարծեմ լաւ է, պարոն Հրանտ, առ ժամանակ շարունակել գործը, մինչև իրենք պարուները կըգան:

**ՀՐԱՆՏ**—Արդէն ժամը 11-ին մօտ է՝ դեռ ոչոք չէ եկել:

**ՎԱՐՊԵՏ**—(Գլխարկը ձեռքի մէջ ճխտելով)

Այս մի շաբաթ է, քանի անգամ է ասում եմ իրենց, թէ շարժիչը փչացել է, նորոգել տուէք՝ ուշադրութիւն դարձնող չէ լինում. եթէ բանուորներին մի վաս պատահի, ես պատավանատու չեմ:

**ՀՐԱՆՏ**—Փոքր ինչ սպասեցէք, հիմա մէկն ու մէկը կըգան:

**ՎԱՐՊԵՏ**—Ուր է, թէ գալիս են. գան էլ, ասում ես, մտիկ անող չի լինում. այս տեսակ խազէյիններ կըլինեն... Հա, մէկ էլ բանուորները հմրցնում են, այս շաբաթ փող ստանալու են. ասում են «մի ամիս է ոռճիկ չենք ստանում, գործադնուկ կանենք»: Սաստիկ կատաղած են. եթէ այս անգամ էլ ուշացնէք՝ փող չտաք՝ չգիտեմ էլ ինչ է լինելու:

**ՀՐԱՆՏ**—Լաւ, կըգան ես իրենց կասեմ:

**ՎԱՐՊԵՏ**—Ինչքան ուզում եմ հանգստացնել՝ չի լինում. ասում են «զու խազէյինների կողմն ես պահում, մեզ խարում ես»:

**ՀՐԱՆՏ**—(Սառը) Լաւ, ես կասեմ:

**ՎԱՐՊԵՏ**—(Պատրաստուելով զնալու) Երէկ էլ փողի համար քիչ մնաց դեսեատնիկին պիտի սպանէին (զնում է):

**ՀՐԱՆՏ**—Իսկ երէկ լազար Եակովիչը ձիարշաւում 500 ր. է տանուլ տուել:

**ՏԻԳՐԱՆ**—Խելք եմ ասում, է է...

### ՏԵՍԻԼ 3.

ՄՏԱԿ և Աննան մեջ մասին մուլ էք:  
ՀՐԱՆՏ—Օ՛հ, օրիորդ Աննա, այդ գոհք էք  
(վեր է կենում, ոիմատրում):

ԱՆՆԱ—(Շփոթուած) Բարե ձեզ:

ՀՐԱՆՏ—(Թովիչ) Բարի եկաք:

ԱՆՆԱ—(Մոտենալով Հրանտին) Պարհն  
Հրանտ, ես եկել եմ ձեզ մօտ մի շատ կարևոր  
գործի մասին խօսելու:

ՀՐԱՆՏ—Կարեռ գործ. խնդրեմ. (Հրանտ  
բում է կարինէտ):

ԱՆՆԱ—(Մտնելով եւ արագ-արագ շնչելով)  
Խօսենք, քանի գեռ չեն եկել:

ՀՐԱՆՏ—Հրամայեցէք. նստեցէք:

ԱՆՆԱ—Գիտէք, պարոն Հրանտ, բանն ի՞նչ  
ուրեմն է:

ՀՐԱՆՏ—Ո՛չ, չգիտեմ. ի՞նչ կայ (նստում  
են):

ԱՆՆԱ—Զգիտեմ որտեղից հօրեղբայրս իմացել է, որ Անտօն Եակովիչը, իբր, նրա տօնավաճառում եղած ժամանակ, թղթախաղում մի ահազին գումար է տանուել տուել, և փող չունենալու պատճառով մուրհակներ է ստորագրել.  
այսօր հօրեղբայրը սաստիկ վշացած մտածում  
էր այդ մասին և մայրիկի հետ վրդովուած խօ-

սում: Գուշք այդ մասին որեւէ բան լուիլ էք:  
ՀՐԱՆՏ—(Սառը, հանգիստ) Ո՛չ թէ լսել եմ,  
այլ գիտեմ:  
ԱՆՆԱ—(Սարսափած ըիշ ծշալով) Ինչէս.

Ուրեմն ճիշտ է:

ՀՐԱՆՏ—Տարաբաղդաբար՝ այս:

ԱՆՆԱ—Դուք ի՞նչ կերպ իմացաք:

ՀՐԱՆՏ—Պատահմամբ կարդացի:

ԱՆՆԱ—Ի՞նչը կարդացիք:

ՀՐԱՆՏ—Այն նամակը, որ սրանից մի քանի օր առաջ ուղարկուած էր Անտօն Եակովիչի անունով, բայց հասցէն խառն էր զբած, ես կարծեցի, թէ Եակով Անտօնիչի անունով է՝  
բաց արի:

ԱՆՆԱ—Ցետոյ:

ՀՐԱՆՏ—Ցետոյ այն ի՞նչ որ ասացիք:

ԱՆՆԱ—(Վշտայի, ծնչուած) Ուրեմն այդպէս...  
ճիշտ է եղել... խեղճ հօրեղբայր...

ՀՐԱՆՏ—Բայց գիտէք ի՞նչ կայ, օրիորդ  
Աննա:

ԱՆՆԱ—(Մթափուած, սպասելով թէ ի՞նչ պիտի լսէ) Ի՞նչ:

ՀՐԱՆՏ—Կարծես ես մի բան նախազգում  
էի, որ ձեզ ասում էի, թէ աշխատեցէք օր առաջ ազատել ձեր ժառանգութիւնը. ով գիտէ,  
թերևս այն ժամանակ դուք իմ ասածները վերագրում էիք մի ուրիշ բանի:

ԱՆՆԱ—(Ազդու եւ շեշտակի) Պարոն Հրանտ  
(կանգնում է):

ՀՐԱՆՏ—(Վեր կենալով) Ներեցէք, ես են-  
թագրում էի:

ԱՆՆԱ—(Յանդիմանօրէն) Ինչու համար էք  
այդպէս ասում, միթէ երբ և իցէ ես կասկա-  
ծել եմ ձեզ վրա. չէ որ ես լիովին հաւատացել  
եմ ձեզ, եթէ չլինէր իմ այդ հաւատը, միթէ  
ես կըդայի այստեղ:

ՀՐԱՆՏ—(Սիրալի) Անչափ շնորհապարտ եմ:

ԱՆՆԱ—Իմացէք, պարոն Հրանտ, այդ հա-  
ւատն է, որ ներշնչել է իմ մէջ խորը յար-  
գանք,.. եթէ դուք ևս լինէիք հասարակական  
գործերից հեռու մէկը և զբաղուէիք լոկ գծուծ  
հաշիւներով՝ այն ժամանակ ինչով պիտի կա-  
րողանայինք վաստակել իմ համակրանքը...

ՀՐԱՆՏ—(Յուզուած) Իհարկէ, ոչընչով:

ԱՆՆԱ—Չէ որ մեր այս ամայի կեանքում  
ես գաղափարական մարդ էի որոնում, որոնեցի  
և գտայ, գտայ այդ ձեր մէջ. ուրեմն էլ ինչու  
համար չպիտի հաւատամ ձեզ:

ՀՐԱՆՏ—Ներեցէք, խնդրում եմ, օրիորդ  
Աննա, որ ես այդ տեսակ հարց տուի. բայց  
հաւատացէք՝ հարցրի այն պատճառով, որ երբ  
ես ձեզ յայտնեցի ձերոնց գործերի մասին՝ դուք  
կասկածով վերաբերուեցիք:

ԱՆՆԱ—Այս, ձիշտ է, ես կասկածով վերա-

բերուեցի, որովհետեւ չէի կամենում հաւատալ,  
թէ մերոնց գործերը վատ են գնում, ուզում  
էի խաբել ինձ:

ՀՐԱՆՏ—(Զգացուած) Օ՛հ, որքան առաքինի  
էք դուք, օրիորդ Աննա, որքան բարի և աղ-  
նիւ. (Մօտենում է) այդպէս մաքուք և ամբիծ  
լինելը պատիւ է բերում ձեզ. և ձեր այդ աղ-  
նիւ յատկութիւնն է, որ ներշնչել է գէպի ձեզ...  
(ուզում է զբկել, սակայն զսպում է իրեն. պա-  
ուզա):

ԱՆՆԱ—(Կատակախառն) Զգացուած եմ,  
պարոն (ժպիտ):

ՀՐԱՆՏ—Հետեւեցէք իմ բարեկամական խոր-  
հըրդին, քանի դեռ ուշ չէ՝ աշխատեցէք ազա-  
տել ձեր ժառանգութիւնը:

ԱՆՆԱ—(Վշտացած) Ահ, Տէր Աստուած,  
որքան դառնանում է հոգիս, երբ ես մտածում  
եմ մերոնց մասին... (կասես ինքն-իրեն) Ինչ-  
պէս չէի կամենայ այս ամենը լոել, իմ մանալ...  
(հառաջում է):

ՀՐԱՆՏ—Հոգուս խորքից ցաւում եմ, օ-  
րիորդ Աննա, որ իսկութիւնն ասելով ձեզ աըիս-  
րութեան պատճառ դարձայ, բայց՝ ուրիշ կերպ  
չէի կարող:

ԱՆՆԱ—(Գլուխը կախ) Խեղճ հօրեղբայր.  
Բնչ պիտի անէ...

ՀՐԱՆՏ—Այս, ցաւակի է...

ԱՆՆԱ. — (Սթափուելով) Պարսն Հրանտ, առացէք ինձ պարզ ու անկեղծ, գուք սիրում էք ինձ:

ՀՐԱՆՏ — ամբողջ էութեամբս, իմ հոգու հրեշտակ:

ԱՆՆԱ. — Այն ժամանակ յանուն այդ սիրոյ, խնդրում եմ, մի խնայէք ոչ մի ջանք, աշխատեցէք օգնել հօրեղբօրս. խնդրում եմ...

ՀՐԱՆՏ կաշխատեմ, օրինրդ, կաշխատեմ, բայց դուք այս մի բանը իմացէք, որ ձեր ժառանգութիւնը թողնելով առևտրական տաճն գործերի մէջ դրանով օգնած չէք լինի գործին, այլ իզուր այն կորցրած:

ԱՆՆԱ. — (Յուզուած) Ո՞հ, մի խօսէք այդ մասին այլ ես, խնդրում եմ... ես չեմ կարող տանել... ցտեսութիւն (ուզում է զնալ):

ՀՐԱՆՏ — Յանապահ մոռանայի (դառնալով):

ՀՐԱՆՏ — Հրամայեցէք:

ԱՆՆԱ. — Այն մուրհակների մասին, եթէ պատահի, որ հօրեղբայրս ձեզ հարցնէ՝ դեռ ոչ չինչ չառէք:

ՀՐԱՆՏ — Ձեր խոնարհ ծառան եմ:

ԱՆՆԱ. — Դէ, ցտեսութիւն (զիսով Տիգրանին):

ՀՐԱՆՏ — (Ուղեկցելով մինչի դուռը) Յանութիւն:

ՏԻԳՐԱՆ — Յանութիւն:

(Աննան զնում է):

ՀՐԱՆՏ — (Նստում է տեղը):

ՏԻԳՐԱՆ ինչ աղջիկ էք. խելօք, սիրուն, վաղնվ. այն, մեր տղայ, բերանումդ համ կայ, լաւ որս ես գտել, միայն նայիր, որ ձեռիցդ չխլեն:

ՀՐԱՆՏ — Աւելորդ բաներ մի խօսիր:

ՏԻԳՐԱՆ — Դէ, դէ, ինձ այնքան էլ յիմար մի կարծիր, ես ամեն ինչ հասկանում եմ. ինչ, վախենում ես ձեռիցդ լոլո՞մ. ոչ, անհոգ կաց. ես ով, նա ով. Աննան իմ վրայ նայել անգամ չե կամ ենայ:

ՀՐԱՆՏ — Դէ, հերիք յիմարութիւններ դուրս տաս. Տօնավաճառի հաշիւները պատրամատ են:

ՏԻԳՐԱՆ — Դեռ ոչ:

ՀՐԱՆՏ — Ինչու, քանի օր է ինչ ես շինում:

ՏԻԳՐԱՆ — Միայն երէկ ստացայ հաշիւները:

ՀՐԱՆՏ — Ի՞նչպէս, հաշիւները քեզ մօտ չէին:

ՏԻԳՐԱՆ — Ո՛չ, ճանապարհին երբ բաժանուեցինք Հաջի-Յակոբից՝ նա եկաւ քաղաք, հաշիւները նրա մօտ մնաց. ես գնացի հարևան շիները մեր ապրանքների նմուշները ցոյց տալու:

ՀՐԱՆՏ—Դրան համար ուշացար:  
ՏԻԳՐԱՆ—Այս, բայց ճանապարհին մեծ  
մասը Հաջի-Յակոբի հետ միասին եկանք, միա-  
տեղ, իրար հետ, կողք-կողքի նստած, ինչպէս  
երկու խաղէյիններ, այնքան շատ մարդ կար  
երրորդ կարգի վագոնում:

ՀՐԱՆՏ—(Զարմանքով) ԵՐՐՈՐԴ:

ՏԻԳՐԱՆ—Նմո՞ ես իմանում, որ Հաջի-Յա-  
կոբն երրորդ կարգով է ճանապարհորդում:

ՀՐԱՆՏ—Լսել էի, բայց չէի հաւատում:

ՏԻԳՐԱՆ—Եկանք, ինչպէս երկու խաղէյին-  
ներ, ջնանդամը, գոնէ երկորդ կարգով եկած  
լինէինք՝ կասէի, որ կեանքիս մէջ մի անգամ  
էլ ես եմ խաղէյինութիւն արել:

ՀՐԱՆՏ—Է՛, ինչպէս էր այս տարուայ տօ-  
նականառը:

ՏԻԳՐԱՆ—Շատ վատ, մանաւանդ ինձ հա-  
մար:

ՀՐԱՆՏ—Ի՞նչպէս:

ՏԻԳՐԱՆ—Առաջ եթէ խաղէյինները չէին  
օգտուում, գոնէ գործակատարներն էին օգ-  
տուում, խակ այս տարի ոչ նրանք օգտուեցին,  
ոչ ես. չորս կողմը չորացել էր. կասես Քրիս-  
տոսի անիծած թզենին լինէր:

ՀՐԱՆՏ—(Զարմանքով եւ յանդիմանօրէն)  
Տիգրան, Տիգրան:

ՏԻԳՐԱՆ—Ի՞նչ կայ այդպէս զարմանալու,  
(կանգնում է) աւելի շուտ զարմացիր այն բա-

նի վրայ, որ խաղէյինները տարիներով շահա-  
գործում են իրանց գործակատարներին, ուրիշ  
խօսքով ասած՝ յափշտակում են նրանց աշխա-  
տանքը:

ՀՐԱՆՏ—Այդ դեռ իրաւունք չի տալիս գոր-  
ծակատարներին գողութիւն անելու:

ՏԻԳՐԱՆ—(Բարձր) Իրենք, խաղէյիններն  
են հասցնում գործակատարներին այդ դրու-  
թեան, հասկանում ես, իրենք. փոխեցէք այս  
դրութիւնը, կրփոխուի և այդ:

ՀՐԱՆՏ—Ուղիղ չէ:

ՏԻԳՐԱՆ—Ի՞նչո՞ւ:

ՀՐԱՆՏ—Դուք, գործակատարներդ կարող  
էք կոռուել այդ դրութեան դէմ, միայն մաքուր  
միջոցներով, բայց ոչ գողութեամբ:

ՏԻԳՐԱՆ—Բայց գիտէք, որ իրականութիւնն  
ուրիշ բան է ասում:

ՀՐԱՆՏ—Զեմ տեսնում:

ՏԻԳՐԱՆ—Սպասեցէք, ձեզ մի բան հարց-  
նեմ. դուք գիտէք քանի տարի է, որ ես գոր-  
ծակատար եմ:

ՀՐԱՆՏ—Լսել եմ, մօտ քսան տարի:

ՏԻԳՐԱՆ—Գիտէք, որ ես մինչ օրս ոչ մի  
կոպէկ հաւաքած չունեմ:

ՀՐԱՆՏ—Դրանով ի՞նչ ես ուզում աղել:

ՏԻԳՐԱՆ—Դրանով ուզում եմ ասել այն,  
որ ես ոչ մի կոպէկ հաւաքած չունեմ նրա հա-

մար, որովհետեւ չեմ կարողացել ինայել, իսկ  
չեմ կարողացել խնայել նրա համար, որովհետեւ  
ինձ վարձատրութիւն տուել են այնքան, որքան  
պէտք է եղել գոյութիւնս պահպանելու համար,  
և այդ իմ ստացածս եղել է իմ վերաբերմամբ  
մի տեսակ իւղ, որ քսեն իմ կենդանի մեքենա-  
յին, որպէսզի այդ կենդանի մեքենան պտոյտ  
գայ, պտոյտ գայ և գործէ, և գործէ այն էլ ոչ  
թէ ինձ համար, այլ ինձ գործածող խաղէյինի  
համար, որ ինձ և ինձ պէսներին շահագործել  
է, պարոն հաշուապահ, շահագործել, շահագոր-  
ծել է այնպէս, ինչպէս կառապանը շահագոր-  
ծում է իր ձին. (Նստելով եւ սիրտ քաշելով)  
Էհ, տսենք այդ այնքան էլ քեզ չի վերաբե-  
րում, որովհետեւ դուք...

### ՀՐԱՆՏ—ՄԵՆՔ Ի՞նչ:

ՏԻԳՐԱՆ—Դուք հաշուապահներդ այն չեք,  
ինչ մենք սև աշխատաւորներս, մանաւանդ այն  
(ցոյց տալով գործարանի կողմէն) աշխատող մոխ  
կոյտերը. որովհետեւ դուք ձեր բանն արգէն տե-  
սել էք:

### ՀՐԱՆՏ—(ՀԵՂՆՈՐէՆ) Դու կարծում ես:

ՏԻԳՐԱՆ—(Զաւէշտով) Արի ուղիղն ասա,  
մինչև հիմա մըքան ես հաւաքել:

ՀՐԱՆՏ—(Նեղացած) Է՛, բաւական է յիմա-  
րութիւններ դուրս տաս. բանդ շինիր:

### ՏԻԳՐԱՆ—(Բացականչելով) Լաւ, լաւ,

### ՏԵՍԻԼ 4

Մտնում է Անօնիք զիխով բարեւելով  
ԱՆՏՕՆ—Բարե՛ ձեզ: (Մտնելով կարինէտ,  
կանչում է) Պարոն Հրանտ:  
ՀՐԱՆՏ—Հրամայեցէք:  
ԱՆՏՕՆ—Հայրս այսօր հեռախօսով հօ էլի  
ինձ չհարցրեց:  
ՀՐԱՆՏ—Հարցրեց:  
ԱՆՏՕՆ—Ի՞նչ ասացիք:  
ՀՐԱՆՏ—Ասացինք, որ գործարանումն էիք,  
քիչ առաջ գնացել էք գործի:  
ԱՆՏՕՆ—Համա. լաւ էք արել. իսկ այժմ  
ի՞նչ կայ:

ՀՐԱՆՏ—Գործարանի վարպետն եկել էր,  
գանգատում էր, որ շարժիչ մեքենան փշացել  
է, լաւ չի գործում. հարկաւոր է նորոգել տալ,  
թէ չէ կարող է բանուորներին վաս հասցնել:

ԱՆՏՕՆ—Ահ, վերջին օրերս զլուխս այն-  
քան խառնուած է այն մուըհակների գործով,  
որ չեմ կարող ասել:

ՀՐԱՆՏ—Ախար մինչև շինել-պատրաստելը  
գործը կրկանգնի:

ԱՆՏՕՆ—(Հարեւանցօրէն) Ուրիշ ի՞նչ ճար-  
կայ, երբ բանը այգտեղ է հասել՝ պիտի կանդ-  
նեցնել:

ՀՐԱՆՏ—Լաւ էր երկու շաբաթ առաջիմաց տայինք բանուորներին, հաջիւ տայինք, այժմ երկու շաբաթուայ ոռճիկ պիտի վճարենք:

ԱՆՏՕՆ—Այդ Ստեփան Եակովիչին ասացէք, դա նրա գործն է:

ՀՐԱՆՏ—ՄԵԿ էլ, բանուորներն ուզում են իմանալ՝ այս շաբաթ ոռճիկ ստանալու են, թէ չէ գործադուլ են անելու, ինսպեկտօրին են դիմելու:

ԱՆՏՕՆ—Այդ բոլորը Ստեփան Եակովիչին ասացէք, իսկ այժմ նայեցէք, թէ գրքերով ովքեր են փող պարտ, հաշիւները գրեցէք, ուղարկեցէք փողերն ստանալու:

ՀՐԱՆՏ—Լաւ:

ԱՆՏՕՆ—Դուք այդ առնելիքների ցուցակը Ստեփան Եակովիչին չտաք, ինձ տուէք:

ՀՐԱՆՏ—Շատ լաւ:

ԱՆՏՕՆ—(Ժամացոյցին նայելով) Այժմ ես կը գնամ, եթէ հարցնող լինի՝ ասացէք, որ քիչ յետոյ կը գնամ:

ՀՐԱՆՏ—(Գլխով այոի նշան է անում և դուրս է գալիս կարինէտից):

ԱՆՏՕՆ—(Մինչ ուզում է դուրս գնալ՝ Տիգրանը տալիս է նրան մի նամակ, որ այդ ըովէ բերում են):

ՏԻԳՐԱՆ—Անտօն Եակովիչ, ձեզ նամակ, վրան էլ մակագրուած «խիստ կարեոր» (տալիս է):

ԱՆՏՕՆ—Ումից է. (ըաց է անում) Մեծարդգոյ Անտօն Եակովիչ. այն գումարը, որ պարտ մնացիք մուրհակներով, խոստացաք ամսէ-ամիս զճարել, սակայն այժմ արդէն երկրորդ ամիսն է ոչինչ չէք վճարում. ինձ փող է հարկաւոր, ներեցէք, որ յիշեցնում եմ. եթէ այսօր կամ վաղը չվճարէք՝ իմացէք, որ այլ ևս չպիտի կարողանամ սպասել: Յարգանօք ԶերԱլեքրտ: Յետ գրութեան.—այս երեկոյ ես՝ Միշան և Արտուշը հաւաքուելու ենք ակմբանոց 11 ժամից բակարա խաղալու. եթէ ցանկանում էք՝ համեցէք: Նոյն:

ԱՆՏՕՆ—(Դողդողալով, ճակատո բռնած ընկնում է սեղանին. երկար լրութիւն. շշմած վեր է կենում աթոռից). Պարոն Հրանտ:

ՀՐԱՆՏ—Հրամայեցէք:

ԱՆՏՕՆ—Մի ըովէ, խնդրեմ:

ՀՐԱՆՏ—Այս ըովէիս (մտնում է կարինէտ):

ԱՆՏՕՆ—(Շիփոթուած) Լսեցէք, պարոն Հրանտ, ինչ եմ ասում:

ՀՐԱՆՏ—Խնդրեմ:

ԱՆՏՕՆ—(Նամակը ծնոքում ցոյց տալով) Տեսնում էք, տեսնում էք այս (խօսքը փոխելով եւ նամակը պահելով): Հա, գիտէք, միակ լաւութիւնը, որ կարող էք անել ինձ, այդ այն է, որ եթէ հայրս իմ ստորագրած նամակների մասին ձեզ հարցնէ՝ ասէք, որ ոչինչ չգիտէք:

ՀՐԱՆՏ—(Լուրջ) կաւ:

ԱՆՏՕՆ—Դէ, ես այժմ կը դնամ, մի ժամից էլի այստեղ կը լինեմ (զնում է):

ՀՐԱՆՏ—(Մտնում է գրասենեակ, անցնում է իր տեղը):

ՏԻԳՐԱՆ—Աշա, ինչպէս յոգնել եմ, ինչպէս ձանձրացել այս աշխատանքից, քսան տարի է, ամբողջ քսան տարի... միշտ միևնոյն համարակալը, միևնոյն դեբետ-կրեդիտ գրքերը, միևնոյն չոր թուանշանները, միևնոյն կրկնուսդ կեանքը. երեկոյեան գնա խուցդ քնիր, առաւօտեան վեր կաց, գնա աշխատանքի, ճաշիր, էլի եկ ծառայիր, հետևեալ օրը կրկնիր նոյնը, երրորդ օրը էլի նոյնը, չորրորդ օրը դարձեալ նոյնը, համբողջ 20 տարի նոյնը, նոյնը... Սպանիչ է, սպանիչ... Ախ (հառաչ), եթէ հնար լինէր դուրս գալ այս վիճակից մի նոր նորոգող կեանք մը լունելու, ինչպէս ուրախութեամբ կը ձգէի, կը հեռանայի... բայց ինչ արած, անիծած հացի խնդիրը ձեռքերս ու ոտքերս կապել է:

ՀՐԱՆՏ—Հացի խնդիրը քի՞չ բան է. նա է բարեկամ, որ մեզ զեկավարում, և ոչ թէ մենք նրան, մանաւանդ կեանքի մէջ մեզպէս թոյլերը:

ՏԻԳՐԱՆ—Եւ մենք, այսինքն ես և ինձպէսները պիտի ասենք, թէ այս աշխարհում ապրում ենք: Ոչ բարեկամ, մենք չենք ապ-

րում, այլ՝ միայն, ինչպէս խոտ բանում ենք և թառամում, անմասն մնալով կեանքի խրախանքին: (Սիրտը քաշելով) այս, ճիշտ որ մենք աշխարհի խորթ զաւակներն ենք. միայն հաւասար ծնւռում ենք, հաւասար մեռնում, անհաւասար ապղելով:

ՀՐԱՆՏ—Նոր բան գիտես նոր բան ասա, դա հին երգ է:

ՏԻԳՐԱՆ—(Ծնշուած) Հին, բայց միշտ նոր: ՀՐԱՆՏ—(Մեղմ տոնով) Բանդ շնիր, բանդ, շատ փիլիսոփայութիւն մի՛ անիր:

ՏԻԳՐԱՆ—Աշխատենք, եղայլ, աշխատենք. մեր բաժինն անվերջ աշխատանքն է. թող Տիգրաններն աշխատեն, որ Լազարները վատնեն... այդպէս է ժամանակիս մորայլը:

## ՏԵՍԻԼ 5

Մտնում և Սեկիանը զայրացած

ՄՏԵՓԱՆ—(Կանգնելով Հրանտի առջեւ) Դուք գործ չունէք:

ՀՐԱՆՏ—Ինչու համար էք հարցնում:

ՄՏԵՓԱՆ—Նշանակում է գործ չունէք, որ լրագիր էք կարդում:

ՀՐԱՆՏ—Կարդում ես, միևնոյն ժամանակ և գործ եմ շինում:

**ՍՏԵՓԱՆ**—Տեսնում եմ ինչպէս էք շինում:

**ՀՐԱՆՏ**—(Կծու) Զէք հաւանում ուրիշը հրաւիրեցէք:

**ՍՏԵՓԱՆ**—Դուք որ հեռանաք, ապա հօրս էլ ով պէտք է դանոսներ անէ:

**ՀՐԱՆՏ**—(Զայրոյթով) Դուք գիտէք ինչ էք ասում:

**ՍՏԵՓԱՆ**—(Բարձր) Այն, գիտեմ. գիտեմ, որ հօրս դուք էք յայտնել զեղչած մուրհակների փողից պակաս տուն բերել:

**ՀՐԱՆՏ**—(Քիչ շիրթուած) Այդ նա ինքը գիտէր:

**ՍՏԵՓԱՆ**—(Կատաղի) Անւտ էք ասում. դուք ինքներդ էք ասել, մինչև անգամ ցոյց էք տուել թուերը: Այսօր ձեր ջնորհիւ, մեր տանն ահագին պատերազմ կար:

**ՀՐԱՆՏ**—Ես մեղաւոր չեմ, որ դուք իրար հետ կուռում էք:

**ՍՏԵՓԱՆ**—Մեղաւոր էք, այն էլ շատ, որովհետեւ, դուք, պարոն հասարակական գործիչ, եագոյի պէս մտել էք մեր տուն՝ մեզ իրար գցելու, իրար հետ կոռւեցնելու, գործը կործանելու... որպէս զի գրանով ձեր նպատակին հասնէք:

**ՀՐԱՆՏ**—Ի՞նչ նպատակ:

**ՍՏԵՓԱՆ**—Ինքներդ ինձանից լաւ գիտէք.

բայց ինչ որ մտածում էք՝ լինելու չէ, իմացէք, քանի որ ես կամ:

**ՀՐԱՆՏ**—Ես թոյլ չեմ տայ ձեզ այդ աեւականերով ինձ հետ խօսելու:

**ՍՏԵՓԱՆ**—Իսկ ես թոյլ չեմ տայ ձեզ ուրիշ ընտանիքի մէջ մտնելու, որոմներ ցանելու, և այդ ընտանիքի անունն ամեն տեղ վարկարեկ անելու:

**ՀՐԱՆՏ**—(Կանչելով) Բաւական է:

**ՍՏԵՓԱՆ**—(Կատաղի) Զհամարձակուէք իմ դէմ այդպէս գոռալ, ցած (մտնում է կարինէտ):

**ՀՐԱՆՏ**—Աւելի ցածը դնեք էք (տեղից դուրս գալով): Հոտած բուրժուաներ... Այլ ևս չարժէ այս տեսակ մարդկանց մօտ ծառայելը (զվարկն առնում է, ենում դուրս դուրը շրիակցնելով):

**ՏԻԳՐԱՆ**—(Յետեւից մազալու նայուածքով) Ըմբռմ... սրան են ասել «կացինը քարիս առաւ»... (Լսում է հեռախօսի ծայն. սօտենալով վողը դնելով ականջին) լսում եմ. ով. Ազուել փեան բանկ. հա. ի՞նչ, մուրհակը. ինչքան, 2500 ըուբլի. այս. ի՞նչ, նօտամը. լաւ. այս բոպէիս. ըուբլի. այս. ի՞նչ, նօտամը. լաւ. այս բոպէիս: Ազուել բանկից, Ստեն (մտնում է կարինէտ): Ազուել բանկից, Ստեն եակովիչ, յայտնում են, որ ժամը 2-ին մօտ է. եթէ 2500 ըուբլու մուրհակն այսօր էլ չթափենք նօտար են ուղարկելու:

**ՍՏԵՓԱՆ** — Ի՞նչպէս անեմ, հա, այնքան վազեցի, մի հազար ըուբլի հազիւ ճարեցի, մնացածը որտեղից գտնեմ: Դու կասսայումդ որքան փող ունես:

**ՏԻԳՐԱՆ** — Մի հարիւր ըուբլի:

**ՍՏԵՓԱՆ** — (Զարմացած) երէկ երեկոյ հինգ հարիւր ըուբլի կար, ի՞նչ եղաւ:

**ՏԻԳՐԱՆ** — Մի հարիւր ըուբլի դժւք վերցրիք:

**ՍՏԵՓԱՆ** — Մնացած չորս հարիւրը:

**ՏԻԳՐԱՆ** — երկու հարիւր ըուբլի էլ Անտօն եակովիչը վերցրեց:

**ՍՏԵՓԱՆ** — Անտօն Եակովիչը. էլի՞ քեզ քմափ անդամ առել եմ, թէ առանց հօրս գիտութեան ոչոքի փող չտաս:

**ՏԻԳՐԱՆ** — Վերցնում են, Ստեփան Եակովիչ, գալիս զօրով վերցնում են, ես ի՞նչ կարող եմ անել:

**ՍՏԵՓԱՆ** — Մնացած երկու հարիւր ըուբլի՞ն:

**ՏԻԳՐԱՆ** — Այն էլ առաւօտ վաղ ձեր մայրը մարդ էր ուղարկել, պահանջել էր մի հարիւր ըուբլի, նրան տուի: Դեռ այն մնացած մի հարիւր ըուբլին էլ Լազար Եակովիչն էր ուզում վերցնել, ասացի՝ կասսայում փող չկայ:

**ՍՏԵՓԱՆ** — (Հեղնանքով, դառն) Լաւ, լաւ, (Տոնը փոխելով) ի՞նչ անեմ, հա, որտեղից դըտ-

նեմ, ինքս էլ չգիտե՞ (մտնում է կարինէտ դուռ փակում):

## ՏԵՍԻԼ

Մտնում է Զարուհին

**ԶԱՐՈՒՀԻ** — (Միջահասակ, նիհար կին. երեսին վաղահաս կնճիռներ. դալուկ ձուածն դէմք, յունական քիթ. ինքը թիւպէմ. հազած ունի հասարակ, բայց վայելուչ և ճաշակաւոր, մազերն անփոյթ զետեղուած են լայնեզր փեղոյրի տակ. խօսում է զդայնացած, նուաղած): Ստեփան Եակովիչն այստեղ է:

**ՏԻԳՐԱՆ** — Այն, ի՞նչ էք հրամայում:

**ԶԱՐՈՒՀԻ** — Ուզում եմ տեսնել:

**ՍՏԵՓԱՆ** — (Զայնից ծանաչելով, կարինէտի դուն արանքից Տիգրանին) Ասա այժմ ժամանակ չունի (նստում է տեղում):

**ՏԻԳՐԱՆ** — Նա այժմ ժամանակ չունի, տիկին:

**ԶԱՐՈՒՀԻ** — (Անհամարձակ, կարինէտի դուռը բաց անելով) Կարելի՞ է:

**ՍՏԵՓԱՆ** — (Վեր կենալով) Ա-ա, տիկին Զարուհի, այդ դժւք էք, ներողութիւն, որ ձեզ չըպիտի կարողանամ ընդունել. շտապում եմ, յետոյ համեցէք:

**ԶԱՐՈՒՀԻ** — (Թախանձով) Մի քանի ըոպէով, ինդուում եմ:

— 70 —

ԱՏԵՓԱՆ—(Դոնից) Տիգրան, դու գնա, ճաշելու ժամանակ է:

ՏԻԳՐԱՆ—(Տարօրինակ նայելով կարինէաի կողմը զնում է զուրս):

ԶԱՐՈՒՀԻՑԻ—Ներողութիւն եմ խնդրում, որ ձեր կամքին հակառակ ներս մտայ... բայց ի՞նչ անեմ, քանի ժամանակ է՝ սպասելով մաշուեցի. Աստղիկս շարունակ քո անունն է տալիս. ասացի ինքս գնամ, քանի որ դուք չեք գալիս: ԱՏԵՓԱՆ—Վերջին ժամանակներս այնքան զբաղուած էի, տիկին, որ ամենաին ժամանակ չունէի:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—(Տիսով, վշտոտ) Ժամանակ չունէիք... իհարկէ... իսկ իմ տանն իմ աղջկայ հետ ուտելիսելու, զուարձանալու, սիրաբանելու ժամանակ ունէիք...

ԱՏԵՓԱՆ—(Առնուած) Այս... բայց այդ ուտելիսմեն իմ վրա աժան չեր նստում. ամեն մի դալուս քսաներեսուն ըուբլի էր ծախսում:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—Մեղ ի՞նչ օգուտ, որդի, այդ քսաներեսուն ըուբլուց, քանի որ դուք այդ ձեր քէֆի համար էիք անում:

ԱՏԵՓԱՆ—Ապա այն իմ բերած իրե՞րը. այժմ ձեր ատար մի ասեղ չեք գտնի, մի կոճակ, նոյն իսկ մի քորոց, որ իմ փողով առնուած չլինի.

ամբողջ երկու տարի է տունդ պահում էի. դեռ էլի բան էք ասում:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—Այդպէս մի ասէք, Ստեփան Եակովիչ, չէ որ իմ տունս դարձրել էիք ձեր գերդաստանը:

ԱՏԵՓԱՆ—Ուրեմն, փոխարէնն ստացել էք: ԶԱՐՈՒՀԻՑԻ—(Թոյլ, չղային) Ապա իմ մինուճար աղջիկը, որին ձեր հարսնացուն դարձրիք, երկու տարի հետն ապրեցիք այն պայմանով, որ վերջը հետն ամուսնանաք. չէ որ նա շուտով մայր է դառնալու:

ԱՏԵՓԱՆ—Երբ հնարաւորութիւն ունենամ կամուսնանամ:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—Իսկ դուք հնարաւորութիւն երբ էք ունենալու:

ԱՏԵՓԱՆ—Երբ ծնողներս համաձայնեն:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—Ստեփան Եակովիչ, դուք շարունակ այդ էք ասում. վերջապէս ձեր ծնողներն երբ են համաձայնելու. գուցէ նրանք նոյն ոչինչ չգիտեն այդ մասին, ուրեմն իմ աղիկն այդպէս մնալու է:

ԱՏԵՓԱՆ—Ի՞նչպէս անեմ, ապա, ինքներդ ասացէք, որ առանց ծնողներիս կամքին չեմ կարող:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—Այդ մասին ինչնու առաջ չելք մտածում:

ՍՏԵՓԱՆՆ—Նրանք անյարմար են համարում  
հասարակ ընտանիքից աղջիկ ուզելը:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—(Խիստ ծնշուած) Եթէ այդպէս  
էր՝ ապա էլ ինչու համար ձեր կեանքը կապեցիք  
իմ աղջկայ հետ. նրան ուրիշ ուզող կար. ին-  
չու չթողիք աղջիկս նրան տալու, ասելով, որ  
եթէ ծնողներս չհամաձայնեն էլ՝ ես նրանցից  
կըբաժանուեմ, առանձին բնակարան կըփարձեմ,  
Աստղիկի հետ կըպսակուեմ:

ՍՏԵՓԱՆՆ—Այս, ասացի, բայց հանգամանք-  
ներն այնպէս դասաւորուեցին, որ բաժանուելն  
անհնար եղաւ:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—(Յուստհատ) Ապա հիմա ես  
ինչ անեմ, ասացէք, որ ջուրն ընկնեմ:

ՍՏԵՓԱՆՆ—(Անփոյթ) Սպասեցէք փոքր ժա-  
մանակ ես, մինչև տեսնենք ինչպէս կըլինի:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—(Աղաչանքով) Համբերել այլս  
անկարելի է, հասկացէք, աղջկաս օրերը մօտե-  
ցել են, նա շուտով մայր է դառնալու. ամօթը  
մեզ կըսպանէ...

ՍՏԵՓԱՆՆ—Դրա դէմ ես ինչ կարող եմ ա-  
նել:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—Եթէ չէիք կարող, ապա էլ ին-  
չու մեզ հասցրիք այս զբութեան. ինչ  
կըլինի մեր վիճակը, Աստուած իմ, ինչ կըլի-  
նի... ես կըմեռնեմ ամօթից... (լաց է լինում):

ՍՏԵՓԱՆՆ—Տիկին Զարուհի, հանգստացէք,  
ինդրեմ:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—(Ուժգին) Ես ինչպէս կարող եմ  
հանգստանալ, քանի որ իմ միակ յոյս ու  
ապաւէնս նա էր, թէ մարդու կըսամ, կըբաղ-  
դաւորացնեմ, ես էլ մի կտոր հաց կունե-  
նամ, կըմիսիթարուեմ... Այժմ ամեն ինչ  
կորած է... նա փողոց է շպրտուելու, ես վըշ-  
տից ու ամօթից կորչելու եմ... Խեղճ որբուկս  
(սաստիկ լալիս է):

ՍՏԵՓԱՆՆ—Հանգստացէք, տիկին, այդպէս  
չի կարելի:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—(Հասաչելով) Ամեն անգամ, երբ  
միտս է ընկնում, որ ես իմ ձեռքով թոյլ տու-  
այդ բանն իմ տան մէջ կատարելու՝ արխանս  
գլուխու է խփում և կակծից քիչ է մնում, թէ  
խելագարուեմ:

ՍՏԵՓԱՆՆ—Ի սէր Աստծոյ, տիկին, հան-  
գստացէք, բաւական է. կարող է մարդ ներս  
դալ. կըգամ ձեզ մօտ, այնտեղ կըխօսենք:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—Դուք ամեն անգամ այդպէս  
խօսք էք տախս, բայց չէք դալիս:

ՍՏԵՓԱՆՆ—Կըգամ, այս անգամ անպատճառ  
կըգամ:

ԶԱՐՈՒՀԻՑԻ—(Ուժասպան) Ա՛խ, դուք ան-  
գնութ մարդ, ուզում էք այստեղից հեռանամ,  
որ այլս չգաք:

**ՍՏԵՓԱՆ** — Ազնիւ խօսք։  
ԶԱՐՈՒՀԻՑԻ — (Հանգստացած) Լաւ, ես հաւա-  
տում եմ ձեր աղնիւ խօսքին, կը գնամ. միայն  
իսկ թրիստոսի, եթէ սիրում էք ձեր աղիդ-  
ների արել, մեռեների շիրիմերն, եկեք, խըդ-  
ճացէք Աստղիկիս. ամբողջ օրը լացով նա ձեզ  
է սպասում։

**ՍՏԵՓԱՆ** — Հաւատացացած եղէք, որ կը գամ։  
(Պառզա) Գուցէ փողի կարիք ունիք, համեցէք  
խնդրեմ այս հարիւր բուրլին։  
ԶԱՐՈՒՀԻՑԻ — Ո՞չ, չեմ ուզում. պահեցէք ձեզ  
ձեր փողը, նրա փոխարէն տուէք մեզ մեր պա-  
տիւր, ես կօրհնեմ ձեր կեանքը (Ելում է  
դուրս):

**ՍՏԵՓԱՆ** — (Ուղեկցելով մինչեւ դուրս, զա-  
լիս ընկնում է սեղանին, զլուկն առնում ձեւքե-  
րի մէջ) Օ՞հ, ի՞նչ ծանը է այս ամենը, ի՞նչ  
սոսկալի...

## ՏԵՍԻԼ 7

Մտնում է Անօնիք

**ԱՆՏՕՆ** — (Կանգ առնելով պրան մօտ եւ եր-  
կար ժամանակ եղածը նայելով) Հը՞, ի՞նչ է  
եղել։

**ՍՏԵՓԱՆ** — (Նկատելով եղածը ներկայութիւնը)  
Քեզ ի՞նչ։  
**ԱՆՏՕՆ** — (Հեղնօրէն) Ի՞նձ, ի՞նչ. . . Ո՞վ էր

այն կինը, որ այնպէս յուզուած դուրս գնաց  
սենեակից։

**ՍՏԵՓԱՆ** — (Զայրացած) Ամեն ինչ պիտի  
իմանամս, ի՞նչ է։

**ԱՆՏՕՆ** — Հա, երկի նա էլ կը լինի մէկն  
այն բազմաթիւ կանանցից, որոնք քո զբաղմուն-  
քի առարկաներն են։

**ՍՏԵՓԱՆ** — (Ոտքի թռչելով) Զհամարձակուեն։

**ԱՆՏՕՆ** — Դէ, դէ, խելքով գլուխու հաւաքիր.  
(Ատեատ է զնում. Լաւում է հեռախոսի ծայնը. Փողը  
դնում է ականջին) Ի՞նչ, որտեղից. Ազովեան  
բանկ. Փողը պիտի բերչնք, թէ ո՞չ. այս բո-  
պէիս։ (Փողը վայր դնելով, երկու քայլ դէպի Ստե-  
փանն արած) Ստեփան, Ազովեան բանկից են  
խօսում. ասում են մուրհակ կայ թափելու, փո-  
ղի են սպասում։

**ՍՏԵՓԱՆ** — Եյդ ես վազուց գիտեմ. գնա ի-  
մացիր, որ առաւօտ վաղ եկել կասսայից 200  
բուբլի ես վերցըել։

**ԱՆՏՕՆ** — Ի՞նչ պիտի անենք, հա։

**ՍՏԵՓԱՆ** — Ես մի հազար բուբլի ճարել եմ։

**ԱՆՏՕՆ** — Իսկ մնացած հազար հինգ հարիւր  
բուբլի։

**ՍՏԵՓԱՆ** — (Կծու) Գնա, տես կարող ես մի  
բակարա...»

**ԱՆՏՕՆ** — (Ընդհատելով) Լեզուդ քեզ պահիր,  
յիմար...»

ՍՏԵՓԱՆ—Թղթամոլ, անպէտք...

ԱՆՏՈՆ—Իսկ դժւ, անառակ, անբարոյական...

### ՏԵՍԻԼ 8

Մանում և Լազար

ԼԱԶԱՐ—(Մինչ այդ ցածր շվուացնելով ներս  
է մտնում, լսելով եղբայրների կոփր կանգնում՝ է  
դուն մօտ, ականջ դնում, ապա առաջ գալիս) ԹԵՂ-  
թամոլ, անառակ... Ո՞չ, ո՞չ, սխալ էք. երկուսդ  
էլ լաւ էք:

ՍՏԵՓԱՆ—(Յանկարծ բոնկած) Էլի եկա՞ր  
դու, թափառական:

ԼԱԶԱՐ—Դէ, դէ, . ի՞նչ ես բղաւում. սա  
գրասենեակ է:

ՍՏԵՓԱՆ—(Մօտ զնալով Լազարին) Երէկ  
մրտեղ էիր, ասա:

ԼԱԶԱՐ—ՔԵզ ի՞նչ:

ՍՏԵՓԱՆ—Զիարշաւ էիր զնացել, հա:

ԼԱԶԱՐ—Ասենք զնացել էի, յետոյ ի՞նչ:

ՍՏԵՓԱՆ—Յետոյ այն, որ տոտալիզմասոր  
ես խաղացել, 500 ըուբլի ես տարուել:

ԼԱԶԱՐ—Ո՞վ ասաց:

ՍՏԵՓԱՆ—Տեսնողը:

ԼԱԶԱՐ—Մուտ է:

ՍՏԵՓԱՆ—Մուտ է, հա, ապա սա ի՞նչ է

(բաճկոնի գրպանից հանում է ձիարշակ տոմսերը,  
ցոյց է տալիս) սրանք մւմ գրպանից են:

ԼԱԶԱՐ—(Կատաղի) Դա ի՞նչ ցածութիւն է  
ուրիշի գրպանից բան գողանալը...

ՍՏԵՓԱՆ—Ի՞նչ... (Ուզում է խփել):

ԼԱԶԱՐ—(Բարձրացնում է փայտը եղբօր  
վրայ):

(Յանկարծ ներս է մտնում Հաջի-Յակոբ):

### ՏԵՍԻԼ 9

ԱՆՏՈՆ—Մաեփան, հայրիկը:

ՍՏԵՓԱՆ—(Աթոռը ծեռին) Ա՞հ (մսում է  
տեղում մեխուած):

ՀԱՅ. ՅԱԿ.—Այդ ի՞նչ էք անում:

ԼԱԶԱՐ—Ռւզում էր ինձ խփել, հայրիկ:

ՀԱՅ. ՅԱԿ.—Ի՞նչու, էլի ի՞նչ է եղել.

ՍՏԵՓԱՆ—(Աթոռը զաթնելով գետին) Դէ,  
ի՞նչպէս շխիես այդպիսի (սրիկային, որ երէկ  
ձիարշաւում 500 ըուբլի է տանուլ տուել):

ՀԱՅ. ՅԱԿ.—Ի՞նչ ասացիր. 500 ըուբլի...

ԼԱԶԱՐ—Մուտ է ասում, հայրիկ...

ՍՏԵՓԱՆ—Ահա կենդանի վկաները (հօրը  
ցոյց է տալիս տոմսերը). ես այստեղ 2500  
ըուբլու մուրհակ ունենամ դուրս առնելու, փող  
չունենամ, իսկ սա ձիարշաւում 500 ըուբլի  
տարուի:

ՀԱՅ. ՅԱԿ.—Բայց սրտեղից է սրան 500  
ըուբլի:

ԱՆՏՕՆ—Ինչպէս երկում է այն 1200 ըուբ-  
լուց կը լինի, որ մի անգամ տարաւ բանկից  
մուրհակ դուրս առնելու, յետոյ եկաւ յայտնեց,  
թէ ճանապարհին գրպանից հանել են:

ՀԱՅ. ՅԱԿ.—Ա-ա, ուրեմն այդ ճիշտ է ե-  
ղել. փուչ, փուչ զաւակ. փշանայիր, չծնուեիր:

ԼԱԶԱՐ—Ի՞նչ, հայրիկ, ամեն անգամ ինձ  
ես տեսնում:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Զայրացած) Դու գեռ հա-  
ճամարձակւում ես խօսել, համարձակւում ես  
հօրդ պատասխան տալ. կորի, կորի աշքից,  
այստեղից հեռացիր, քեզ չտեսնեմ:

ԼԱԶԱՐ—Լաւ, կերթամ, հայրիկ, կը հեռա-  
նամ. մեր հեռանալը հիմա հօ չէ ձեզանից.  
մենք մեր ծնուած օրից հեռացած ենք եղել  
ձեզանից:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Առաջ շարժուելով թուն) Դու  
գեռ համարձակւում ես ինձ նախատել, թշուա-  
ռական. դու այլ ևս իմ որդին չես. հեռացիր  
այստեղից:

ԼԱԶԱՐ—Կը հեռանամ, կը հեռանամ. թող  
լաւ որդիքդ մօտդ մնան, որոնք, Աստուած գի-  
տէ, թէ ի՞նչ են... (ղոտը շրիկացնելով ելնում է  
դուրս):

ՀԱՅ. ՅԱԿ.—Ահ, ժամանակ, ժամանակ...

որդին վեր կենար, հօրը նախատել... (վաս է  
զգում իրեն):

ԱՆՏՈՆ—(Մօտ գնալով) Նրա պատճառով  
քեզ մի յուղիր, հայրիկ:

ՀԱՅ. ՅԱԿ.—Փուչ լինէր, փուչ...

ԱՆՏՕՆ—Հանգստացիր, հայրիկ:

ՀԱՅ. ՅԱԿ.—Ինչպէս հանգստանամ, քանի  
որ 2500 ըուբլու մուրհակն անգամ անկարող  
եմ թափել. Հայի-Յակոբը ողջ-ողջ գերեզման  
մտնէր, լաւ չէր:

ԱՆՏՈՆ—Ես կը ճարեմ, հայրիկ, դրա հա-  
մար մի մտածիր. երեկ 1000 ըուբլի ստա-  
ցայ ծախածս ապրանքի կանխափճարը. 1500  
ըուբլին էլ մի կերպ կը գտնեմ (զնում է):

ՀԱՅ. ՅԱԿ.—(Նրա ետելից) Դարձեալ դու,  
Ստեփան, որդիս, դարձեալ դու:

ԱՆՏՕՆ—Ես էլ գնամ, հայրիկ:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Հրամայողական) Ո՛չ, դու  
կաց. քեզ հետ կարեոր գործ ունեմ խօսելու.  
նստիր:

ԱՆՏՕՆ—Հասկանալով բանն ինչումն է, որը  
խոր նստում է:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Մի քանի վայրկեան որդու  
երեսին նայելուց յետոյ) Այդ ի՞նչ ես արել  
դու... (մնում է որդու երեսին նայելիս):

ԱՆՏՕՆ—(Քարացած մնում է հօր դիմաց  
նստած):

ՎԱՐԱԳՈՅՑ

պով տեսնելով Անտօնին, կանգ է առնում  
սանդուխը (վիսին) դու դեռ գրասենեակ չես  
գնացել:

**ԱՆՏՕՆ**—(Սովիային տեսնելուն պէս փոքր  
ինչ կանգ է առնում) Սիրտ կայ որ գնամ:

**ՍՈՅԻԱՆ**—Ինչու, ի՞նչ է եղել:

**ԱՆՏՕՆ**—Սրանից աւել էլ ի՞նչ լինի:

**ՍՈՅԻԱՆ**—Ոչինչ չեմ հասկանում:

**ԼԵՒՈՆԻԿ**—Ահա, բնեցի. (իբրև թէ թիթեռ  
է բռնում, զնում, նստում է ծօճանակին ու ըս-  
կում հետախուզել):

**ԱՆՏՕՆ**—(Կարեկցական տոնով) Ա՛խ, Սո-  
ֆիա, այլ ևս անկարող եմ տանել. գրութիւնն  
ինձ խեղդում է. աղաչում եմ, օգնիք ինձ:

**ՍՈՅԻԱՆ**—(Սարսափով) Ի՞նչ է պատահել:

**ԱՆՏՕՆ**—(Ողբի տոնով) Եթէ դու չօգնես՝  
ոչ միայն ես, այլ և ինձ հետ մեր օջախը կոր-  
ծանուած է:

**ՍՈՅԻԱՆ**—Ի՞նչ է, ասա:

**ԼԵՒՈՆԻԿ**—Վայ. թլաւ (վեր է կենում նո-  
րից վազում թիթեռ բռնելու):

**ԱՆՏՕՆ**—Երէկ հայրս ինձ այնպէս սպառ-  
նաց, այնպէս նախատեց գրասենեակում, որ  
ինձ համար մահուան հաւասար էր. նա ինձ  
տանից դռւրս կանէ, հայրական ժառանգութիւ-  
նից կըզրէ, եթէ ես...

**ՍՈՅԻԱՆ**—Այդ ի՞նչ է, որ ինձանից ծածուկ է:

## ԵՐՐՈՐԴ ԱՐԱՐ

Հաջի-Յակոբի տան պարտէզը. ետևում՝ աջ կողմում  
տունը, որ ունի առաջը պատշգամբ, որպիսին միքա-  
նի աստիճաններով իջնում է պարտէզ. ետևի մասում,  
գէպի փողոցի կողը, ցանկապատ՝ իր գոնակով. բեմի  
ձախ կողմը ճօճանակ, նրա մօտ նստարան, ծառեր։  
Պարտէզի աջ կողմը վարդի թփեր. պարտէզի մէջը՝  
քիչ աջ կոլոր սեղան 3 աթոռով, նրա մօտ ծաղկա-  
նոց։ Ամառուայ սկիզբն է, կէս օրին մօտ։

### ՏԵՍԻԼ

Անօօն եւ Լեւոնիկ, յետոյ Սոֆիա

**ԱՆՏՕՆ**—(Ծխելով ման է գալիս ընկճուած,  
յուսահատ. մերթ ճակատն է շփում, մերթ հառաջում):

**ԼԵՒՈՆԻԿ**—(Նախ վազվառում է ցանցը ձեռին  
թիթեռ բռնելու):

**ՍՈՅԻԱՆ**—(Ներսից) Լեռնիկ, Լեռնիկ (դուզս  
զալով) Լեռնիկ։

**ԼԵՒՈՆԻԿ**—Այստեղ եմ մայլիկ։

**ՍՈՅԻԱՆ**—Եկ կաթդ... (անսպասելի կեր-

ԱՆՏՕՆ - (Զեղջ տոնով) Ես քեզ մինչև  
այժմ ոչինչ չեմ ասել, բայց այլու անկարող  
եմ պահել:

ՍՈՅԻԱՄ - Ի՞նչ է. ոչինչ չեմ հասկանում:

ԱՆՏՕՆ - Աղաջում եմ, առոր ինձ ունեցածդ  
գումարն, ազատիք ինձ կործանումից:

ՍՈՅԻԱՄ - (Սարսափով նրա աշքերին նայե-  
լով) Էլի տարուել ես, համ. պարտք ես մնացել:

ԱՆՏՕՆ - (Լոռում է, չէ իմանում ինչպէս  
յայտնէ):

ՍՈՅԻԱՄ - Կոմմ ես... մեմ ես պարտք մնա-  
ցել:

ԱՆՏՕՆ - (Ճնշուած) Ալթերտին:

ՍՈՅԻԱՄ - (Ճշալով) Ալթերտին. այն շուլե-  
րին. ահ, դու թշուառական. ուրեմն ճիշտ է ե-  
նոնել, որ ասում էին. հապա դու ինձ հանգըս-  
տացնում էիր, որ սուտ է, այդ տեսակ բան  
չկայ:

ԱՆՏՕՆ - Այս, ես խարում էի քեզ հանգըս-  
տացնելու համար, յուսալով, թէ կըտանեմ թըդ-  
թախաղում, կամ որևէ տեղից կրծարեմ, կը  
վճարեմ, սակայն ոչինչ չեղաւ:

ՍՈՅԻԱՄ - Լիոնիկ, գնա տուն, կաթդ խմիր.  
շնուռ, այս բոպէիս:

ԼԵՒՈՆԻԿ - (Տըտոնջով) Հըն... թիթելը  
թլաւ... (գնում է):

ԱՆՏՕՆ - Այժմ Ալթերտն սպառնում է

մուրհակը պրոտեստ անել տալ, դատարան ներ-  
կայացնել:

ՍՈՅԻԱՄ - (Յուզուած սանդուխից ցած իշնե-  
լով) Անամօթ, անամօթ... ինչու համար էիր  
անում, որ այդ տեսակ դրութեան մէջ ընկնէիր.  
քանի անգամ քեզ խնդրեցի, աղաշեցի, որ ետ  
կենաս այդ ախտից՝ սակայն՝ չլսեցիր. այժմ  
տեսամբ քեզ ուր հասցրեց թղթախաղը:

ԱՆՏՕՆ - Սոֆիա, (ուզում է չորել) խնայիր,  
ինձ, մի թողնիր կործանուելու:

ՍՈՅԻԱՄ (Անտօնին հեռացնելով իրանից) Հե-  
ռացիր ինձանից, թղթամոլ. չես էլ ամաշում...  
հայրական ստացած բաժինն կերար, իմ օժիտի  
մի մասը փչացրիր բաւական չէ, այժմս էլ ու-  
զում ես որդոցդ բաղդը փչացնել:

ԱՆՏՕՆ - (Աղերսանքով) Սոֆիա, Սոֆիա,  
աղաջում եմ, եթէ ինձ չես խղճում, գոնէ ծե-  
րունի հօրս խղճա:

ՍՈՅԻԱՄ - Անկարելի է:

ԱՆՏՕՆ - Սոֆիա, Սոֆիա (չորում է) օգնիր  
ինձ, քրկիր ինձ... (վեր է կինում):

ՍՈՅԻԱՄ - Ես իմ բերած օժիտով պարտա-  
կան չեմ ձեր օջախի մասին մտածելու. ես զա-  
ւակներ ունեմ. նրանք այսօր-վաղը մեծանալու,  
ուսում են ուզելու, հաց են ուզելու, ես նրանց  
մասին պարտական եմ մտածել. վերջապէս ես  
իրաւունք չունեմ:

ԱՆՏՕՆ—Ես կը գնամ, հայրիկիդ կը լին զրեմ։  
ՍՈՅԻԱՄ—(Ուժգին) Զհամարձակուեմ։  
ԱՆՏՕՆ—(Խեղճացած) Սովիա, միթէ խղճա-  
լու չես ինձ։

ՍՈՅԻԱՄ—Քեզպէսներին խղճալը յանցանք է։  
ԱՆՏՕՆ—Զէ որ խնդրողը քո ամուսինդ է,  
քո որդոց հայրը։

ՍՈՅԻԱՄ—Դու ինչ ամուսին ես եղել ինձ  
համար... ասա՞. Երբ եմ ես քեզ հետ ուրախ  
ժամանակ անցկացրել. դու միշտ դուրսն ես  
թափառել, իսկ ես տանը նստած ճանապարհո  
եմ նայել։

ԱՆՏՕՆ—(Բոնելով Սովիայի ձեռը) Սովիա։  
ՍՈՅԻԱՄ—(Ուժգին) Թող ինձ։  
ԱՆՏՕՆ—Խնդրում եմ ես քեզ իբրև ամու-  
սին։

ՍՈՅԻԱՄ—Քո խնդիրդ վաղուց կորցրել է  
իր նշանակութիւնը (ուզում է զնալ)։

ԱՆՏՕՆ—(Յուսահատ, ճնշուած) Ուրեմն պի-  
տի թողնես, որ ես կործանուեմ։

ՍՈՅԻԱՄ—(Նախատինքով) Զարմանում եմ  
քո խղճիդ վրայ, որ զաւակներիդ ձեռից ուղում  
ես խլել նրանց ունեցածը՝ մի շուլերի, մի  
սրիկայի տալու համար. և դու չես ամաչում  
դեռ քեզ հայր կոչել... թշուառական... (զնում է  
ոչպի դուռը, բարձրանալով սանդուխքով)։

ԱՆՏՕՆ—(Ետելից զնալով) Ապա ես ի՞նչ  
անեմ, առա։

ՍՈՅԻԱՄ—(Ետ դառնալով) Ինչ անեմ. գնա  
խեղութիր... (կծու) բայց դու այդքան քաջու-  
թիւն ունիս, ոզորմելի... թուղթը քո մէջ մեռ-  
յրել է ամեն ինչ... (զնում է)։

ԱՆՏՕՆ—(Ետելից զնալով յուսահատ, ծշալով)  
Սովիա, Սովիա։

ՍՈՅԻԱՄ—(Արհամարհանքով) Հեռացիր ինձա-  
նից, ապիկար։

ԱՆՏՕՆ—(Մնացած մենակ անել դրութեան  
մէջ, զժուածի նման ծեռքերը, ճակատը շինելով ման  
է զալիս, պայոյտներ զործում. յանկարծ անսպասելի  
կերպով լուսմ է Հաջի-Յակոբի ծայնը, որից նա  
ցնցուելով խելազարի նման դուրս է վազում)։

## ՏԵՍԻԼ 2

ՄՏԾՈՒՄ ԵՅ ՇԱՐԺՏԱԲ ԵՒ ՀԱՅԻ-ՅԱԿՈԲ

ՇԱՅԻՑԱՄ—(Դոնից դէպի պատշգամի զալով)  
Աննա, Մարիին ասա սուրբն այստեղ բերէ, դու  
էլ նախաճաշը բեր։

ԱՆՆԱ—(Ներսից) Լաւ։

ՀԱՅ. ՅԱԿ.—(Սանդուխքով իշնելով) Ինդա-  
մենը մի ամիս հեռացայ քաղաքից՝ ամեն ինչ  
տակն ու վրայ եղաւ. չկարողացան բանուորնե-  
րին իր ժամանակին ոռճիկ տալ, բանը դոր-

ծաղութի հասցըին... այդ դեռ ոչինչ՝ մեքենա-  
յապետի օգնականի աջ թեր մնացել է մեքե-  
նայի տակ, ճխլտուել, այժմ ապահովութիւն է  
պահանջում. ինչ անեմ, ինքս էլ չգիտեմ...

**ՇԱՂԻՏԱՆ.**—Ոչինչ. դու մի մտածիր. Աս-  
տուած ողորմած է. ամեն ինչ լաւ կըլինի. ես  
ֆալճուն նայել տուել եմ:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—Ախ, որդիք, որդիք. ի՞նչ կի-  
նէր գոնէ մէկը ձեզանից, մէկը ի՞նձ քաշէր, ոէր  
ունենար գէպի գործը, օջախս պահպանէր:

**ՇԱՂԻՏԱՆ.**—Ելի կըլինի, մի յուսահատուիր:  
**ՀԱՂ. ՅԱԿ.**—Այնքան փող ծախսեցի, ուսման  
տուի, մինչև անգամ տանն առանձին ուսուցիչ  
վարձեցի՝ ոչինչ դուրս չեկաւ:

**ՇԱՂԻՏԱՆ.**—Ի՞նչ արած, պարտականութիւնդ  
է կատարել ես:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—Պարտականութիւն... իսկ ով  
է իմ վերաբերմամբ իր պարտականութիւնը կա-  
տարել. 15 տարեկան հօրիցս որբ մնացի. ոչ  
ուսում, ոչ ուսուցիչ. մտայ գործակատար, կո-  
պէկներ հաւաքելով կարողութիւն ձեռք բերի,  
կասես, նրա համար, որ գրանք, այդ ուսում ա-  
ռածները վատնէին... Մէկ լաւ միտք արա-  
գժուելու բան է:

**ՇԱՂԻՏԱՆ.**—Հիմա ի՞նչ պիտի միտք անես,  
հօ մենակ քո որդիքը չեն այդպէս. այժմ ողջ  
աշխարհն է այդ տեսակ:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—Որ հայրերն աշխատեն, որդի-  
քը վատնեն, համ: Զէ, Շաղիտա, մեր ժամանակն  
այդպէս չէր. մեր ժամանակն, եթէ հայրերը կա-  
րողութիւն էին թողնում՝ որդիքը շահեցնում  
էին այն. իսկ այժմ՝ հայրերը դեռ չմեռած՝ որ-  
դիքն արդէն նրանց կարողութիւնը փչացրած  
են լինում: (Պառլզա) Զէ, չարժէ այժմեան ժա-  
մանակի որդոցը կարողութիւն թողնելը:

**ՇԱՂԻՏԱՆ.**—Ինչ էլ որ լինի՝ որդիքդ են,  
Հաջի-Յակոբ, մի ասիր, մարդուս մահուանից  
յետոյ օրհնող կըլինեն:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—Մինոյն է, վերջն այն էլ են  
փչացնելու. ամենից լաւը ոչինչ չթողնելն է, որ  
իրենք աշխատեն, իրենք փողի դադրը իմանան:

**ՇԱՂԻՏԱՆ.**—Ի՞նչ անենք, հիմա եղածը դժւրս  
շպրտենք:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—Այն մարդը, որ ուրիշի աշ-  
խատանքով ապրեց՝ վերջ չունի:

(Մարին բերում է մատուցարանի վրայ երեք  
գաւաթ սուրճ. նրա հտեից Աննան նախաճաշ: Մարին  
գնում է):

**ՇԱՂԻՏԱՆ.**—Բէր այսպէս, այս սեղանի վրայ:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—Ստեփանն էլ չեկաւ, որ իմա-  
նայինք, թէ ի՞նչ հետեանք ունեցաւ գործադուլը:

**ՇԱՂԻՏԱՆ.**—Խաւիար վերցրու:

**ՀԱՂ. ՅԱԿ.**—Բաւական չէ գործադուլ են  
արել, երկու շաբաթուայ վարձ են ուզում, այ-

և 10% յաւելում են պահանջում. դէ, արի ու  
այդպէսների հետ գործ ունեցիր:

**ՇԱՂԻՑԱՆ.**—(Հաջ. Յակոբին) Բեր կաթի սե-  
րը գաւաթղ ածեմ:

**ՀԱԶ. ՅԱԿ.**—Թալանեցին, անզգամները  
թալանեցին...

**ՇԱՂԻՑԱՆ.**—Անհա, մօտեցիր. Սովիմն ուր է:  
ԱՆՆԱ.—(Նստելով) Նա սեղանատանն է.

զբաղուած է:

**ՀԱԶ. ՅԱԿ.**—Իմ փողով ուզում են ինձ  
հետ ընկեր գառնալ. ո՞րտեղի տեսնուած բան է:

**ՇԱՂԻՑԱՆ.**—Ընկեր, չէ՞ մի հօրս ցաւը...  
պրիստաւին կանչիր թող դրանց կաշին մի լաւ  
խաշէ՝ այն ժամանակ կիմանան... Ընկեր...

**ԱՆՆԱ.**—Մայրիկ, այդպէս խստասիրտ մի  
լինիր. չէ՞ որ նրանք էլ մարդ են... նրանք էլ  
իրենց ցաւերն ու պահանջներն ունեն...

**ՇԱՂԻՑԱՆ.**—(Արհամարհանքով) Հա, դիտեմ  
ինչ տեսակ մարդ են... նրանց ցաւը խմելն է...

(Հաջ. Յակոբը մեղմ նայում է Աննայի երեսին):

## ՏԵՍԻԼ 4

Յանկապատի դունով այլայուած ներս է մտնում  
Ստեփանը

**ՀԱԶ. ՅԱԿ.**—Է՛, ի՞նչ խաբար:

**ՄՏԵՓԱՆ.**—Կատաղութիւնները չափից ան-  
ցել է:

**ՇԱՂԻՑԱՆ.** Ի՞նչ են ուզում այդ բոկոտները:  
ՄՏԵՓԱՆ.—Մեքենայապետի օգնականի ձեռ-  
քը մեքենայի տակ մնալու համար կատաղել  
են, իրենք էլ չգիտեն ի՞նչ են անում:

**ՀԱԶ. ՅԱԿ.**—Չկարողացար հանգստացնել:  
ՄՏԵՓԱՆ.—Ո՞ր մէկին հանգստացնեմ. բո-  
լորը մէկ խօսք են եղել՝ այն տեսակ լեզու են  
գործ ածում, որ անկարելի է լսել:

**ՀԱԶ. ՅԱԿ.**—Յետո՞յ:  
ՄՏԵՓԱՆ.—Յետոյ տեսայ ոչինչ չի լինի՝  
ոստիկանութեան իմաց տուի, եկաւ ցըեց:  
ԱՆՆԱ.—(Մեղմ) Լաւ չէք արել Ստեփան  
եակովիչ:

**ՇԱՂԻՑԱՆ.**—Շատ լաւ է արել. հողեմ դրանց  
անօթի գլուխը:

**ՄՏԵՓԱՆ.**—(Վրդովուած, ցածը) Ես դիտեմ  
դրանց բոլորի պատճառն ով է:

**ՇԱՂԻՑԱՆ.**—Ո՞վ,  
(Այդ ժամանակ անսպասելի կերպով տան դռնից  
մտնում է Մարին, բերում մի համակ, տալիս է Հա-  
ջի-Յակոբին):

**ՄԱՐԻ.**—Եակով Անտօնիչ, Զեղ նամակ. բե-  
րող մարդն ասաց, որ անձամբ ձեզ տամ:

**ՀԱԶ. ՅԱԿ.**—Ումից է:  
**ՄԱՐԻ.**—Զգիտեմ. ի՞նչ որ մարդ բերեց,

դուն մօտ սպասում է. ի՞նչ ասեմ:  
**ՀԱԶ. ՅԱԿ.**—Ասա սպասէ:

**ՍՏԵՓԱՆ** — Սպասեցէք տեսնեմ ով է (զնում՝ է դուրս):

**ՇԱԴԻՑԱ** — Ումից է:

**ՀԱԶ. ՅԱԿ.** — (Նամակը բաց անելով) Մեր հաշուապահից է:

**ՇԱԴԻՑԱ** — Հաշուապահից. Ի՞նչ, չինչ նա էլ դրանց պէս...

**ՀԱԶ. ՀԱԿ.** — (Ընդհատելով կնոջը կարդում է) Մեծարգնյ տէր եակով Անտօնիչ. ներեցէք, որ ես այս օրուանից այլևս չփիտի կարողանամ ձեզ մօտ ծառայել:

**ԱՆՆԱ** — (Գնում նստում է ճօճանակին. նրա գոյնը գնում է. անհանդիս շարժումներ է անում):

**ՀԱԶ. ՅԱԿ.** — (Շարունակում է) Ձեր որդոց վարմունքն ինձ այստեղ հասցրեց. խնդրում եմ կարգադրէք գրքերն ստանան և իմ հաշիւները վերջացնեն: Յարգանօք՝ Հրանտ Մամիկոնեան:

**ՇԱԴԻՑԱ** — (Արհամարհանաքով) Ի՞նչ է զըրում. չի ուզում մնալ...

**ՀԱԶ. ՅԱԿ.** — Այս գնում է... գործերիս մէջ միակ հաւատարիմ և օրինաւոր մարդը (հառաչում է):

**ՇԱԴԻՑԱ** — Գնում է՝ գնա. գրա համար ի՞նչ ես սիրող քաշում. հաշուապահ չկայ, ի՞նչ է:

**ՀԱԶ. ՅԱԿ.** — Կան, այս, կան, բայց նրա պէս չեն:

**ՍՏԵՓԱՆ** — (Ետ զպով) Քաղաքային ցրիչ է. պատասխանի է սպասում:

**ՀԱԶ. ՅԱԿ.** — Ստեփան, այս ի՞նչ է գըում Հրանտը:

**ՍՏԵՓԱՆ** — Զգիտեմ (առնում է նամակը, կարդում. սառն) հրաժարում է:

**ՀԱԶ. ՅԱԿ.** — Հրաժարում է. բայց ի՞նչի, ով է նրան բան ասել:

**ՍՏԵՓԱՆ** — (Սառն) Աչ ոք:

**ՀԱԶ. ՅԱԿ.** — (Յուզուած) Ճիշտ չես ասում. անպատճառ մէկդ ու մէկդ վիրաւորել էք, թէ չէ նա առանց պատճառի չէր հեռանայ:

**ՍՏԵՓԱՆ** — (Զոված) Հաւատան հայրիկ, նրան ոչ ոք չէ վիրաւորել:

**ՀԱԶ. ՅԱԿ.** — Հապա այս նամակին ի՞նչ է:

**ՍՏԵՓԱՆ** — (Յուզուած) Է՞ն, հայրիկ, ես այս քան ժամանակ չէի կամենում վարագոյբը բաց անել, ամեն ի՞նչ ասել, սիրադ վորովել բայց քանի որ այժմ ժամը հասել է՝ ես ստիպուած եմ ասելու:

**ՀԱԶ. ՅԱԿ.** — (Թիրահաւատ) Ի՞նչ է գիտցածդդ:

**ՍՏԵՓԱՆ** — Առաջինն այն, որ այս բոլորը նրա սարքածն է:

**ՀԱԶ. ՅԱԿ.** — (Յանկարծակիի եկածի պէս) Նրան:

**ՍՏԵՓԱՆ** — Այս, նրա:

ՀԱՅ. ՅԱԿ.—Ի՞նչպէս:

ՍՏԵՓԱՆ.—Որովհետեւ նա գնում է՝ ուզում  
է իր սրախ վրէժը լուծել:

ՇԱՂԻՏԱՆ.—Լսում ես Հաջի-Յակոբ:

ՀԱՅ. ՅԱԿ.—Իսկ ինչի՞ է գնում:

ՍՏԵՓԱՆ.—Գնում է նրա համար, որ հաշիւ-  
ներ ունէր. երբ տեսաւ, որ այդ հաշիւներն  
իրագործուելու չեն՝ թողնում է հեռանում. մէկ  
էլ, որ նա լաւ տեղ է գտել:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Բարկացկոտ եւ հետաքրքիր)

Հաշիւներ, ի՞նչ հաշիւներ:

ՍՏԵՓԱՆ.—Անվայել հաշիւներ. թէ չէ նրան  
թակէին էլ՝ դարձեալ չէր հեռանայ:

ՀԱՅ. ՅԱԿ.—Ի՞նչ հաշիւներ, ասա, մի  
պահիր:

ԱՆՆԱՆ.—(Նստած տեղում դարձեալ յուզումներ է  
ցոյց տալիս):

ՍՏԵՓԱՆ.—Կասեմ, եթէ այստեղ ոչ ոքի  
համար վիրաւորական չի լինի:

ԱՆՆԱՆ.—(Սաստիկ յուզում է, ինքն իրեն պա-  
հում, մնում նոյն տեղում):

ՇԱՂԻՏԱՆ.—Ասում ես տեղ էլ է գտել:

ՍՏԵՓԱՆ.—Այո:

ՀԱՅ. ՅԱԿ.—Ո՞րտեղից գիտես:

ՍՏԵՓԱՆ.—Վարձողն ինձ ասաց:

ՀԱՅ. ՅԱԿ.—Վարձողը, (զայրոյթով) դու  
այդ ճիշտ ես ասում:

ՍՏԵՓԱՆ.—Բոլորովին ճիշտ. հարցը էք Աս-  
մակին, որի հետն երեք տարով պայման է կա-  
պել, ամսէնն 250 լ. ոռծիկով:

ՇԱՂԻՏԱՆ.—Տեսամբ ապերախտը. մեր հացով  
մարդ դարձաւ, հիմա...

ՀԱՅ. ՅԱԿ.—(Սարսափով) Պայման... հապա-  
խմ գաղանիքները...

ՇԱՂԻՏԱՆ.—Որ քեզ ասում էի, Հաջի-Յակոբ,  
դրան շատ մի հաւատայ...

ՀԱՅ. ՅԱԿ.—Իսկ այն հաշիւները, որոնց  
պատճառով նա թողնում, հեռանում է:

ՍՏԵՓԱՆ.—(Հպիթ) Նա ուզում էր Աննայի  
20,000 ըուբլուն տէր դառնալ. երբ տեսաւ, որ  
այդ գլուխ չէ գալիս՝ թողեց, հեռացաւ:

ՀԱՅ. ՅԱԿ.—(Տեղից վեր կենալով, մօտ զը-  
նալով Ստեփանին) Աննայի... ի՞նչպէս:

ՍՏԵՓԱՆ.—Ամուսնանալով:  
ՀԱՅ. ՅԱԿ.—(Շփոթուած Շաղիտային) Ի՞նչ  
է ասում:

ԱՆՆԱՆ.—(Վրդովուած մի կողմ է քաշւում):

ՇԱՂԻՏԱՆ.—Ինքդ իմացիր, որ ինձ չէիր լը-  
սում:

ՍՏԵՓԱՆ.—Նա սիրահարուած էր Աննային,  
ուզում էր ամուսնանալ, որ կարողութեանը տէր  
դառնար:

ՇԱՂԻՏԱՆ.—(Ձեռքը ծնկանը զարնելով) Վոյ,  
քոռանամ ես:

ՀԱՅ. ՅԱԿ. — (ԽԾԽՈՒԹ) ԱՆՆԱ, այդ ի՞նչ եմ  
լսում:

ԱՆՆԱ. — Ստեփան Եակովիչ, խնդրեմ, դուք  
կարող էք խօսել միայն հաշուապահի մասին,  
ամենևին ինձ չխառնելով դրա մէջ:

ՀԱՅ. ՅԱԿ. Հապա ի՞նչ է այս, որ լսեցի:

ԱՆՆԱ. — (ՄԵՂՄ, ազդու) Հօրեղբայր, խընդ-  
րում եմ ինձ չհարցաքննէք:

ՍՏԵՓԱՆ. — (ԿԾՈՒ) Գուցէ և Հրանտը սիրա-  
հարուած չէ եղել, այլ այնպէս ցոյց է տուել  
որ...

ԱՆՆԱ. — (ԽԾԽՈՒԹ) Ստեփան Եակովիչ, ես ձեզ  
խնդրում եմ. ես ձեր խնտրիգների առարկան  
չեմ (թողնում հեռանում է պարտիզի խորքը):

ՀԱՅ. ՅԱԿ. — (Զարմացած, որ Աննան այդ-  
պէս պտտասխան է տափս. դառնալով կնոշը)  
Շաղիտա, այս ի՞նչ էր. Աննան այդպէս պա-  
տասխան տար ի՞նձ:

ՀԱՅԻՑԱ. — Անպատճառ մի բան կայ:

ՀԱՅ. ՅԱԿ. — (ԽԾԽՈՒ զայլոյթով) Այս, կայ...  
դրան համար էր ասում, թէ գործերը վերջացրու.  
(գոռալով) այ դու սրիկայ... հիմա ես հաւատում  
եմ, որ այս գործադուն էլ նրա սարքածն է:

ՀԱՅԻՑԱ. — Նա է, հէնց նա. ապա էլ ով  
կարող էր մեր բանուարներին...

ՍՏԵՓԱՆ. — (Մօրն ընդհատելով) Միայն այդ-  
քանը չէ, հայրիկ, ուր որ գնացել է՝ ամեն տեղ

աշխատել է մեղ վարկաբեկ անել, սուտ լուրեր  
տարածել, իբր թէ մեր գործերը վատ են գը-  
նում...

ՀԱՅԻՑԱ. — Որ ասում էի, թէ դրան մի  
հաւատայ, դրա պատճառով որդոցդ հետ մի  
կոռւիր՝ չէիր լսում. այժմ տեսամբ:

ՀԱՅ. ՅԱԿ. — Թուրս արա այդ սրիկային,  
դնւրս, մի թողնիր այլևս գրասենեակ մտնե-  
լու (վատ է զգում իրեն, ընկնում է աթոռին):

ՀԱՅԻՑԱ. — Մի վրդովուիր, Հաջի-Յակոբ:  
ՍՏԵՓԱՆ. — Հանգստացիր, հայրիկ, իսկոյն և-  
եթ ես նրան կարձակեմ:

ՀԱՅ. ՅԱԿ. — Իրաւ որ աշխարհիս երեսին  
շիտակ մարդ չէ մնացել:

## ՏԵՍԻԼ 6

ՄՏՈՒՄ Է ՍՈՖԻԱՆ

ՍՈՖԻԱ. — Եակով Անտօնիչ, հեռախօսով  
խնդրում են գրասենեակից, որ շտապով գնաք:

ՀԱՅ. ՅԱԿ. — Հեռախօսունք... ով է կան-  
չում:

ՍՈՖԻԱ. — Անտօն Եակովիչը:

ՍՏԵՓԱՆ. — Ի՞նչ է պատահել:

ՍՈՖԻԱ. — Ասում է գործարանների վերա-  
տեսուչն եկել է. լաւ է, որ դուք ևս այստեղ  
լինէք (զնում է ներս):

**ՀԱՅ.** ՅԱԿ.—Ստեփան, մի կառք կանչիր:  
**ՇԱՀԻՑԱՆ.** Ես էլ հետդ կըգամ. քաղաքում  
 քիչ գործ ունեմ (զնում՝ են):

**ԱՆՆԱ.** (Դուրս գալով պարտէզի խորքից ըն-  
 կնում է նստարանին եւ վրդովուած կանչում) **Մա-  
 րի,** **Մարի:**

**ՄԱՐԻ**—(Ներսից դուրս վազելով) **Հրամա-  
 յեցէք, օրիորդ:**

**ԱՆՆԱ.** Այն նամակ բերող մարդը գնաց:

**ՄԱՐԻ**—Ո՞չ, դեռ սպասում է:

**ԱՆՆԱ.** Ասա նրան, որ հօրեղբայրու հրան-  
 տին կանչեց, իմացար, ասա, թող այստեղ դայ.  
 շնուտ, շնուտ:

**ՄԱՐԻ**—Այս բոպէիս (հաւաքում է նախա-  
 ձաշի իրերը, տանում):

**ԱՆՆԱ.** (Ընկնելով ամոռին մտախոնում է):

## S E U H L 7

Մտնում է Արշակը

**ԱՐՇԱԿ**—(Կանգ առնելով պատշամքում եւ  
 քիչ յետոյ տեսնելով Աննային) **Աննա,** այդ դժւ  
 ես. այդ ի՞նչ է. դու այդպէս տխուր նստած  
 ես (իշնում է սանդուխքից):

**ԱՆՆԱ.** Այն, ես եմ:

**ԱՐՇԱԿ**—Ի՞նչ է պատահել:

**ԱՆՆԱ.** Այնպէս մի անհաճոյ բան, որ չես  
 կարող երկակայել:

**ԱՐՇԱԿ**—(Առաջ գալով) ի՞նչ:

**ԱՆՆԱ.** Ստեփան Եակովիչը հօրեղբօր ներ-  
 կայութեամբ այն տեսակ խայտառակ բան ա-  
 սաց, այնպիսի անսպասելի բան յայտնեց, որ  
 չգիտէի ի՞նչ անէի:

**ԱՐՇԱԿ**—Երկի հրանտիք մասին:

**ԱՆՆԱ.** Այն, նրա մասին, յայտնեց, որ  
 հեռանում է, այն էլ գիտե՞ս ի՞նչու համար:

**ԱՐՇԱԿ**—Ի՞նչու համար:

**ԱՆՆԱ.** Նրա համար, որ իբր իմ ժառան-  
 գութեան չի կարող տէր գառնալ. լսում ես  
 Արշակ, լսում ես ի՞նչ տեսակ միտք... ուրեմն  
 ես ի՞նչ եմ եղել:

**ԱՐՇԱԿ**—Ո՞՞՞՞, Աննա, արդէն դա չափա-  
 գանց է:

**ԱՆՆԱ.** Իսկ եթէ այդ ճիշտ լինի՝ այն ժա-  
 մանակ ես յուսախաբութիւնից կըխելագար-  
 ուեմ, իմ մէջ կըմեռնի ամեն տեսակ լաւատե-  
 սութիւն ու ձգտում:

**ԱՐՇԱԿ**—Աննա, այդպէս ծայրահեղութեան  
 մէջ մի ընկնիր:

**ԱՆՆԱ.** (Կասես աւելի ինքն-իրեն. մեղմ) **Սիրել,** հաւատալ մէկին և տեսնել, որ այդ  
 մէկը սիրել է քեզ լոկ շահագիտական ձգտումնե-  
 րով՝ դա այնպիսի մի ստորութիւն է, այնպիսի

մի ցածութիւն, որ ոչ մի մարդու արժանապատութիւն չի կարող տանել:

**ԱՐՇԱԿ** — Աննա, եղբօրս ասածը գուցէ սուռ է կամ սխալ. միթէ չգիտես նրա անհամբոյք բնաւորութիւնը, որ շատ անգամ գիտէ լեզուով թունաւորել. ինչո՞ւ համար ես հաւատում և սրտիդ այդքան մօտ ընդունում:

**ԱՆՆԱ** — Զեմ հաւատում ու ինձ թոյլ էլ չեմ տայ այդպէս իսկոյն հաւատալու, բայց (խիստ յուզուած) եթէ այդ ճիշտ լինի...

**ԱՐՇԱԿ** — Նշանակում է դու կասկածում ես:

**ԱՆՆԱ** — (Քիչ մտածելով) Զգիտեմ, կասկածում եմ, թէ ոչ, միայն մի հանգամանք առիթ է տալիս ինձ մտածելու:

**ԱՐՇԱԿ** — Ի՞նչ հանգամանք:

**ԱՆՆԱ** — Այս, որ նա պաշտօնից հրաժարում է:

**ԱՐՇԱԿ** — Իսկապէս:

**ԱՆՆԱ** — Այս, այս բոպէիս նրա ուղարկած նամակը կարգացին:

**ԱՐՇԱԿ** — (Մտքի մէջ ընկնելով) Ա-ա, այժմ արդէն ուրիշ խնդիր է (նստու է ծօծանակի վրա):

**ԱՆՆԱ** — (Ցիուր, մելամաղատ) Ինձ առանց մի խօսք ասելու, առանց իմաց տալու... այս, չեմ ուզում հաւատալ, բայց այդ անտկնկալ

հեռանալուց չեմ կարող չկասկածել... Օ՛հ, որ իմանաս բարկութիւնից — վշտից սիրտս ինչպէս ճմլում է, ինչպէս փշուր-փշուր է լինում...

**ԱՐՇԱԿ** — Աննա, իմ ազնիւ Աննա, այդպիսի մի փոքր պատահար չի կարող մարդու սիրտը փշուր-փշուր անել, ընդհակառակը՝ նա մարդուն կըկուէ, կըկռփէ կեանքում աւելի զօրեղ լինելու. հանգստացիր:

**ԱՆՆԱ** — Ա՛հ, որքան դառն է հիասթափութիւնը, որքան ծանր...

**ԱՐՇԱԿ** — Աննա, եթէ այդ ճիշտ լինէր՝ հոգուս խորքից կըցաւէի հիասթափութեանդ վրա, բայց հանգստացիր, որովհետեւ այդ հիասթափութիւնդ եթէ լինի էլ՝ անցնելու է առանց դառն հետեանքների... Ապա ի՞նչ կանէիր, եթէ իմ տեղս լինէիր... (պառզա) Ա՛հ, երանի իմ կեանքի դիպուածն էլ անցնէր քոնի պէս անփաս... բայց... Օ՛հ, ինչպէս ծակում է կողքս: (Արշակը հազում է: Քամի է բարձրանում):

**ԱՆՆԱ** — Լաւ, մի վրդովուիր իմ պատճառով, ես կըտանեմ այս ամենը, միայն թէ դու մի յուզուիր:

**ԱՐՇԱԿ** — Ա՛հ, Աննա, Աննա, որքան լաւ ես դու, որքան գթասիրտ, որքան... (սիրտենչ ազերով նայելով Աննայի երեսին՝ տենչով համբուրում է նրա ձեռքը, բազուկը) Ես առանց քեզ ի՞նչպէս պէտք է ապրեմ... (վաստ է զգում իրեն):

ԱՆՆԱ. — (Ամօթխած) Սըսս. հանգստացիր...  
(ձեռք դնում է Արշակի շրթումնքին):

ԱՐՇԱԿ — Թոյլ եմ. վատ եմ զգում:

ԱՆՆԱ. — Գնանք ներս. տես, քամի բարձրացաւ, կարող ես մրսել:  
ԱՐՇԱԿ — Գնանք դարձեալ իմ խուցը. (Ես  
դառնալով) ահ, ինչ լաւ է այստեղ. վարդերը,  
ծաղկոցը...

ԱՆՆԱ. — (Արշակին մինչեւ սանդուխըի զիսին  
ճանապարհ դնելով ետ է դառնում):

## Տ Ե Ս Ի Լ 8

Մտնում է Մարին, յետոյ Հրանտը

ՄԱՐԻ. — Օրինրդ, պարոն Հրանտը:

ԱՆՆԱ. — (Քղայնօրէն) Խնդրիք այստեղ:  
(Չեռքերը դնում է մէջքին, կանգնում սեղանի  
հետ):

ՀՐԱՆՏ. — (Մտնելով, պատշամքում կանգ է  
առնում եւ որպիսանում է երր տեսնում է Աննային):  
Բարե՛ ձեզ օրինրդ:

ԱՆՆԱ. — Բարե՛ ձեզ պարոն. համեցէք:

ՀՐԱՆՏ. — Եակով Անտօնիչն այստեղ չէ:

ԱՆՆԱ. — Ինչու համար եակով Անտօնիչն  
էք հարցնում:

ՀՐԱՆՏ. — Նա ինձ այս ըռպէիս կանչել է:

ԱՆՆԱ. — Իսկ եթէ նա չկանչէր՝ գալու չէիք:  
ՀՐԱՆՏ. — Ի՞նչպէս չէ, գալու էի, յարմաք  
առիթի էի սպասում:

ԱՆՆԱ. — Եւ այդ յարմաք առիթը ներկաւ  
յացաւ, երբ հօրեղօրս անունով կամչուեցէք,  
այս:

ՀՐԱՆՏ. — (Զարժացած) Ի՞նչ էք ասում, օ-  
րինրդ Աննա, ես առանց այդ էլ գալու էի, կամ  
իմաց տալու, որ մի տեղ տեսնուէինք:

ԱՆՆԱ. — (Յանդիմանօրէն) Եւ դժւք այդքան  
հեշտ կերպով կարող էք թողնել, հեռանալ, ինձ  
առանց մի խօսք ասելու...

ՀՐԱՆՏ. — Օրինրդ Աննա, նախ ես չէի ու-  
զում հեռանալ, ձեր հօրեղօր որդոց վարժուն-  
քըն ինձ ստիպեց այդպէս վարուել, երկրորդ՝ ես  
ձեզ շատ բան ունէի ասելու:

ԱՆՆԱ. — (Յանդիմանօր փուլ եկած) Հրանտ, ա-  
ղաջում եմ, մի թողնէք ինձ այստեղ մենակ:

ՀՐԱՆՏ. — Հռուսու խորքից ցանկանում եմ  
ձեզ մօտ լինել, բայց ներեցէք, որ անկարող եմ:  
ԱՆՆԱ. — (Պահանջկոտ) Ոչ, դուք պէտք է  
կարողանաք. դուք իմ սիրոյ համար պէտք է  
տանէք ամեն բան. ես այդ պահանջնեմ եմ ձե-  
զանից:

ՀՐԱՆՏ. — (Սառը եւ լուրջ) Օրինրդ Աննա,  
մտածեցէք, թէ ի՞նչ էք ասում. կարողանամ  
տանել ձեր հօրեղօր որդոց ստորացուցիչ վար-

մունքը... որ Ստեփան Եակովիչն ինձ անուածնէ ցած, խառնակիչ, Եագօ... մութ ակնարկներ անէ իմ և ձեր վերաբերմամբ... ոչ, դա վեր է իմ կարողութիւնից:

ԱՆՆԱ.—(Վշտալի) Ստեփան Եակովիչը. Երբ...

ՀՐԱՆՏ—Երէկ, գրասենեակում:

ԱՆՆԱ.—(Իրեն կորցրածի պէս) Հրանտ, այդ բնչ ասացիք...

ՀՐԱՆՏ—Օրիորդ Աննա, հաւատացէք ինձ... ես նոյն իսկ պատրաստ եմ զոհուել ձեզ համար, բայց ստորանալ՝ երբէք:

ԱՆՆԱ.—(Թափաննահու) Վերջին անգամ աշղաչում եմ, Հրանտ, Ետ կացէք ձեր որոշումից. չէ որ գրանց բոլորի փոխարէն ես կամ:

ՀՐԱՆՏ—Աննա, աղաչում եմ ձեզ, ինձանից այդ տեսակ ստորացում մի պահանջէք:

ԱՆՆԱ.—(Վիրատը եւ խիստ) Ուրեմն դուք ինձ չէք սիրում:

ՀՐԱՆՏ—(Զալմանքով) Ե՞ս... Ես ձեզ չեմ սիրում:

ԱՆՆԱ.—Եթէ սիրէիք ինձ համար կը զոհէիք ամեն ինչ:

ՀՐԱՆՏ—Ամեն ինչ, այն, բայց ոչ պատիւ:

ԱՆՆԱ.—Դրանք անհիմն պատճառներ են:

ՀՐԱՆՏ—Ո՞չ, օրիորդ, գրանք մեծ ճշմարտութիւններ են. միթէ դուք կը կամ ենայիք՝

ձեզ սիրէր մի մարդ, որ զուրկ լինէր պատուի զգացումից:

ԱՆՆԱ.—Դուք այդ ինչու համար էք ասում: ՀՐԱՆՏ—Նրա համար, որ ով պատուի մասին զաղագիւար չունի, նա չի կարող զօրեղ կերպով սիրել. իսկ անզօր սէրն երերուն է և խաբուսիկ. նա կարող է մէկ օր փուլ գալ և դաւաճանել:

ԱՆՆԱ.—(Ցխուր վշտարեկ) Ուղիղն ասացէք, դուք ուրիշ պատճառ չունէք ձեզ հեռանալու համար:

ՀՐԱՆՏ—Ո՞չ մի ուրիշ պատճառ:

ԱՆՆԱ.—Օրինակ իմ ժառանգութիւնը:

ՀՐԱՆՏ—(Արդար զայրոյթով) Այդ ինչ էք ասում օրիորդ. չինի իմ խօսքերից էք այդպէս եզրակացնում. բայց ես այն ասացի ձեզ նախազգուշացնելու համար:

ԱՆՆԱ.—(Ինքն-իրեն ցածը) Ուրեմն Ստեփան Եակովիչն ինձ ուզեցել է մոլորեցնել...

ՀՐԱՆՏ—(Յուզուած) Ես այստեղ ինչ որ բան եմ տեսնում. ձեզ ով որ բանսարկու բան է ասել իմ մասին. ասացէք, աղաչում եմ, ով է այդ անձը, ես գնամ, որտեղ էլ նա լինի՝ գտնեմ, բացատրութիւն, պատիւ պահանջեմ...

ԱՆՆԱ.—Ո՞վ... Չեր հրաժարականի նամակն, այս գործադուլը:

ՀՐԱՆՏ—(Կատաղի) Ուրեմն ձեզ հաւատաց-

ըել են և այն, որ այս գործադուլը նոյնպէս  
իմ սարքածն է... Օ՞հ, ես այլ ևս անկարնդ եմ  
տանել:

**ԱՆՆԱ.**—Հանգստացէք, պարոն Հրանտ, ես  
գիտեմ, որ այդ բոլորը զբարտութիւններ են.  
Ես այնպէս էի առում...

**ՀՐԱՆՏ.**—Ասացէք, օրիորդ, խնդրում եմ յա-  
նուն այն վեհ գաղափարի, որ մեզ մօտեցրել է,  
ասացէք, ում շրթունքն է յանդզնել այդ տեսակ  
սուտ յօրինել, ասացէք, եթէ ոչ ես կը խելա-  
գարուեմ:

**ԱՆՆԱ.**—(Զգացուած) Հանգստացէք, Հրանտ,  
ոչ ոք... ես այդ այնպէս...

**ՀՐԱՆՏ.**—Օ՞հ, Աննա, Աննա, որպիսի՝ սոս-  
կալի թոյն են ներարկել ձեր մաքուր և ազնիւ-  
սրտի մէջ... (խօսքի տոնը փոխելով) բայց պէտք  
ասէք ինձ, թէ ով է յօրինել այդ լպիրշ սուտը...

**ԱՆՆԱ.**—Չեմ կարող ասել:

**ՀՐԱՆՏ.**—Չէք կարող. (խրոխտ) Ես այդ պա-  
հանջում եմ ձեզանից:

**ԱՆՆԱ.**—Չուր մի պահանջէք, որովհետեւ չեմ  
կարող:

**ՀՐԱՆՏ.**—Բայց դուք դրանով շատ վատ  
խաղ էք անում իմ զզացմունքների հետ:

**ԱՆՆԱ.**—Ես լիովին հաւատում եմ ձեզ, և  
խնդրում եմ հանգստանաք. ներսից կարող են  
լսել, գալ:

**ՀՐԱՆՏ.**—Ինչպէս կարող եմ հանգստանալ,  
երբ ամբողջ սիրու այս ըստէիս դժոխաք է, երբ  
տեսնում եմ սուտն օրը ցերեկով լեզու առած  
խօսում է:

**ԱՆՆԱ.**—Հրանտ, եթէ սիրում էք ինձ պէտք  
է հանգստանաք և այդ պահանջն այլևս չանէք.  
Երբ պէտք լինի՝ ես ինքս կասեմ:

**ՀՐԱՆՏ.**—(Մեղմացած, անոյշ) Սիրում եմ...  
այն էլ ի՞նչպէս... Աննա, Աննա, եթէ կեանքիս  
մէջ կայ մի վաեմ բան՝ դա քո սէրն է: Օ՞ս,  
որ իմանաս ինչպէս գիշերները յաճախ քնիցս  
զարթնում, պատկերդ առաջս առնում, ծածուկ  
արտասառում ու ազօթում եմ քո մատաղ կեան-  
քի համար... բայց իմ հպարտութիւնը թոյլ չէ  
տուել մինչ օրս այդ մասին քեզ որևէ բան ա-  
սելու...

**ԱՆՆԱ.**—(Ոգեւորւած) Այժմ հաւատում եմ,  
որ իմ անդրանիկ սիրոյ մէջ ես երջանիկ եմ:

**ՀՐԱՆՏ.**—Իմ անմեղ մանուկ: (Գրկում են  
իրաք, համբուրում. երկար պատզա):

**ԱՆՆԱ.** (Ետ քաշուելով Հրանտից, ցածր տո-  
նով) Բայց և այնպէս դուք գնում էք և այս  
ամայութեան մէջ թողնում էք ինձ մենակ...

**ՀՐԱՆՏ.**—(Կտրուկ) Այն ժամանակ եկէք ինձ  
հետ:

**ԱՆՆԱ.** Իսկ այս օջախը, հօրեղբայրս:

**ՀՐԱՆՏ.**—Մեր մալով այս օջակը փրկելու

չենք կործանումից, Աննա, նրա հիմքերը խա-  
խուս են, նա փուլ է գալու մէկ օր, և մեզ հս-  
կարող է թողնել իր վլատակների տակ. գնանք  
այստեղից և մեզ համար ամուր հիմքերով կա-  
ռուցանենք նոր տուն:

ԱՆՆԱ.—(Վճռական) Գալիս Եմ. ահա իմ  
ձեռս:

ՀՐԱՆՏ—Օ՛հ, որքան բաղդաւոր եմ ես  
(պարզա):

ԱՆՆԱ.—(Տոնել փոխելով) Բայց ոչ հիմա:

ՀՐԱՆՏ—Ի՞նչպէս:

ԱՆՆԱ. Ինձ համար խիստ ծանր է հօրեղ-  
քօրս թողնել անկարեկից ու անօգնական այս  
գրութեան մէջ:

ՀՐԱՆՏ—(Հիացմոնելով) Օ՛հ, Աննա, Աննա,  
(բռնելով նրա ձեռք) խոնարհում եմ քո վեհու-  
թեան առաջ. դու մի մարմացեալ առաքինու-  
թիւն ես, որ վեր է մեր մթնոլորդից. արա ինչ-  
պէս կամենում ես. այս օրուանից ես քո ստրու-  
կըն եմ:

ԱՆՆԱ.—Եմ ազնիւ ընկեր... (սեղմում են  
իրար եւ համբուրում. կամաց-կամաց իշնում է  
վարագոյրը):

ՎԱՐԱԳՈՅՐ

## ԶՈՐՈՐԴԻ ԱՐԱՐ

Հաջի-Յակոբի տան գահլիճը. բեմի աջ կողմը 2  
դուռ. դռների մէջ տեղում թաղթ, ծածկուած գորգով,  
բարձերով և մութաքաներով. բեմի ձախ կողմը մի  
դուռ դէպի կաբինետ. կարինետից ներքև (դէպի աջ)  
կայ բազմոց երկու բազկաթոռով, և կուր սեղանով,  
որպիսին ծածկուած է թանկապին ծածկոցով. պատե-  
րին նկարներ. յատակին, մէջ տեղը, գորգ. յետեի  
պատի ձախ մասում բացում է մեծ դուռը (կամ կա-  
մար), որտեղից երկում է նախասենեակը կախարանով.  
այդ դուռն (կամարի) երկու կողմը տումբոչկաներ, ո-  
րսոց վրա կայ 2 անդրի. գահլիճը լիքն է ծաղիկնե-  
րով. կայ 6 թիկնաթոռ, 12 թանկապին, ոսկեզօծ ա-  
թոռ, մի ձօճանակ, մի աթոռ ու ձնի. բեմի սէջ տե-  
ղին մօտ կայ մի կիսաբազմոց (լոնգչանդ). վերեից ե-  
լեքտրական ջահ մի քանի եղջերով. Կէս օր է:

## ՏԵՍԻԼ 1

Բեմի ետեւը շփոթ, աղմուկ, կանացի ճիչ, տղա-  
մարդու կանչ, որ սկզբից խուլ է, յետոյ (նա-  
մակի ընթերցումն անց) բանի զնում զօրեղանում է:

Աննան թեմում միայնակ նստած կարդում է Հա-  
զարի նամակը:

**ԱՆՆԱ. — Սիրելին Աննա.** Երկու շաբաթ է  
արդէն, որ Բագուռումն եմ. ունեցած վերջին  
կոպէկս ծախսեցի. ոչոքից չեմ կարող պարագ  
վերցնել. հօրս դիմել չեմ համարձակուռմ, եղ-  
բայրներիս՝ նոյնպէս, էլ մւմ դիմեմ, եթէ ոչ  
քեզ... Հիւրանոցի տէրը դուրս է անում. այսօր  
երեք օր է չեմ ճաշել. ուր դիմում եմ գործի՝  
հարցնում են, «ի՞նչ պատրաստութիւն ունիս»...  
Պատրաստութիւն... Ես առաջին անգամն եմ  
լուսմ այդ բառը և այժմ եմ տեսնում, թէ ինչ  
բան է կեանքի համար պատրաստութիւն չու-  
նենալը... Ծանօթ վաճառականների եմ դիմում՝  
ամենքը զարմանքով յայտնում են, որ ես մեր  
գործերը թողած՝ նրանց մօտ պաշտօն եմ որո-  
նում. կարծես նրանք ամեն ինչ գիտեն և սըր-  
տերում հեգնում են ինձ. օհ, Աննա, այժմ ի-  
մացայ, որ կեանքի համար պատրաստութիւն  
չունեցող մարդը նման է այն զինուորին, որ  
պատերազմ է գնում առանց զէնքի... Աննա,  
մեր տան բարին հրեշտակ, յուսահատութիւնը  
խեղում է ինձ. Ես այժմ բոլորովին այն  
հոգ Լազարը չեմ. Ես այժմ մի խեղճ, լքեալ  
արարած եմ. աղաչուս եմ, օգնիր ինձ. Իմ հաս-  
ցէն՝ Բագուռ. X փողոց № 23. Բարես քեզ, մայ-  
րիկին և Արշակին. Քո դժբաղդ Լազար:

**ՍՈՅԻԱ. — (Բեմի ետելից) ԶԵմ տայ, չԵմ:**  
**ԱՆՆԱ. — (Բեմի ետելից) Սոֆիա:**  
**ՍՈՅԻԱ. — (Բեմի ետելից) Ո՛չ, չեմ թողնի:**  
**ՍՈՅԻԱ. — (Բեմի յետելից կանչում է) Օգ-  
նեցէք:**

**ԱՆՆԱ. — (Վեր կենալով, դէպի ղոտը զնալով)**  
**Ի՞նչ է, արկին Սոֆիա:**  
**ՍՈՅԻԱ. — Ապիկամը, աւազակ (ղոտս է զա-  
զում արկղիկը ձեռքին) ուզում էր, ոենտերս ու  
զարգերս տանել գրաւ գնել, որ այն շուլերի  
պարագը վճարէ:**

**ԱՆՆԱ. — Ո՞վ:**  
**ՍՈՅԻԱ. — Անտօնը, այն ապիկամը, օհ, այլ-**  
**և անկարող եմ տանել. անկարող եմ այլոս այս**  
**տանը մնալ այս տեսակ ամուսնու ձեռքին. (նա-  
յուն է ոենտերին ու զարղերին, թէ լրի՞ւ են) ան-**  
**կարող եմ:**

**ԱՆՆԱ. — Ոչինչ չէ վերցրել:**  
**ՍՈՅԻԱ. — Ո՛չ, շուտ վրայ հասայ, չթողի:**  
**Մարի, Մարի:**

**ՄԱՐԻ. — (Սեղանատնից զալով) Ի՞նչ է արկին:**  
**ՍՈՅԻԱ. — Գնա իսկոյն մի կառք կանչիր:**

**ՄԱՐԻ. — Այս բոպէիս (զնուալ է):**  
**ԱՆՆԱ. — Ի՞նչ պէտք է անես կառքը:**

**ՍՈՅԻԱ. — Վճոել եմ հեռանալ այս տանից:**  
**ԱՆՆԱ. — Ինչ ես ասում Սոֆիա, ուզում ես  
մեզ թողնել:**

**ՍՈՅԻԱ.**—Տարաբաղդաբար այն, այն էլ ընդ  
միշտ:

**ԱՆՆԱ.**—Սոֆիա (լնկնելով խոհերի մէջ՝ մը-  
նում է լրած):

**ՍՈՅԻԱ.**—Ասա:

**ԱՆՆԱ.**—Դու լաւ մտածել ես քո արած այդ  
քայլի մասին. գիտես, որ սա մի անջատում է,  
որ յետոյ այլևս միացուելու չէ, և քեզ բոլորո-  
վին մի անորոշ ապագայ սպասեցնելու...»

**ՍՈՅԻԱ.**—Չը գիտեմ, թէ այդ անորոշ ա-  
պագան ի՞նչ է լինելու՝ սակայն այն գիտեմ, որ  
այդ տեսակ խայտառակութիւններից յետոյ այլ-  
ևս անկարող եմ մնալ այս տանը:

**ԱՆՆԱ.**—Որ իմանաս ի՞նչպէս սիրաս ցաւում  
է, որ մեր ընտանիքն օր-օրի վրայ դէպի կոր-  
ծանումն է գնում, և որին գրեթէ ոչ մի յոյս  
չկայ ուղղուելու:

**ՍՈՅԻԱ.**—Աննա, դու կարծում ես ես չեմ  
ցաւում. կարծում ես ինձ հեշտ է հինգ-վեց տա-  
րուայ կեանքը խորտակել, գնալ. բայց ի՞նչ տ-  
րած, երբ որդոցս ապագան ստիպում է ինձ  
այդպէս վարուել. Եթէ նրանց հայրն ընկնելով  
մոլորութեան գիրկը մոռացել է ամուսին ու  
զաւակներ, չէ որ ես մայր եմ, ես բարոյական  
պարտք ունեմ նրանց ապագայի մասին մտա-  
ծելու:

**ԱՆՆԱ.**—Իրաւունք ունես, Սոֆիա (սիրով

խորը քաշելով), այն, իրաւունք ունիս. թէն  
մարդուս սիրով ճմլում է այս տեսակ տեսա-  
րանի առաջ, բայց դատողութիւնը բոլորովին  
այլ բան է ասում:

**ՍՈՅԻԱ.**—Անսասունը որ անսասուն է՝ նա ու-  
րիշների բերանից խլում է նրա ունեցածը, որ  
տանի իր ձագերին տայ, բայց Անտօնն իր զա-  
ւակների ձեռքից ուղղում է խլել նրանց ունե-  
ցածը, որպէս մի սրիկայի, մի շուլկերի տայ...  
Գիտիմ, հասարակութիւնը պիտի խօսի, պիտի  
բամբասէ՝ էհ, ի՞նչ արած...

**ԱՆՆԱ.**—Ամենակին թող փոյթդ շինի, Սոֆիա,  
մարդս պէտք է իր ազատ կամքով անէ այն,  
ի՞նչ որ իր անտեսական և բարոյական շահերն  
են պահանջում. հասարակական բամբասանքի  
համար մարդս պարտական չէ իր կեանքը խոր-  
տակելու, ապագան կործանելու. բամբասանքը  
մի ցեխ է, նա չի կարող կպչել բարձր կանգնած  
մարդկանց...

**ՄԱՐԻ.**—(Ներս գալով) Կառքը պատրաստ է:

**ՍՈՅԻԱ.**—Գնա երեխաններին բեր այստեղ:

**ՄԱՐԻ.**—Այս ըոպէիս (մ'տոնում է ննջարան):

**ԱՆՆԱ.**—Չեր ծնողների մօտ էք գնում:

**ՍՈՅԻԱ.**—Այս (իրերը վելցնելով եւ առաջ  
շարժուելով): Սա մի հիւանդանոց է, ուր ամեն  
տեսակ հիւանդներ կան, թէ հոգով և թէ մար-  
մով:

**ՄԱՐԻ**—(Հետնիկի ծեռից քոնած, Սուրենին էլ բայովի մէջ զրկած բերում է լալով) **ՄԻ** գնաք տիկին ջան, առանց ձեզ ի՞նչ պէտք է անենք մենք:

**ՍՈՅԻԱ**—(Անուշադիր դէպի Մարին, քոնում է Հետնի ծեռից) **ԳՆԱ** վերարկուս ու գլխաւկս բեր:

(Այդ ժամանակ Աննան առնում է Սուրենին, զրկում, համբուրում, մինչև Մարին բերում է վերարկուս ու գլխարկը):

**ՄԱՐԻ**—(Առնելով Սուրենին Աննայից զընում է առաջ):

**ՍՈՅԻԱ**—(Հետնին) **ԳՆԱՆՔ**:  
Լեհնիկ—Ո՞ւ ենք գնում, մայլիկ, պատմէզ, համ, խաղաղու:

**ՍՈՅԻԱ**—Այս, պապոնցդ, այնտեղից էլ յետոյ պարտէզ կրգնանք:

Լեհնիկ—Այնտեղ կրխաղանք, յէ՞ մայլիկ:

**ՍՈՅԻԱ**—Այս, ի հարկէ:

**ԱՆՆԱ**—(Լալով) Սնֆիա, Սոփիա:

**ՍՈՅԻԱ**—Դէ, մնաս, բարով, իմ անգին Աննա, եթէ կար այս ընտանիքում մէկը, որին թողնել—հեռանալը շատ ծանը է ինձ համար, այդ դու ես. (Համբուրում են) մի մոռանար ինձ, ազնիւ քոյրիկս, շուտ-շուտ յաճախիր մեզ, քո այցելութիւնը կըթեթեացնէ իմ վիշտը,

**ԱՆՆԱ**—(Համբուրում է Հետնիկին, ուղեկցում մինչեւ դուռը, ապա ես դառնում եւ ձեռքերը կրծքին ծալիլով տիսուր նայում, Պառզա):

**ՄԱՐԻ**—(Լալով ներս է գալիս) **ԳՆԱԳԻՆ...** (գնում է):

**ԱՆՆԱ**—(Հառաչելով) **ԳՆԱԳԻՆ...**

## ՏԵՍԻԼ 2

Մտնում է Արեակը, վերին ասինանի մաշուած, արդեն մահուան դուռն հասած, դոդողալով. հազիւ կարողանում է տարծուել,

**ԱՐՇԱԿ**—(Քիչ նայելով, մոտածկու) Աննա:  
**ԱՆՆԱ**—Այդ դու ես Արշակ, Մարին, պարոնի սախաճաշը պատրաստ է:

**ՄԱՐԻ**—(Միւս սենեկից) **ՀԻմա կը լինի,** օրիորդ:

**ԱՐՇԱԿ**—Այդ ի՞նչ ձայներ էին, Աննա, Սոփիան այդպէս վրդովուած նուր գնաց:

**ԱՆՆԱ**—Ա՛խ, Արշակ, որ իմանաս վերջերս ինչեր են կատարուում մեր տանը...

**ԱՐՇԱԿ**—Թէ ինձանից աշխատում էք ծածկել, բայց ես ամեն ինչ զգում եմ (գալիս է Աննայի մօտ նստում):

**ԱՆՆԱ**—(Ծխուր տոնով) Լաղար եակովիչը այս երկու շաբաթ է տուն չէ գալիս, իսկի չըգիտէինք էլ թէ որտեղ էր, այժմ մի շատ ար-

խուր նամակ ստացայ նրանից. գրում է, որ  
գնացել է Բագու, մնացել է խեղճ ու թշուառ,  
առանց կոպէկի. հա, քեզ էլ բարեռում է:

**ԱՐՇԱԿ**—(Կէս զարմանք կէս ցաւակցովթիւն) Բագու... Նա այնտեղ ի՞նչ կարող է անել...

**ԱՆՆԱ**—Անտօն Եակովիչը շարունակ իր այն  
պարտքի մասին է մտածում, քունը բոլորովին  
կորցրել է, ինքը մաշուել, ջղայնացել... Սովիան  
էլ այսպէս թողեց, հեռացաւ...

**ԱՐՇԱԿ**—(Ցաւակցօրէն) Հեռացաւ... ափսոս  
հարս:

**ԱՆՆԱ**—Ահ, մտածելուց գլուխս պտոյտ է  
գալիս, և չգիտեմ ի՞նչ է կատարւում իմ մէջ:

**ԱՐՇԱԿ**—Իմ անդին Աննա, մի տիրիր. քո  
Երջանկութեան նախօրեակին թող քո աչքին  
արցունք չերեայ. այն, ինչ որ կատարւում է  
դու քո տիրութեամբ նրա առաջն առնել չես  
կարող. ապրիր դու ուրախ հրանտի հետ, որով  
հետեւ դու քո պայծառ հաւատով շէնացնելու ես  
այս աւերակները. օրհնում եմ քո կեանքը...  
թնդ թէ ես այսպէս... միայն թէ դու...

**ԱՆՆԱ**—Բաւ է Արշակ (լրեցնել է տալիս)  
մի տանջիր ինձ, առանց այն էլ միթարական  
ոչինչ չկայ:

**ԱՐՇԱԿ**—Ի՞նչ միթարութիւն ես որոնում  
մի ընտանիքում, որտեղ դաստիարակութիւն չը-  
կայ. մայրս ինքը դաստիարակութիւնից զուրկ

լինելով՝ ծնած օրից մեղ գցել է ծծմայրերի ու  
ծառաների գիրկը, որովհետև այդ է պահանջել  
ժամանակի ոգին. իսկ հայրս փող ունենալով  
կարծել է, թէ ամեն ինչ լրիւ է, մինչդեռ մեր  
տանից պակասել է ամենամեծ բանը՝ ընտանե-  
կան դաստիարակութիւնը, որ այդ բոլորի հիմքն  
է. իսկ այն ընտանիքում, ուր չկայ դաստիա-  
րակութիւն՝ նա նման է Յիսուսի ասած տանը,  
որ շինած է աւազի վրայ. բաւական է միթեթև  
հողմ, կամ մի փոքր հեղեղ՝ նա կը կործանուի:

**ԱՆՆԱ**—Բայց չէ որ հօրեղբայրն իր որդոց  
համար նրանց փոքր հասակից վարձել է դաս-  
տիարակներ:

**ԱՐՇԱԿ**—Հէնց այդ փողի համար վարձկան  
դաստիարակներն ու ծծմայրերն են եղել, որ  
մեղ հասցըրել են այս դրութեան:

**ԱՆՆԱ**—Իսկ այն ընտանեկան դաստիարա-  
կութիւնը, որ դու ես ասում, Արշակ, մեզանում  
ոչ ոք չունի:

**ԱՐՇԱԿ**—Կան, Աննա, կան, օրինակ հան-  
գուցեալ հօրաքոյրը, օրհնեալ լինի նրա յիշա-  
տակը, որ քեզ մանուկ հասակից խնամել է ու  
մեծացըրել, բայց մոգայից շացած մեր աչքերը  
չեն տեսնում այդպիսիներին. մենք մերն ատող  
օտարոլիներ ենք:

**ՄԱՐԻ**—(Ներս գալով) Նախաճաշը պատրաստ  
է, պարոն:

ԱՐՇԱԿ—(Թոյլ վեր կենալով) Գալիս եմ  
(զնում է):

ԱՆՆԱ—(Տանում է Արշակին մինչեւ սեղանա-  
տուն, ետ է դառնում, նստում):

### ՏԵՍԻԼ 3

ՄՏԽՈՒՄ ԵԲ ՀԱՉ.-Ցակոբը Եւ Շահիտան

ՀԱԶ. ՅԱԿ.—Մի շարժիչն ի՞նչ է, այդ ան-  
գամ չկարողացան ժամանակին նորոգել տալ, որ  
այս դժբաղգութիւնը գլուխս չգար:

ՇԱՂԻՏԱ—Ուրեմն հիմա գործարանը բա-  
նելու չէ:

ՀԱԶ. ՅԱԿ.—Մի կողմից գործադուլ, միւս  
կողմից օրէնքի առաջ պատասխանատութիւն...  
մի, որդիք, որդիք...

ՇԱՂԻՏԱ—Ե՛, հիմա շատ մտածելով ի՞նչ  
կըլինի. քիչ էլ դու քո առողջութեան մասին  
մտածիր... Այս շոգերն էլ անտանելի են դառել.  
շուտ անէինք գնայինք, թէ չէ երեխաները  
մեղք են:

ՀԱԶ. ՅԱԿ.—(Ժարահատեալ) Մի բան որ  
գնալու էք՝ շուտով գնացէք. տունն արդէն վար-  
ձած է:

ՇԱՂԻՏԱ—(Մարիին, որ դռան միջից միւս  
սենեակում—սեղանատանը—երեւում է) Ճաշի սե-  
ղանը պատրամստ է:

ՄԱՐԻ—(Արտասուզով) Դեռ հչ, տիկին,  
ՇԱՂԻՏԱ—(Զայրոյթով) Վերջերս ի՞նչ է  
պատահել քեզ, չգիտեմ, առաւ օտնելոն ինքնաեռն  
ուշ ես դնում, ճաշին սեղանը պատրամստ չէ...  
ՄԱՐԻ—իսկոյն տիկին (Ժածկում է սեղա-  
նատան դուռը):

ՇԱՂԻՏԱ—(Նայելով և նային) Ի՞նչ է պա-  
տահել, Աննա, Մարին ինչու է լավս. դուն էլ  
ի՞նչ որ ախուր ես. ի՞նչ կայ:

ՀԱԶ. ՅԱԿ.—Ի՞նչ որ սուս էք. ի՞նչ է եղել:  
ԱՆՆԱ—(Մելամաղձոտ) Սոֆիան երեխանե-  
րին առաւ, գնաց:

ՇԱՂԻՏԱ—(Զարմանքով) Գնաց. ուր:  
ԱՆՆԱ—Հօրանցը:

ՇԱՂԻՏԱ—Այսպէս ճաշի ժամանակ. կան-  
չուած են:

ԱՆՆԱ—Ո՛չ. գնացին, հեռացան:

ՀԱԶ. ՅԱԿ.—Ի՞նչպէս թէ գնացին, հեռա-  
ցան:

ԱՆՆԱ—Քիչ առաջ գնացին, հօրեղբայր:

ՇԱՂԻՏԱ—Այս ի՞նչ բերեց մեր գլուխը.  
(Ժեռքերով ծնկներին զարնելով) այժմ ի՞նչ է ա-  
սելու հասարակութիւնը:

ՀԱԶ. ՅԱԿ.—Այս ի՞նչ եմ լսում ծերութեանս  
հասակում (զլուխը տանում-թերում):

ՇԱՂԻՏԱ—Հաջի Յակոբ, հիմա ի՞նչ պիտի  
անէնք, ամօթ ու խայտառակութիւն է. երեկո-

**ԶԱՐՈՒՀԻՉԻ.** — Զգիտէ՞ք. նա, Աստղիկը. նա  
հանգաւ... նա այժմ խալզար, նամուսն երեսին  
քնած է... քնած է հանգիստ... ոչինչ այլես նրան  
չի տանջում... նա ազատուեց... ձեզ էլ ազա-  
տեց... ձեզ էլ... միայն, միայն...

**ՇԱԼ.** — Այլ կին, ի՞նչ ես ուզում, ի՞նչ է ասածդ:

**ԶԱՐ.** — Նամնւս... Քնեց... նրա բալիկն էլ  
քնեց... մօր հետ միասին քնեց... ի՞նչ բալիկ.  
մի կտոր կարմիր միս... Փուշուշու... արխւն...  
հոտած... նեխած... այստեղ... այնտեղ... այն-  
պէս ձեռքերին... երեսին...

**ԱՆՆԱ.** — (Որ երկար ջղային դրութեան սէջ  
տանջտում էր, յանկարծ փոլ է զալիս, հեկեկում  
եւ խոլ արտասանում) Նա վշտից խելագարուել է,  
թշուառ կին:

**ՀԱՂ. Յ.** — Այս ի՞նչ բան է, Տէր իմ, Տէր իմ:

**ԶԱՐ.** — Այն, չուզեց... Ստեփան Եակովիչը  
չուզեց:

**ՀԱՂ. Յ.** — (Սարսափով) Ստեփան Եակովիչը:

**ԶԱՐՈՒՀԻՉԻ** — Ո՞չ, ուզեց... բայց ուշացրեց...  
բալիկը չհամբերեց... Նամնւս... արիւն... Աստ-  
ղիկս չկարաց... Արիւնը բարձրացաւ վեր-վեր,  
նրան խեղդեց... նրա աստղը հանգըրեց... բայց...  
բայց գիտքէք...

**ՀԱՂ. ՀԱԿ.** — (Սարսափսվ) Այստեղ մի սոսկա-  
լի բան կայ...

**ԶԱՐ.** — Նամուսն երեսին... պատիւը դէմ-  
քին... նա ինքն իրեն... ոչ ոք... նա ինքը, ինքը...

այսպէս... (Ցոյց է տալիս թէ ի՞նչպէս թոյն է  
խմել աղջիկը) մինչև հասայ՝ բոլորը խմեց... ինձ  
քիչ թողեց... ֆու-ֆու... այնպէս դառն... այն-  
պէս այրող... տեսէք... (ցոյց է տալիս իր այ-  
րուսած շրթունքները) հա հա, հա, հա...

**ԱՆՆԱ.** — (Կարեկցօրէն) ԽԵղճ կին, խԵղճ կին...

**ՇԱՂԻԾԱ.** — Վերջապէս սա խայտառակու-  
թիւն է, դհւրս անենք:

**ՀԱՂ. ՅԱԿ.** — Սըսս... թող, նա ինքն երեն  
կը գնայ:

**ԶԱՐՈՒՀԻՉԻ.** — Ստեփան Եակովիչը... Հապա-  
բնչպէս կարելի է... Մենք խԵղճ, աղքատ. նա  
հարուստ, զօրեղ... Փող, լիքը փող... հի, հի,  
հի, հի... ի՞նչպէս կարելի է... կեղտը մաքրու-  
թեան մօտ... աղքատը հարուստի մօտ... ամօթ  
է... ի՞նչ կասեն... Աստղիկս Ստեփան Եակովիչի  
կին... Հա, հա, հա... ծիծաղելի է... ա-  
մօթ է... Պատիւ... նամնւս...

**ՇԱՂԻԾԱ.** — Կուզե՞ս զնա. հրէն գուռը:

**ԶԱՐՈՒՀԻՉԻ** — Կերթամ... Բայց դագաղ է  
ալէտք... գագաղ... սիրուն, հարսնացուի դագաղ...  
Զէ որ Աստղիկս պսակւում է... այսօր նրա հար-  
սնիքն է... Դագաղ... Ստեփան Եակովիչի հար-  
սնիքի դագաղը...

**ՇԱՂԻԾԱ.** — Փող կուզե՞ս, տամ, առ զնա:

**ԶԱՐՈՒՀԻՉԻ** — Փող, ի՞նչ փող... նամնւս, պա-  
տիւ... դագաղ, մի սիրուն դագաղ, որ նրան

ցըռու նըան: (Յանկաքծ նըան թումէ դուան ճըռոց) Ա՛հ, մարգ կայ... .

ԱՆՆԱ—(Չորս ըոլորքը նայելով) Ոչ ոք չկայ, հօրեղբայր:

ՀԱՅ. ՅԱԿ.—Այդ 20,000 ըուբլի ժառանգութիւնդ մտցրի իմ գործերի մէջ շահեցնելու, սակայն փոխանակ շահեցնելու... այժմ չգիտեմ ի՞նչ է լինելու... (յուզում է):

ԱՆՆԱ—Հօրեղբայր, խնդրում եմ, մի մըտածէք այդ մասին:

ՀԱՅ. ՅԱԿ.—Սըսս, ցածր, լսիր զաւակա. ժահը մեզ համար է. որպէս զի հանգիստ խղճով կարողանամ մեռնել՝ դրա համար... (արտաստում է):

ԱՆՆԱ—Ինչու համար էք լալիս հօրեղբայր:

ՀԱՅ. ՅԱԿ.—Նրա համար, որ պիտի չկարողանամ ժառանգութիւնդ ամբողջովին քեզ վերադարձնել:

ԱՆՆԱ—Միթէ ես ուզեցի այն, հօրեղբայր:

ՀԱՅ. ՅԱԿ.—Քեզ տալու եմ այն, ինչ որ սև օրուայ համար բոլորից ծածուկ պահել եմ. ահա պետական բանկի այն անդորրագիրը, որով երբ գնաս 10,000 ըուբլի կարող ես ստանալ:

ԱՆՆԱ—Հօրեղբայր, ես չեմ ուզում (չոքում է, աւելի մօտենում է հօրեղբօրը):

ՀԱՅ. ՅԱԿ.—Սըսս, առ այն, առ, միայն նայիր, որ ոչ ոք չիմանայ, թէ չէ ձեռհցդ կը-

խլեն. պահիր, իմ պատճառով մի սպանիր ապագադ... ու ինձ էլ մի անիծիր, որ ես... (լալիս է):

ԱՆՆԱ—(Լացով թուղթն առնելով) Հօրեղբայր... -

ՀԱՅ. ՅԱԿ.—Սըսս, մի կանչիր. կիմանան. վեր կաց:

ԱՆՆԱ—(Համբուրում է հօրեղբօր ձեռը, վեր է կենում):

ՀԱՅ. ՅԱԿ.—Պահիր. շնւտ, շնւտ:

ԱՆՆԱ—(Թուղթը պահելով մատերն իրան մէջ է հիառն, մկրտացնում եւ խորը հառաշ քաշում. պատզա):

## ՏԵՍԻԼ 6

Մտնում է նադիսան:

ՇԱԴԻՑԱ—Ի՞չպէս ես, Հաջի-Յակոբ:

ՀԱՅ. ՅԱԿ.—Էլ մի հարցնիր:

ՇԱԴԻՑԱ—Գուցէ փոքր իսչ արգանակ կուտես:

ՀԱՅ. ՅԱԿ.—Ես արդէն կերայ իմ արգանակը, և խմեցի կեանքի դառն բաժակը:

ՇԱԴԻՑԱ—Այդքան մտածելով ու վշտանալով ի՞նչ պիտի անես, մի փոքր էլ քեզ պահել եմացիր, չէ՞ որ քեզ մնաս է:

ՀԱՅ. ՅԱԿ. — Ե՞ն կնի՛կ, լուսնեակն եկել եթշ-  
կից անց է կացել, դու ինչեր ես ասում...

ՇԱՀԻՏԱ. — Դու որ այդպէս ընկճւում ես՝  
ես ինչ պէտք է անեմ.

ՀԱՅ. ՅԱԿ. — (Թոյլ, բայց յուզուած) Դժւ...  
դու եթէ չէիր ուզում իմ ընկճուելը՝ թող այդ  
տեսակ զաւակներ չմեծացնէիր, որ կարողու-  
թիւնս էլ կերան, կեանքս էլ:

ՇԱՀԻՏԱ. — Ես ինչնվ եմ մեղաւոր:

ՀԱՅ. ՅԱԿ. — Մեղաւոր ես նրանով, որ դժւ  
փչացրիր նրանց, դժւ... բանի նրանք փոքր էին  
և անհնագանդ, փախչում էին դպրոցից, խումար  
էին խաղում, ես ասում էի՞ հետեւիր, մի՛ թող-  
նիր, չէիր լսում ինձ, երես էիր տալիս, այժմ  
տեսամբ ուր հասցըեց երես տալդ:

ԱՆՆԱ. — Հօրեղբայր, հօրեղբայր, մի՛ վոդո-  
վուէք. տեսէք, մայրիկը ձեզ համար տանջում  
է. ինսայեցէք ձեզ:

ՀԱՅ. ՅԱԿ. — Ա՛խ, զաւակս, հանգիստս էլ  
կորաւ այս աշխարհում, կեանքս էլ. ափսոս իմ  
յիսուն տարուայ ծանր աշխատանք...

ՇԱՀԻՏԱ. — Վեր կաց գնանք քիչ տեղդ  
պառկիր, հանգստացիր:

ՀԱՅ. ՅԱԿ. — Գնանք (Պատրաստում է զը-  
նալու),

## ՏԵՍԻԼ 7

Ներս է տնում Մարին, յետոյ նօսարը

ՄԱՐԻ. — Նօտարը. ձեզ է հարցնում:

ՀԱՅ. ՅԱԿ. — (Ցնցուելով) Նօտարը...

ՇԱՀԻՏԱ. — Ինչու համար է հարցնում:

ՀԱՅ. ՅԱԿ. — Խնդրիր:

ՄԱՐԻ. — (Դուրս է գնում ինդրելու, յետոյ  
զալիս է):

ՇԱՀԻՏԱ. — (Հնդառաջելով) Համեցէք, խընդ-  
րեմ:

ՆՕՏԱՐ. — Բարե ձեզ եակով Անտօնիչ, տի-  
կին Շաղիտա:

ՀԱՅ. ՅԱԿ. — Բարե ձեզ:

ՆՕՏԱՐ. — Ներեցէք, որ ես ը՛-ը՛-ը՛... այս-  
պէս անժամանակ... բայց ինչ արած, երկու  
անգամ ձեզ կոչնագիր ուղարկեցի գրասենեակ՝  
չպատասխանեցիք... լու համարեցի ինքս ան-  
ձամբ գալ...

ՀԱՅ. ՅԱԿ. — Խնդրեմ, համեցէք. բայց ինչ  
կայ, ինչու համար էք կոչնագիր ուղարկել:

ՆՕՏԱՐ. — Զեր մուրհակների համար. այսօր  
երրորդ օրն է. հակառակ օրէնքի ես պահում  
եմ...

ՀԱՅ. ՅԱԿ. — (Չգալով բանն ինչուն է,  
ուարսափած) Մուրհակներ, ինչ մուրհակներ:

**ՆՕՏԱՐ** — Անտօն Եակովիչի ստորագրած  
մուրհակները:

**ՀԱՅ. ՅԱԿ.** — (Զայրոյթով) Ինչպէս. Ան-  
տօն Եակովիչի... (յուզուած) Մարի, Անտօնն  
եկբէլ է:

**ՄԱՐԻ** — Նոր ճաշի եկաւ (զնում է):

**ՀԱՅ. ՅԱԿ.** (Մարու ետեղից) Կարչիր, Կա-  
րելի՞ է տեսնել, պարոն նօտար, ինչ մուրհակ-  
ներ են:

**ՆՕՏԱՐ** — Համեցէք. (Հանելով պայուակից  
տալիս է Հաջի-Յակոբին):

**ՀԱՅ. ՅԱԿ.** — Ա-ա, Գիրմայի անունից ստո-  
րագրած...

**ՆՕՏԱՐ** — (Մնում է շուարած):

## Տ Ե Ս Ւ Լ 8

Մտնում է Անտօնը

**ԱՆՏՈՆ** — (Նօտարին տեսնելու պէս, միեւնոյն  
ժամանակ մուրհակները հօր ձեռին, երեսի գոյնը  
զնում է, ցնցումներ է կատարում):

**ՆՕՏԱՐ** — Անտօն Եակովիչ, այսօր Ալբերտի  
մուրհակների վերջին ժամանակամիջոցն է. ե-

թէ այսօր էլ 30,000 ըուբլին չտաք՝ ես ստիպ-  
ուած եմ պբռտեստ անելու:

**ՀԱՅ. ՅԱԿ.** — Ալբերտի... (սասաիկ ծչում է)  
Հաջի-Յակոբը սնանկ... (ընկնում է շեղլոնգին):

**ՇԱՂԻՑԱ** — Աստուած իմ, ի՞նչ պատահեց:

**ԱՆՏՈՆ** — (Լալով) Հայր իմ, հայր իմ...

**ՇԱՂԻՑԱ** — (Կանչելով) Ստեփան, Ստեփան:

**ՍՏԵՓԱՆ** — (Գալիս է միև սենեակից):

**ՇԱՂԻՑԱ** — Հեռախօսով շուտով բժշկին  
կանչիր:

**ՍՏԵՓԱՆ** — (Վագում է դէպի կարինէտ հեռա-  
խօսով բժիշկ կանչելու):

**ՆՕՏԱՐ** — (Անհամ դրութեան մէջ) Ներեցէք,  
որ ես...

**ՇԱՂԻՑԱ** — Խնդրեմ, պարոն նօտար, առ  
ժամանակ մտէք կարինետ:

**ՆՕՏԱՐ** — (Ինքն իրեն, մուրհակները վերցնե-  
լով զնալով) Այ քեզ յիմար դրութիւն...

**ԱՆՆԱ** — (Լալով) Հօրեղբայր, ի՞նչ պատա-  
հեց:

**ՇԱՂԻՑԱ** — Աննա, դու նայիր, ես գնամ  
նեշաղինի սպիրտ բերեմ (զնում է):

**ԱՆՏՈՆ** — (Քարացած կանգնում է պատի հետ,  
տարօրինակ շառժումներէ անում, ապա հօր հայեաց-  
քից վախենալով, իբրև մի բանից հալածուած.  
դորս է փախչում):

**ԱՆՆԱ** — (Չորս կողմը դիտելով) **Հօրեղբայր**,  
առէք այս 10,000 բուբին, տուէք նօտարին,  
տայ Ալբերտին առ ժամանակ, մինչև որ միւս  
20,000 բուբին էլ կըտաք:

**ՀԱՅ. ՑԱԿ.** — (Ուզում է խօսել, բայց չի կա-  
րողանում, ծեռով բացատկան նշան է անում):

**ՇԱՂԻՑԱ** — (Ներս գալով, Աննային) **ՏՌԵՐ**,  
տուր, թող հոտ քաշէ. մի քիչ օդըկոլոն քսենք  
ճակատին:

**ԱՆՆԱ** — (Տեսնելով հօրեղբօր մահանալը)  
**Հօրեղբայր...**

**ՇԱՂԻՑԱ** — Հաջի-Յակոբ, ուշքի եկ... (ծեռ-  
քերով ծնկներին խփելով) վայ, տունս քան-  
դուեց...

**ԱՏԵՓԱՆ** — (Մտնելով միշով) **Հայրիկ**, հայ-  
րիկ...

**ԱՆՆԱ** — Իմ լեզու հօրեղբայր:

## ՏԵՍԻԼ 9

Գալիս են Անտոնի ու Արքակը


**ԱՐՇԱԿ** — (Սաստիկ նիհար, դալուկ, թուլ  
մահուան դուք հասած) **Տարաբաղդ հայրիկ**:

**ԱՆՏՈՆ** — (Ընկնում է աթոռին, գլուխն առ-

նում է ծեռքերի մէջ, ցնցումներ կատարում, լա-  
միս. իսկ միանելով շղջապատած դիակը՝ արտա-  
տում են եւ տիսուր դիտում. կամաց-կամաց իջ-  
նում է վարագոյքը):

ՎԱՐԱԳՈՅՔ

Վ Ե Ր Զ



**ՎՐԻՊԱԿՆԵՐ**

<i>Երես</i>	<i>Տող</i>	<i>Միալ</i>	<i>Ուղիղ</i>
16	16	Ժարծումներն	շարժումներն
18	12	Եղբայրների	եղբայրների
25	10	Շազիտա	Շաղիտա
58	20	Գործակատար-	գործակատար-
		ներն	ներն
64	7	աշխատանքից,	աշխատանքից.
67	20	Սօտենալով	Մօտենալով
95	8	թողնէր	թողնէր
103	10	ձեզ	ձեզ
107	15	(լոգանգ)	(շեղոնգ)
111	8	ուղում է	ուղում է
117	22	եռքերով	ծեռքերով
122	17	ձեյնն է	ձայնն է

մօս ծախուտ են նրա հետեւալ աշխատոթիւնները

1. Երդում, վիպակ (սպառուած) . . . . . , 40 կ.
2. Պատանեկան յուշեր (սուպուած) . . . . . 15 կ.
3. Հօրոտ-Մօրոտ, պատկ, գիւղ, կեանքից և գիրք 30 կ.
4. » » » II » 30 կ.
5. » » » III » 30 կ.
6. Հայ գեղջուկի ալրոմը, և մաս (դաշտ, գործ.) . 40 կ.
7. » » » II » (ամանեղ, կար.) 40 կ.
8. » » » III » (տնային, արդ.) 40 կ.
9. Մեր բարեկամները, պատմուածքներ . . . . 15 կ.
10. Յանցանք, էտիւդ, հրատար, հրատարակչ, Ընկ, 15 կ.
11. Վեհափառ իզմիրլեան (կազմեց Շիրվանզադէ) 15 կ.
12. Գիր և կեանք, (նար-Շոսի հետ), դաստիրք  
հայ լեզուի, ծխ, գոլք, բարձր դաս., դպրոցն,  
սոսորին և պետ, գոլ, համար յարմարեցրած 1 - 25 կ.
13. Միրոյ և գաղափարի սպաւոր երպիչը՝ Յովի.  
Յովիաննիւեան (քննադատութիւն) . . . . . 15 կ.
14. Աւազի վրա, դրամա 4 արարով . . . . . 50 կ.

Պատրաստ են տպագրութեան համար

1. Հօրոտ-Մօրոտ IV գիրք
2. «Շիրեր» գրամա 3 արարով
3. Արտորդական յուշեր, պատմուածքներ
4. Գիւղի Շուշանը, վեպ գիւղոկ, կեանքից
5. Հայ գեղջուկի ալրոմը IV մասը

Գրչիս առկ է

Աշակերտ, գրամա 4 արարով

ՀՀ Ազգային գրադարան



NL0352211

41482